ՔՅՈՒՕՂԼԻ ԷՊՈՍԻ ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

981 թ.

Ի Հ
953

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

КУРДСКИЕ СКАЗЫ ЭПОСА „КЁР-ОГЛЫ“

Запись, перевод и введение
АДЖИЕ ДЖНДИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1953

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.57-13
Ք-65

Ա II 21914

Ա 3.183

«ՔՅՈՒՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԳՐԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Գրառում, բարգմանություն
և ճեռագրության՝ ՀԱՋԻԵ ՋՆԴԻԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1953

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1

Ադրբեջանական և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերը դարավոր հնություն ունեն։ Դա արտահայտվել է բանավոր և գրավոր[1] գեղարվեստական հուշարձանների մեջ։ Այդ առթիվ կան նաև շատ արժեքավոր պատմական գրավոր տեղեկություններ, որոնք կարող են առանձին ուսումնասիրության նյութ դառնալ։ Այդպիսի տեղեկություններից են 8-րդ դարի 80—90-ական թվականներին արաբական ֆեոդալների դեմ տեղի ունեցած ադրբեջանական գյուղացիների խռովությունը։ Ժողովրդական այդ շարժումը 9-րդ դարի սկզբում տեղի տվեց մի նոր, խոշոր ապստամբության, որը պատմության մեջ հայտնի է խուրամիտների ապստամբություն անունով և տևել է 30 տարուց ավելի։ Այդ ապստամբությունը, որ ուղղված էր տեղական կեղեքիչների և արաբական ֆեոդալների դեմ, ծայր առավ Ղարադաղում և Թալիշի լեռներում։ Հետագայում ժողովրդական հերոս Բաբեկի կողմից գլխավորվող հիշյալ ապստամբությանը մեծ մասնակցություն ցույց տվին նաև քուրդ հնչված և ազատասեր մասսաները[2]։

Ադրբեջանական և քուրդ ժողովուրդների պայքարն իրանական բռնակալության դեմ նոր թափ է ստանում Շեդդադյանների հարբսության օրով[3]։

---

[1] **Низами Кәнчәви,** Едди көзәл, Баки. 1941. Ահմեդ Խոդադադե, *Գյուզդայու բախտը, Երևան, 1936։* **Сүлейман Рәһимов,** Шамо, Баки, 1940. **Мәммәд Сәид Ордубади,** Гылынч вә гәләм, Баки, 1948. **Мирзә Ибраһимов,** Кәләчәк күн, Баки, 1951.

[2] Очерки по истории Азербайджана, см. Известия Ак. наук Аз. ССР, № 1, 1946, Баку, стр. 50—51.

[3] *И. Орбели,* Памятники эпохи Руставели, Введение, Ленинград, 1938, стр. 5.

Երկու ժողովուրդների մի շարք ցեղեր ու տոհմեր գտնվելով տնտեսական և քաղաքական համարյա միևնույն պայմաններում, ինքնապաշտպանության համար հաճախ միացել են։ Պատմության մեջ հայտնի է «Իգիրմի դորթ» (քսան չորս) անունը կրող ազգաբնջանական և քրդական տարբեր ցեղերից կազմված մի խմբավորում, որը հիմնադրվել է 16-րդ դարում՝ Բարդայի շրջակայքում, ունենալով 30 հազար կռվող[1]։ Այդպիսիներից է նաև «Օթուզ իքի» (երեսուն երկու) անունը կրող մի ուրիշ մեծ և հայտնի խմբավորում, որը կազմակերպվեց նույն 16-րդ դարում՝ Ղարաբաղում և Բարդայի հարավում գտնվող ազգաբնջանական և քրդական 32 տարբեր ցեղերից»[2]։

16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին Թյուրքիային և Իրանին ենթակա ազգաբնջանցիների, հայերի, վրացիների, քրդերի տնտեսական, քաղաքական կյանքն ավելի քան վատթարացավ։ Տարբեր ժողովուրդներին պատկանող ժամանակի պատմիչները՝ Շերեֆ էդդին Բիթլիսցին, Իսկենդեր Մունշին և Առաքել Դավրիժեցին նկարագրում են գյուղացիների ծայր աստիճան չքավորությունը։ Խոսում են թե՛ տեղական և թե՛ ավելի լայն մասշտաբի հասնող մի շարք ժողովրդական ընդվզումների, ցասմնալից ապստամբությունների մասին, որոնցից մեկն է ազգաբնջանական, այսպես կոչված, ջալալիների գյուղացիական ապստամբությունը։ Այս ապստամբությունը ուղղված էր, ինչպես իրանական ու թյուրքական բռնակալության, այնպես էլ տեղական ֆեոդալների դեմ։ Ապստամբության հայտնի ղեկավարներից մեկն էր Քյոռօղլին, որի հերոսական սխրագործությունների մասին ժողովուրդը հյուսել է երգերի մի ամբողջ ցիկլ «Քյոռօղլի» անունով[3]։

Ժամանակի պատմիչ Ա. Դավրիժեցին իր «Պատմության» մեջ հիշատակում է այդ ապստամբների 23 գլխավորների մասին՝ «Սոքա ամենեքյան,— գրում է նա,— Ջալալիք էին որք ոչ հնազանդէին

---

[1] Scheref, prince de Bidlis, Scheref-nameh ou histoire des Kourdes, t. I, Pétersbourg, 1860, p. 323 (պարսկերեն)։

[2] *И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, стр. 136.

[3] Большая советская энциклопедия, второе издание, т. I, 1949, стр. 443--444.

բագավորին»[1]: «Բագավորի» դեմ ապստամբվել է գյուղացիությունը: Այս երևում է նաև մի քանի խոսուն անուններից: Դրանցից են, օրինակ. «Ջրփրլաղ», որ նշանակում է տկլոր, մերկ, «Ղարասահաթ», որ նշանակում է սև բախտ ունեցող, դժբախտ, «Թանղրի թանամազ»՝ աստված չճանաչող, անաստված, ինչպես նաև «Քոռօղլի», որ նշանակում է կույրի որդի: «Այս այն Քոռօղլին է, որ բազում խաղ է ասացյալ՝ զոր այժմ աշղներն եղանակեն»[2],— գրում է Ա. Դավրիժեցին: Սրանք տոգորված լինելով ազատասիրական գաղափարներով, ամենուրեք հանդես են բերել անօրինակ խիզախություն և քաջություն: Դավրիժեցին խոստովանում է, որ «Եվ սոքա էին արք անուանիք՝ և յաղթողք՝ և քաջ պատերազմողք՝ և անպարտելի ախոյանք»[3]:

Ադրբեջանական ապստամբների հետ գործել են նաև քուրդ ջալալիները[4]: Հենց ջալալի جالی անունը, որ արաբերեն նշանակում է ապստամբ, կրում են մինչև այժմ գոյություն ունեցող քրդական Բոտկի մեծ ցեղի մեջ մտած մի քանի խմբավորումներ (օրինակ՝ ջալալի-սակյանլի, ջալալի-բանոկի (բանոկի — Հ. Ջ.), գոյանլի-ջալալի)[5]: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ բանոկի (բանոկի), ինչպես և գոյանալի ու սակյանլի տոհմերը, երբեմն հիշվում են նաև առանց ջալալի ածականի, իսկ երբեմն ընդհակառակը՝ հիշվում են միայն ջալալի անունով: Այսպիսով կասկածից վեր է, որ բոտկցոց այս խմբավորումները եղել են ադրբեջանական ապստամբների հետ: Այդ է պատճառը, որ «ջալալի» անունը որպես ածական անցել է նրանց ու պահպանվել մինչև այժմ:

Ա. Դավրիժեցու «Պատմության» մեջ հիշատակություն կա նաև ադրբեջանական ապստամբների շարժման քուրդ մասնակիցների մասին: «Թվին Ռխ. (1591) Գզիրօղլին ելավ, ջալալի քոչդ ազգավ»[6],— գրում է նա: Այս հիշեցնում է ադրբեջանական էպոսի նշանավոր հերոս Քյոռօղլու մոտիկ ընկերներից մեկին՝ Գզիր-

---

1 Ա. Դավրիժեցի, *Պատմություն, Վաղարշապատ, 1884, էջ 64:*

2 *Նույն տեղում:*

3 *Նույն տեղում, էջ 63.*

4 *J. de Hammer*, Histoire de l'Empure Ottoman, trad. de l'allemand par Dochez, t. II, Paris, 1844, livres XLI—XLIII.

5 *С. Егиазаров*, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, см. „Записки Кавказского отдела имп. Русск. географ. общества", кн. XIII, Тифлис, 1891, стр. 10.

6 Ա. Դավրիժեցի, *Պատմություն, էջ 488:*

օղլի Մոատաֆային, որ հանդես է գալիս որպես ապստամբների մի ջոկատի գլխավոր: Պատմիչը դրում է այնուհետև «...եւ սա ևս ընկեր է Քոռօղլվույն՝ զոր յոլով տեղիս ի մեջ յուր խաղին զսա հիշե»[1]:

Ջալալիների շարժման ժամանակաշրջանում քրդաբնակ մի շարք վայրերում նույնպես ծայր առան ազատագրական մեծ ու փոքր ապստամբություններ, որոնք զուգակցվեցին ադրբեջանական ջալալիների ապստամբությանը: Հայտնի է այս տեսակետից Թյուրքիայի սահմանի մոտ գտնվող իրանական Քուրդստանի, Թերգավերի շրջանում Դըմդըմ կոչված լեռան բարձունքի վրա կառուցված համանուն բերդի նշանավոր ապստամբությունը, որը բռնկվեց 1608 թվականին և տևեց մինչև 1609 թվականի վերջերը: Այդ ազատագրական շարժումն ամբողջովին ուղղված էր թե՛ իրանական և թե՛ թյուրքական զավթիչների դեմ:

Դըմդըմի ապստամբության ժամանակակից և մասնակից, Շահ-Աբբասի պալատական պատմագիր Իսկենդեր Մունշին իր «Թարիխի Ալամար» նշանավոր աշխատության մեջ, այդ մասին շատ արժեքավոր տեղեկություններ է տալիս: Նա նշում է, որ՝ 300—400 մարդուց բաղկացած ջալալիների մի ջոկատ գնաց միացավ էմիր Խանին (Դըմդըմ բերդի գլխավոր ապստամբին — Հ. Ջ.) և նրան իր հավատարմությունն ու ծառայությունն առաջարկեց[2]:

Դըմդըմ բերդը, որի ապստամբությունը ինչպես նշեցինք, ուղղված էր թե՛ Իրանի և թե՛ Թյուրքիայի բռնակալության դեմ, և որի պաշտպանության համար զոհվեցին բազմաթիվ ազատասեր հերոս ապստամբներ, այդ թվում նաև ադրբեջանական ջալալիներ, իր դարավոր ավերակներով դեռևս մնում է իբրև տիրող բռնակալությունների դեմ մղված ազատագրական պայքարի սիմվոլ:

Դըմդըմի ապստամբությունը, ինչպես նկատեցինք, անմիջապես շաղկապվեց ադրբեջանական ջալալիների ապստամբությանը, իսկ նրանց շուրջն ստեղծված էպոսը՝ («Դըմդըմ»), զուգակցվեց նույն ժամանակում ստեղծվող ադրբեջանական «Քյոռօղլի» էպոսին[3]: Եվ դա բնական էր, որովհետև թե՛ մեկը և թե՛ մյուսը ունենա-

---

[1] Ա. Դավրիժեցի, Պատմություն, էջ 64:

[2] Տես Հայկական ՍՍՌ Մատենադարանի արևելյան բաժնի ձեռագիրը № 2, նույն հեղինակի «Թարիխի Ալամար» աշխատությունը, էջ 234—248 և 286—288:

[3] «Koroğlu» — toplayanı: Hüseyn Əlizadə, Bakı, 1941.
«Koroğlu» — tərtib edəni: M. H. Təhmasib, Bakı, 1949.

լով ազատագրական բնույթ՝ ուղղված էին այդ ժողովուրդների թշնամի Իրանի ու Թյուրքիայի բռնակալությունների դեմ:

Սրանով պետք է բացատրել ազրբեջանական էպոսի ու նրա հերոսի հարազատությունը քուրդ ազատասեր աշխատավոր ժողովրդի համար:

2

Քրդերի մեջ բոլորը գիտեն Քյոռօղլու անունը և շատերը լսել են նրա շուրջը ստեղծված այս կամ այն ավանդությունը, լեգենդը, հերոսական դրվագը: Քյոռօղլու անունը, որ բառացի նշանակում է վույրի որդի՝ К'орог'ли — Քյոռօղլի, քրդերի մեջ ունի քաջության, անվախության, ազնվության իմաստ: Այդ պատճառով մյուս ժողովուրդների նման, քրդերը ևս Քյոռօղլի մականունով են կոչել այն մարդկանց, որոնք աչքի են ընկել իրենց ուժով, անվախությամբ ու քաջությամբ: Շատ ծնողներ իրենց արու զավակներին կոչում են Քյոռօղլի անունով: Բնորոշ է նաև այն, որ այդ անունը մեծ մասամբ կրում են աշխատավոր մարդկանց զավակները:

Քյոռօղլու անունով կոչվում են մի շարք աշխարհագրական վայրեր, բարձրաբերձ սարեր, անտառներ, երբեմն խոր ու մթին ձորեր, քարանձավներ և այլն[1]: Օրինակ՝ Ч'йае К'орог'ли Քյոռօղլու սար, Гъре К'орог'ли — Քյոռօղլու բարձունք և այլն: Այդ վայրերում հաճախ ապաստան են գտել նաև թյուրքական և իրանական բռնության դեմ ըմբոստացած (ղաչաղ — պարտիզան դարձած) քրդերը: Այդ տեղերը երբեմն ընդունվել են իբրև յուրահատուկ ուխտավայրեր, իբրև քաջերի և զրկված ու հալածված մարդկանց ոգի և ուժ տվող բնակավայրեր:

Ժողովրդի ջերմ սերը ազրբեջանական հերոս Քյոռօղլու նկատմամբ ցայտուն կերպով երևան է գալիս նաև այն ստեղծագործությունների մեջ (երգախառն պոեմներ, լեգենդներ, հեքիաթներ, զրույցներ, առասպելներ), որոնք հորինվել են Քյոռօղլու շուրջը և լայնորեն տարածվել են քրդական միջավայրում:

Քուրդ ժողովուրդը իրեն խորապես հարազատ «Քյոռօղլի» էպոսը փոխ առնելով ազրբեջանական եղբայրական ժողովրդից՝ որոշ չափով տեղայնացրել, հարմարացրել է իր կյանքին: «Քյոռօղլու» քրդական բազմաթիվ պատումներից առայժմ գրառված է միայն 24 պատում: Այս պատումներում պատկերված պայքարն ուղղված է

---

[1] *Гакстгаузен*, Закавказский край, С.-Петербург, 1855, стр. 153.

իրանական շահի և թյուրքական սուլթանի դեմ: Եթե Իրանում տեսնում ենք միայն Քյոռօղլուն և նրա կուրացած հորը, ապա Թյուրքիայում (Ստամբոլ) արդեն հանդիպում ենք մի քանի տասնյակ անանուն ապստամբների, որոնք համախմբված ազատասեր Քյոռօղլու շուրջը՝ պայքարում են բոլոր դույնի բռնակալների դեմ: Այսպիսով, էպոսում որոշակիորեն իրար դեմ են դուրս գալիս սոցիալական հակադիր դիրքերի վրա կանգնած երկու դաստակարգեր, ճնշողներ՝ ի դեմս Շահ-Աբբասի (Հասան խանի), Սուլթան Մուրադի (Բոլի բեկի) ու Ջենան Արաբի և ճնշվողներ՝ ի դեմս Քյոռօղլու և նրա շուրջը համախմբված ապստամբների (Գղիրօղլի, Ալվազ Բալի, Թանդրի Թանմադի և այլն):

Հարստահարիչների դեմ հաջող պայքար մղելու, ինչպես և աշխատավորությանն օգնելու նպատակով, Քյոռօղլին ամրանում է Զարդաղլի Զամլիբելում, որտեղից մշտապես անցնում էին իրանական շահի և թյուրքական սուլթանի հարստատ քարավանները: Բայց նա ամրացած չի մնում այդ բերդում, հետապնդում թողնում է այն և շրջագայում այլ երկրներ՝ տեղի աշխատավորությանն օգնելու համար: Նա նրանց չի մոռանում թյուրքական սուլթանի և այլ հարստահարիչների դեմ մղած կռվի ամենադժվար պահին անգամ: Էպոսի քրդական պատումներն այս առումով մեզ հիշեցնում են հայկական էպոսի հերոս՝ Դավթին, որը կռվի ժամանակ խնայում է բռնի ուժով ռազմի դաշտ ուղարկված աշխատավորներին: Քյոռօղլին իր ընկերներին ասում է՝ «Ո՛վ իդիթներ, զինվորներին չկոտորեք, խեղճ են, ռայաթի տղաներ են, ռանչպար են, զոռով են բերել, միայն Բոլի բեկին բռնեք, բերեք ամրոց, որ նրա հետ վարվեմ այնպես, ինչպես սիրտս է ուզում»:

«Քյոռօղլի»-ի քրդական պատումների մեջ հանդես եկող այս «իդիթները» թագավորներ և հոգևորականներ չեն, այլ ժողովրդի ծոցից ելած ու նրա շահերը պաշտպանող հերոսներ: Դրանցից շատերի անունները ցույց են տալիս ոչ միայն նրանց վիթխարի ուժն ու կարողությունը, այլև նրանց սոցիալական ծագումը: Օրինակ՝ Դամըրչիօղլի նշանակում է դարբնի որդի, Դազիրմանչիօղլի, նշանակում է ջրաղացպանի որդի և այլն:

Շատ կարևոր է նշել և այն, որ էպոսի հերոսները տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներն են: Ադրբեջանական հերոսների հետ մեկտեղ էպոսում գործում են հայեր, վրացիներ, քրդեր, արաբներ, պարսիկներ, թուրքմեններ, Քյոռօղլու հերոսական կերպարը և «Քյոռօղլի» էպոսն ամբողջությամբ տոգորված է ժողո-

վուրդների բարեկամության վեհ գաղափարով։ Այս տեսակետից նշանակալից է այն ծանրակշիռ փաստը, որ կովկասյան և միջին ասիական մի շարք ժողովուրդներ իրենց իսկապես հարազատ են համարել, «Քյոռօղլի» էպոսը[1]։

Հենց այս երևույթն ինքնին խոսում է ադրբեջանական էպոսի լայն ժողովրդայնության մասին։ «Արևելքի միևնույն քաղաքական բռնակալության ու տիրողների կամայականությունների տակ դալարվող, միևնույն սոցիալական անարդարությունների և տնտեսական անզուսպ շահագործումների ու կեղեքումների ներքո ճնշված ժողովրդական զանգվածները,— գրում է պրոֆ. Խ. Սամվելյանը, անկախ իրենց ազգային պատկանելությունից, միևնույն դասակարգային ատելությամբ ու ներհակությամբ են բորբոքվել և իրենց պաշտպանի իդեալական դեմքը մի հայտարարի են բերել Քյոռ-օղլու հերոսական անձնավորության մեջ։ Ահա այստեղ է խորացած «Քյոռ-օղլի» վիպասանության այն կորիզը, ակունքը, որից աճել է նրա ինտերնացիոնալ բնույթը»[2]։

Քյոռօղլու դրական վերաբերմունքը դեպի աշխատավոր ժողովուրդը անխախտ կապ է ստեղծել նրա և տարբեր ժողովուրդների աշխատավորության միջև։ Էպոսի «Քյոռօղլին ու Ասլան փաշան» քրդական պատումը այդ տեսակետից շատ բնորոշ օրինակներից մեկն է։ Բաղդադի Հասան փաշան բռնել է տալիս Քոսա Քանհանին, Դամրչօղլուն, Այվազ Բալուն և որոշում է մաշկազերծ անելով սպանել։ Քյոռօղլին շտապում է օգնության։ Ճանապարհին հանդիպում է մի լացող ծերունու և հարցնում, թե նա ինչու՞ է լալիս, անծանոթ ծերունին պատասխանում է. «Եթե ես լաց չլինեմ, ախ չանեմ, ապա էլ ո՞վ պիտի անի։ Որդ ես քոռանամ։ Քյոռօղլուն իր երկու քաջերի հետ բռնել են։ Վաղը նրանց պիտի շարաշար սպանեն։ Դե, արի լաց մի լինի, ախ մի քաշիր»։

Քուրդ բանասացները Քյոռօղլու և ժողովրդի միջև եղած սերտ կապի և համբավի մասին ստեղծել են մի շարք զրույցներ ու ավանդություններ։ Իբրև օրինակ կարելի է հիշել «Քյոռօղլին և Հովիվը» վերնագրով քրդական ինքնատիպ և շատ տարածված զրույցը[3]։

---

[1] *Л. И. Климович*, Хрестоматия по литературе народов СССР, Москва, 1947. Антология туркменской поэзии, Москва, 1949.

[2] *Քյոռօղլի, Արմֆանի հրատարակություն, հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյան, Երևան, 1941, էջ 20—21 (Խ. Սամվելյանի առաջաբանը)։*

[3] *Հ. Ջնդի, Քրդական ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1952, էջ 17։*

Քյոռօղլին իր մեջ խտացրել է ժողովրդի բնավորության լավագույն գծերը։ Նա վճռական է իր որոշումների մեջ։ Նրա խոսքը թշնամիների նկատմամբ իր թրի նման հատու, խոցող ու սպանիչ է։ Անգամ շղթայակապ վիճակում նա մնում է վեհ, աննկուն և նենդ սուլթանին վախ է պատճառում։ Թյուրքական սուլթանին դիմելիս Քյոռօղլին ասում է.

«Ես չեմ վախենում նենդ մարդուց.
Աղվեսն ասում է՝ առյուծին կփախցնեմ բնից,
Բայց իզուր։
Ես չեմ վախենում ոչ մի սուր մարդուց»։

Քյոռօղլին վեհ է, ինքնավստահ, ճշմարտախոս, իսկ նրա հակառակորդներ սուլթանն ու շահը ապիկար են, ուխտադրուժ, ստախոս ու դավաճան։ Իբրև օրինակ հիշենք Բոլի բեկի դավաճանությունը։

Բոլի (Պոլի) բեկը, որ Քյոռօղլու հետ արնեղբայր էր դարձել дэстэбра, побратимство), հետապայում դրժում է իր տված երդումը և դավաճանում նրան։ Նենգաբար բռնված Քյոռօղլին դիմելով Բոլի բեկին ասում է. «Մի՞թե սրա համար երդվեցինք, որ ինձ էսպես դավաճանաբար կապկպես»։ «Մեր երդումը, մեր ուխտերությունը,— պատասխանում է Բոլի բեկը,—Զարդաղլի Չամլիբելում մնաց, իսկ էստեղ էդպիսի բաներ չեն անցնում»։

«Քյոռօղլի» էպոսի և դրա քրդական պատումների մեջ իբրև կարևոր գործող անձինք հանդես են գալիս նաև կանայք։ Դրանք երևան են բերում ազատասիրության բուռն ձգտում, ինքնուրույնություն, տոկուն կամք, առողջ միտք։ Նրանք խիզախության և հերոսության են մղում իրենց ամուսիններին և ընկեր ասպետներին։ Հաճախ իրենք ևս մասնակցում են կռիվներին, պաշտպանում Զարդաղլի Չամլիբելը թշնամիներից։ Նրանք իբրև ազատասեր հերոսուհիներ հակադրվում են տիրող բռնակալական կարգերին։

Քյոռօղլին չէր ազատվի անխուսափելի մահից, եթե նրան չօգներ Թյուրքական սուլթանի դեղեցկուհի և խելացի դուստր Դոնա կամ Դունյա խանումը։ Այդ խիզախ աղջիկը խնամում է դերված Քյոռօղլուն, փրկում է նրա կյանքը և ապա ինքն էլ նրա հերոսներից մեկի հետ (Այվազ Բալու) փախչում է ազատագրված Զարդաղլի Չամլիբելը։ Այդպես են Քյոռօղլու քաջերի հետ փախչող բոլոր աղջիկները՝ Մահբուբ խանումը, Թելլի խանումը, Ռուպի խանումը, և Հուրի խանումը։ Սրանք բռնի ամուսնության և կրոնով սրբագործված սովորությունների ամենատխերիմ թշնամիներն են։

Էպոսի նշանավոր կանանցից մեկն է Քյոռօղլու կինը՝ Ջավարլի փաշայի զեղեցիկ ու խելացի դուստր Նիգար խանումը: Սա նույնպես դեմ է գնում ընդունված ամուսնական օրենքին և հակառակ հոր ցանկության փախչում է Քյոռօղլու հետ: Նիգարը զերադասում է փախչել «իր աչքով տեսած և իր սրտով սիրած քաջ տղամարդու հետ, քան, թեկուզ և շքեղության մեջ, մնալ ճնշված ու արհամարհված»: Նա Քյոռօղլու ամենամոտիկ բարեկամն է, խորհրդատուն, զինակիցը: Քյոռօղլու բացակայության ժամանակ Ջարդաղլի Ջամլիբելում նա է զեկավարում հարձակվող Բշնամու դեմ կռվող մարտիկներին:

Եթե Քյոռօղլին իր քաջերի ու նրանց կանանց համար ընկեր կամ եղբայր է, ապա Նիգար խանումը՝ քույր է կամ մայր: Քյոռօղլուց հետո էպոսում նա երկրորդ սիրված անձն է: Պատահական չէ, որ շատ ընտանիքներում ի պատիվ նրան՝ աղջիկներին հաճախ կոչում են Նիգար անունով:

3

Ադրբեջանական ժողովրդի դիցաբանական պատկերացումները «Քյոռօղլի» էպոսի պատումների միջոցով հարազատ հող են գտել քուրդ ժողովրդի մեջ:

Ինչպես ուրիշ ժողովուրդների էպոսների, նույնպես և «Քյոռօղլի» էպոսի ու նրա քրդական պատումների առասպելաբանության մեջ մեծ տեղ է տրված հրաշագործ ջրին: Այս բացատրվում է այն վճռական դերով, որ խաղացել է ջուրը թե՛ ադրբեջանական գյուղացիության և թե՛ քուրդ լեռնականների համար:

Ջրին նվիրված են այդ ժողովուրդների երգիչների և բանասացների կողմից հորինված բազմաթիվ ստեղծագործություններ: Դրանց մեջ գովերգվում են՝ աбnhaйat — անմահական աղբյուրները, հորդառատ գետերը և գարնանային կենարար անձրևը: Ջրի հետ են կապվում նաև այդ ժողովուրդների առասպելական անմահ հերոսները: Այդպիսիներից մեկն է ահա ադրբեջանական ժողովրդի հերոս Քյոռօղլին: Ջուրը ոչ միայն անմահացնում, այլև հզոր ուժ է տալիս նրան ու նրա հետ գործող կենդանիներին: Քյոռօղլին և իր Ղռաթ ձին խմում են Բինգյոլի անմահական ջրից և դառնում են հզոր ու անպարտելի:

Քուրդ լեռնաբնակ ժողովուրդը կարևոր տեղ է տվել հատկապես անձրևի կենսաբեր ջրին: Այդ պատճառով Քյոռօղլու գերմարդկային ուժի խնդիրը կապել է նաև անձրևի ջրի հետ: Ըստ առասպե-

յաբանության Քյոռօղլին այս ջրից է ձեռք բերում նաև իր քաջությունն ու խիզախությունը, իր խելքն ու գիտությունը։

«Ասում են՝ երբ Քորօղլին մի օր ձիեր էր արածացնում, հոդ անձրև է գալիս, հեղեղ է բարձրանում։ Էդ ժամանակ ջրի փրփուրի երկու կաթիլ ընկնում են հեղեղի երես, խոսքի բռնվելով գալիս են ներքև։ Մեկը դրանցից ասում է մյուսին.

— Ով որ ինձ խմի, քաջ կդառնա, ոչ մի մարդ նրա չափ ուժ չի ունենա։

Մյուսն էլ ասում է թե՝

— Ով որ ինձ խմի, կարող է ուզած տեղը կերպարանափոխվել, խելոք ու ճարպիկ դառնալ։

Քյոռօղլին տեսնում է փրփուրի էդ կաթիլները և լսում նրանց միջև եղած խոսակցությունը։ Մտնում է ջրի մեջ. աջ ձեռքով քաջություն խոստացող կաթիլն է բռնում, ձախով՝ մյուսը։

Ասում են թե՝ էդ օրվանից էլ Քյոռօղլին դառնում է քաջ, խելոք ու ճարպիկ»։

Ըստ այլ պատումի՝ Քյոռօղլին խմում է երեք պղպջակ։ Երրորդ պղպջակը նրան տալիս է հզոր, որոտաբեր ձայն, որով նա ահ ու սարսափ է ազդում իր թշնամիների վրա։ Ադրբեջանական ժողովրդական հերոսն իր այդ որոտացող ձայնով մեզ հիշեցնում է քրդական առասպելաբանության մեջ հայոնի որոտ ու կայծակ արձակող ահեղազդեցող Մամա Ռաշանին և հայկական էպոսի Զենով Հովանին։

Էպոսի հերոսների կյանքում նշանակալից դեր է կատարում ծովը, որը և՛ ուժի աղբյուր է, և՛ ծնող մայր։ Ծովից են ծնվում հատկապես հերոսի հրաշք ձիերը՝ Ղռաթն ու Տոռաթը։

Առասպելական այս մոտիվը տեղ է գտել նաև քրդական պատումներից մեկում, այն տարբերությամբ միայն, որ այստեղ ծովին փոխարինում է լիճը։ Եվ դա միանգամայն բնական է, որովհետև քուրդ լեռնականի համար ծովի դեր են կատարել տարբեր մեծությամբ և տարբեր բարձունքների վրա գտնվող կենսական նշանակություն ունեցող լճերը։

«Քյոռօղլու» քրդական պատումներում Ղռաթն ու Տոռաթը ծնվում են լճից։ Սրանք սրընթաց են, ինչպես կայծակ, թեթև են, ինչպես քամին և իմաստուն են, ինչպես մարդը։ Սրանք հիշեցնում են Սասունցի Դավթի քոռկիկ Ջալալին, որը պատերազմի ժամանակ իր տիրոջ հետ համահավասար կռվում է թշնամու դեմ։ Ինչպես Սասունցի Դավթին չի կարելի պատկերացնել առանց Քոռկիկ Ջալալիի, այնպես էլ Քյոռօղլուն՝ առանց Ղռաթի։ Ղռաթն ըստ քրդական ավան-

դության, այն նշանավոր ձիերից է, որոնք իրենց հեծյալներով դեպ-
ևս շրջում են ցամաքի ու ջրի վրա: Այդպիսիներից են «Մամե և Զի-
նե»-ի խոսող, խելացի Բոր ձին, «Կաո ու Քուլուկ» պոեմի Բեջանը,
«Ռոստամե Զալի»՝ Ռավշե Բալաքը և ուրիշները: Ամպրոպային ծա-
գում ունի Քյոռօղլու թուրը, ինչպես Սասունցի Դավթի Թուր կայծա-
կին: Առանց այդ ամենահաղթ թրի անհնար է պատկերացնել Քյոռ-
օղլու ուժն ու հռչակը: Նա այդ թրով դառնում է անխոցելի, հիշեց-
նելով քրդական հեքիաթների մեջ գործող ամենահաղթ Ջանփոլատին
(պողպատե մարմին ունեցող):

Ըստ քրդական առասպելաբանության, անձնավորված է ոչ միայն ձին, քուրդ լեռնականի հավատարիմ ընկերը, այլև ձիասարքն ու հերոսի զենքերը: Այդ բանը տեսնում ենք «Քյոռօղլու» էպոսի քրդական պատումներում: Մի տեղ Բոլի բեկը դիմելով Քյոռօղլուն՝ ասում է.

Бәхтә тә, hәспе тә,
Зине тә, шуре тә дамә:
(Քո, ձիուդ, ձիուդ թամբի,
Թրիդ բախտն եմ ընկել).

նշանակում է՝ քեզ, քո ձիուն, ձիուդ թամբին, թրիդ եմ դիմում, որ
խնայես ինձ:

Անձնավորված է նաև Քյոռօղլու ձեռքի սազը: Ինչպես ձին ու
սուրը, նմանապես և նրա սազը չի ընդունում անարդարություն:
Նման դեպքերում նրա սազն ու տամբուրը ձայն են տալիս, իսկ թու-
րը դուրս է գալիս պատյանից և նորից մտնում պատյանը:

«Քյոռօղլու» թե՛ ազրբեջանական և թե՛ քրդական պատումնե-
րում անձնավորված ձիասարքը, զենքն ու սազը Ղռաթի նման օգ-
նում են հերոսին, նրա նպատակների իրագործման ժամանակ: Սա-
զը, որ արտաքինից թվում է, թե կռվի հետ ոչ մի առնչություն չունի,
Քյոռօղլու ձեռքում դառնում է թշնամիներին խոցող գործիք, հատու
զենք: Գուսան դարձած Քյոռօղլին դիմելով իր վրա կռիվ եկած Բոլի
բեկին՝ սազի վրա նվագելով ասում է.

Ձեռքիդ մեջ փող կդնեմ,
Աչքիդ մեջ շուղ կդնեմ,
Ձեր կանանց այրի կթողնեմ,
Բոլի, ես քեզ ցույց կտամ:

Սպի նվագի հետ միասին՝ Քյոռօղլին Թշնամուն նվաճում է նաև խոսքով, խոսքի հմայության և թովչության ուժով։ Քյոռօղլին խոսքի միջոցով երբեմն կերպարանափոխվում է և դառնում է աշուղ, դերվիշ, որոնք և հնարավորություն են տալիս նրան հաղթանակով դուրս գալ Թշնամու դեմ մղվող կռվից։

«Չեմ տարակուսում,— ասում է Մ. Գորկին,— որ հին հեքիաթները, առասպելներն ու ավանդությունները ձեզ հայտնի են, սակայն շատ կուզեի, որ նրանց հիմնական իմաստն ավելի խորն ըմբռնվեր։ Այդ իմաստը հանդում է հին աշխատող մարդկանց ձգտմանը՝ թեթևացնել իրենց աշխատանքը, բարձրացնել նրա արդյունավորությունը, դիմվել չորքոտանի և երկոտանի Թշնամիների դեմ, ինչպես և խոսքի ուժով «հմայության» ու «թովչության» պրիոմներով ազդել բնության տարերային, մարդկանց Թշնամի երևույթների վրա»[1]։

«Քյոռօղլի» էպոսի մեջ, ինչպես և դրա քրդական պատումներում կարևոր տեղ են գրավում նաև կանխատուշակ երազները։ Այստեղ էլ, ինչպես այդ կարելի է տեսնել ուրիշ ժողովուրդների էպիկական ստեղծագործությունների (ռուսական՝ «Ասք Իգորի գնդի մասին», հայկականի՝ «Սասունցի Դավիթ», գերմանական՝ «Երգ Նիբելունգների մասին», քրդական՝ «Մամե ու Զինե») մեջ, երազները մեծ դեր են կատարում հերոսների կյանքում։ Իբրև օրինակ հիշենք անձրևի պղպջակների զորության մասին Քյոռօղլու տեսած երազը, Քյոռօղլու բանտարկության մասին, Իսա Բալիի երազը և այլն։

Ինչպես քրդական մյուս բանավոր ստեղծագործություններում, այստեղ ևս երազները կրկնվում են։ Կրկնվող երազների միջոցով պարզվում է դժբախտության մեջ ընկած հերոսի վիճակը և նույնիսկ գտնվելու վայրը։

«Քյոռօղլի» էպոսի քրդական պատումները աչքի են ընկնում նաև իրենց արվեստով։ Դրանց սյուժեն ադրբեջանական պատումների նման կուռ է ու ամբողջական։ Սյուժեի մանրամասնությունների միջոցով բացահայտվում է էպոսի գաղափարական առաջավոր բովանդակությունը։ Էպոսի սյուժեի հիման վրա է գրվել ադրբեջանական «Քյոռօղլի» հայտնի օպերան, որի բեմադրության առթիվ ընկեր Ստալինը ասել է, ինչպես հաղորդում է կոմպոզիտոր Ու. Հաջիբեկովը, հետևյալը. «Օպերայի արժանիքներն այն են, որ նա գրված

---

[1] Մ. Գորկի, Գրական, հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 276։

է ժողովրդական ստեղծագործության հիման վրա, նրա այժմեն կառուցված է ժողովրդական էպոսի վրա»[1]:

Էպոսը աչքի է ընկնում ուժեղ և կենդանի պատկերներով, որոնք երկար ժամանակ մնում են ունկնդրի հիշողության մեջ: Դրանցից էն. «Տնավեր Քյոռօղին,— ասվում է մի պատումում.— կարծես ձիու հետ մեկ մարդ, մեկ հոգի է դարձել: Ջին էլ էնպիսի ձի է, որ ամպեր է իրարից բաժանում, գեղեցիկ աղավնու պես՝ աչքը թռչելուն է, որ սարերն ու ձորերը ոտքի տակ տա»: Կամ՝ «Աղջկա սիրտը սիրով էնքան էր վառված, որ եթե Համբերդի ջուրը, Ալադյազի ձյունն իրար հետ խառնեիր ու միջով անց կացնեիր, էլի չէր հովացնի»:

«Քյոռօղլի» էպոսի մեջ, որպես գեղարվեստական արտահայտության միջոցներ, կարևոր տեղ են գրավում բնութագրող էպիտետները: Դրանք դրվելով հերոսի անվան վրա բացահայտում են նրա սոցիալական դոյավիճակը, վարքագիծը, գործելակերպը: Քյոռօղլի էպիտետը, որ արդեն դառել է անձնանուն, դրա լավագույն ապացույցներից մեկն է: Եվ իրոք, Քյոռօղլի նշանակում է ոչ միայն կույրի տղա, այլև քաջ, անվախ, հզոր:

Ժողովուրդը էպիտետների միջոցով դրսևորել է իր իդեական-էմոցիոնալ վերաբերմունքը: Եթե դրական հերոսներին տվել է նրանց նկատմամբ հարգանք, սեր արտահայտող էպիտետներ, ապա բացասական հերոսներին, ընդհակառակը, տեղություն և ժխտական վերաբերմունք արտահայտող էպիտետներ: Դրանցից են քաշալ (ճաղատ) էպիտետը, որ տվել է տղթյանի կողմնակիցներից մեկին՝ Համզոյին, վախկոտ (Бьздо), որ տվել է Բոլի բեկի զինվորներից մեկին և այլն:

Էպոսի պատումների մեջ տեղ են գտել մի շարք քրդական խորհրդաստ և պատկերավոր առածներ ու ասացվածքներ: Դրանցից են՝ əз к'ətьмə т'ор'а тə (ես ընկել եմ քո թողը), որ նշանակում է՝ քեզ եմ հանձնվել, ցանկանում ես սպանի, ցանկանում ես բաց թող: Xwə мьн нане xwə rôha нəхарйə (հացս խոմ ականջով չեմ կերել), որ նշանակում է՝ հասկանում եմ քո ասածը: Шəрма xwe да та'ве (իր ամոթանքը տվեց արևին), որ նշանակում է՝ իր սիրտը բացեց, թերությունները հայտնի դարձրեց: Мала мə,гор'а мə (մեր տուն՝ մեր դերեզման), որ նշանակում է՝ ինչ որ տանը խոսվում է, տան մեջ էլ պիտի մնա:

---

[1] „Сталин. К шестидесятилетию со дня рождения". Госиздат, Москва, 1939, стр. 243.

337—2

23.983
Հ 21914

«Քյոռօղլու» մեջ հաճախ հանդիպում ենք նաև ադրբեջանական առածների ու ասացվածների: Այսպես, օրինակ՝

Нə гидəр, баг'дан гидəр,
Баг'ванчидан нə гидəр:
(Ինչ որ գնում է, այգուցն է գնում,
Այգեպանից ինչ է գնում):

Մի այլ ասացվածքում արտահայտված է Քյոռօղլու և նրա Ղոաթ ձիու անբաժանելիության գաղափարը.

Биндьм Qьр'ат,
Алдьм мурад:
(Ղոաթին հեծա,
Մուրազս առա):

Էպոսում տեղ են գտել մեծ քանակությամբ փոխաբերական պատկերներ. „Нигаре гот: Гоште пəзе нер мьн н'əрам,“ (Նիգարն ասաց. Արու ոչխարի միսն ինձ հարամ լինի), որ նշանակում է՝ այսուհետև տղամարդու հետ չեմ ամուսնանա, չեմ կենակցի: Զորքի շատությունը նրա բարձրացրած փոշով են դատում. „Уришан пьш хwəва ньһер'и, т'оз у думан öса ньлдьк'ьшə, руе ə'зман гьртийə“ (Ուրիշանը ետ նայեց, տեսավ որ փոշու փոթորիկն էնպես է բարձրացել, որ երկնքի երեսն է բռնել):

Քյոռօղլին և իր ընկերները երբեմն իրար հետ փոխաբերություններով են խոսում: Օրինակ, երբ Զարդաղլի Ջամլիբելի մոտ չի երևում Թշնամու զորքը՝ ասվում է, որ «երկինքը պարզ է», իսկ երբ երևում է. ասվում է. «օրն ամպամած է»: Կռվի վախճանը որոշվում է «մոր լացի» փոխաբերությամբ: «Քյոռօղլին ասաց,— Թանղրի Թանմազ, էդ ամպամած լինելն ի՞նչ է նշանակում, յարաբ ո՞ւմ մերը լաց կլինի: Ասաց,— «նրանց մերը լաց կլինի»: Դա նշանակում է, որ Թշնամին կհաղթվի:

«Քյոռօղլի» էպոսի քրդական պատումների մեջ զգալի տեղ են գրավում պատկերավոր համեմատությունները, համադրությունները ու հակադրությունները: Հիշենք դրանցից մի քանիսը: «Քյոռօղլին ասում է,— Ով ընկերներ, գայլերի ոհմակի նման, ձորերի արջերի նման, անտառի քաղցած առյուծների նման հարձակվեք Բոլի բեկի զորքի վրա»: Կամ՝ «ինչպես գայլն ընկնի մի հոտ ոչխարի մեջ» և այլն:

Արտահայտչական պատկերավոր միջոցներից մեկն է հիպերբոլան։ Քյոռօղլու դեմ դուրս եկած զորքի մասին, օրինակ, ասվում է՝ «Վրաններն այնքան շատ էին, երկնքի աստղերին թիվ կար, սարերի խոտ ու ծաղիկներին թիվ կար, դրանց թիվ չկար»։ Կամ՝ «Քյոռօղլին նայեց, տեսավ, որ չորս ձիավոր են գալիս՝ նման երկնքի կրակին ու բոցին»։

Հիպերբոլիկ ձևով է տրված Քյոռօղլու հավատարիմ ձիու՝ Ղռաթի պինը։ Այն հարցին, թե՝ Ղռաթն ի՞նչ արժի, Քյոռօղլին ասում է.

Ղռաթի պինը ես ձեզ հիմա կասեմ.
Ութսուն հազար դանձարանով չեմ տա,
Ութսուն հազար ձիով, ութսուն հազար երկրի փողով չեմ տա,
Ութսուն հազար գութանով, ութսուն հազար արորով չեմ տա։
Ութսուն հազար եղներով չեմ տա,
Ութսուն հազար հարսի չեմ տա,
Ութսուն հազար աղջկա չեմ տա...

«Քյոռօղլի» էպոսի բոլոր պատումների գեղարվեստական արժանիքներից մեկն էլ՝ նրանում դրսևորված ժողովրդական հումորն ու երգիծանքն է։ Նրա մեջ տեղ գտած սրամտություններն ու սրախոսությունները՝ թշնամիների նկատմամբ խիստ ու խայթող երգիծանքը, իսկ բարեկամների նկատմամբ մեղմ հումորը՝ առանձնակի կենդանություն և աշխուժություն է հաղորդում էպոսին։ Օրինակ, Քյոռօղլին գնում է Բաղդադ՝ մահվան դատապարտված Քոսա Քանհանին, Սյվազ Բալուն և Դամրչօղլուն ազատելու։ Կերպարանափոխված մտնում է քաղաք, նախապես պայմանավորվելով իր զորքի հետ, որ «երբ ձեռք տամ բեխերիս, հարձակվեք թշնամու վրա»։ Բայց փլավ ուտելիս՝ նրա բեխերի վրա բրնձի հատիկներ են մնում։ Այդ պատճառով նա ընկնում է անելանելի դրության մեջ, որովհետև երբ ձեռք տար բեխերին, մաքրեր՝ զորքը կհարձակվեր, երբ չտար՝ կմնար ծիծաղելի վիճակում։ Եվ ահա դառնալով, որ հարձակումը անժամանակ է, զերադասում է բեխերը չմրբել և այդպիսով տեղիք է տալիս աշխույժ և առողջ ծիծաղի։ Մի այլ օրինակ՝ Քյոռօղլանը չկարողանալով Ղռաթին տանել, Տոռաթին է փախցնում։ Քյոռօղլին հեծնում է Ղռաթին և հետապնդում է Քյոռօղլանին։ Վերջինս նկատելով իրեն հասնող Քյոռօղլուն, մի ջրաղացի մոտ ձիուց իջնում է, մտնում ներս, ջրաղացպանի շորերը հագնում և դուրս է գալիս։ Այնտեղ հասնող Քյոռօղլին Ղռաթի սանձը տալիս է նրա ձեռքը և ներս մտնում։ Մինչ նա կփնտրեր փախստականին, ջրաղացպանի

ղորեր հագած Քորօղլանը հեծնում է Ղռաթին և հեռանում է։ Խաբված Քորօղլին ընկնում է անհարմար դրության մեջ։ Նա ամոթահար վերադառնում է քաղաք։ «Բնակիչները,— ասվում է էպոսում,— ծաղրեցին Քորօղլուն, ասելով՝ դու Ղռաթին փոխանակեցիր Տոռաթի հետ։ Քանի՞ թուման վրա տվիր։ Բազարդ շնորհավոր լինի»։

Քուրդ ժողովրդի մեջ հարդված և սիրված են եղբայրական աղրբեջանական ժողովրդի երգն ու երաժշտությունը։ Երգիչները սիրով ընդօրինակել են աղրբեջանական ժողովրդական և մասնավորապես գուսանական երգերը, իրենք ևս երբեմն մասնակից դառնալով նման ստեղծագործությունների հորինմանը[1]։ Դրանով պետք է բացատրել նաև աղրբեջանական էպոսի երգվող հատվածների հարազատությունը քուրդ ժողովրդի համար։ Քուրդ բանաստացները «Քյոռօղլու» արձակ հատվածները պատմում են երդերեն, իսկ չափածոն երգում են աղրբեջաներեն։ Օրինակ՝

Уста, мәнә бир тылынч сеч,
Нә узун, нә гыса,
Орта, бах, белә,
Вахтында, вахтында
Гәре ахрәб дилзәһәр олар,
Хорасан поладының
Яхшысыны сеч.
(Վարպետ, ինձ համար մի թուր կռիր,
Ոչ երկար լինի, ոչ էլ կարճ,
Թող միջակ լինի,
Տեղն եկած ժամանակ՝
Սև կարիճի լեզվի պես կտրուկ լինի.
Խորասանի պողպատից
Ամենալավը ընտրիր) և այլն։

«Քյոռօղլի» էպոսի քրդական պատումների լեզուն քուրդ ժողովրդի լեզուն է, պարզ և հասկանալի ամեն մի քրդերեն դիտցողի համար։ Այդ պատումների զգալի մասը պատմել է քուրդ հայտնի գուսան և վարպետ բանաստաց Ահմե Զոլոն։ Նրա լեզուն ճոխ է և

---

[1] *Քուրդ հայտնի գուսաններըը, որպիսիք են Ահմե Զոլոն և Նաղուքը, բացի աղրբեջանական մի շարք երգեր ընդօրինակելուց, հորինել են նաև աղրբեջաներեն լեզվով (տես Հ. Ջնդիի «Քրդական սովետական ժողովրդական բանահյուսությունը» հոդվածը, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիրը» 1951, № 10, էջ 123)։*

պատկերավոր, նա մեծ ոգևորությամբ է վերաբերվում իր արտահայտած յուրաքանչյուր բառին։ «Ես շատ եմ գույնզգույն անուշաբույր ծաղիկներով պարպարված սարերում մեն եկել, շատ եմ լսել վազող քչքչան ջրերի ձայնը և պարզ երկնքում ճախրող թռչունների անուշ երգերը։ Տեսել եմ գեղեցիկ ժայռերն ու կանաչազարդ ձորերը և այդ բոլորից հետո միշտ մտածել եմ, թե ինչպես իմ խոսքն էլ կենդանացնեմ, որ լսելի լինի այն, ինչ որ լսել եմ, որ տեսանելի լինի այն, ինչ որ տեսել եմ»,— ասում է նա։

* * *

«Քյոռօղլու» պատումները դարեր շարունակ քուրդ ժողովրդի հետ շարունակել են իրենց գոյությունը և անդադար վերանորոգվել՝ միշտ մնալով թարմ, գեղեցիկ ու գրավիչ։

«Քյոռօղլի» էպոսի քրդական պատումները կազմում են քրդական էպիկական սիրված ստեղծագործությունների անբաժանելի մասը։

Քուրդ ժողովուրդը սիրելով ազգրեջանական ժողովրդի հերոս՝ Քյոռօղլուն, նույնպես չի պատկերել նրա մահը, այլ աներևույթ է դարձրել, որպեսզի նա այդ վիճակով էլ օգնի հարատահարված ժողովրդին։

Քյոռօղլին, սակայն միշտ չի մնալու աներևույթ վիճակում։ Ըստ էպոսի՝ նա կրկին վերադառնալու է ժողովրդի մեջ և տանելու է նրան սուլթանների ու շահերի դեմ։ Այս հանգամանքը վկայում է ժողովրդի պայծառ օպտիմիզմի և վերջնական հաղթանակի նկատմամբ նրա տնեցած անխորտակ հավատի մասին։

Այս է ազգրեջանական հանճարեղ էպոսի և դրա քրդական պատումների գաղափարական առաջավոր բովանդակությունը։

Введение

Дружба азербайджанского и курдского народов, их экономические, политические и культурные связи имеют вековую давность. Она нашла свое выражение в художественных памятниках устного и письменного творчества этих народов[1]. В этом аспекте имеются весьма ценные исторические письменные сведения, которые могут сделаться предметом специального исследования. К ним относится восстание азербайджанских крестьян против арабской феодальной деспотии в 80—90-х гг. VIII столетия. За этим народным движением в начале IX века последовало новое, еще более грозное восстание, известное в истории под именем восстания хурамитов, длившееся более 30 лет. Направленное против местных угнетателей и арабских феодалов-захватчиков, это длительное и бурное восстание вспыхнуло на территории современного Карадага и в Талышских горах. В дальнейшем в этом восстании, возглавляемом народным героем Бабеком, приняли деятельное участие угнетенные и свободолюбивые курдские массы[2].

Борьба азербайджанского и курдского народов против иранской деспотии усиливается за годы правления династии Шеддадидов[3].

Находясь почти в однородных экономических и политических условиях, многие племена и роды этих двух народов в целях самообороны неоднократно объединялись. В истории

---

[1] **Низами Кәнчәви,** Едди көзәл, Баки. 1941. Ահմեդ խոյալպեի,— *Գյուլշող բախտը, Երևան, 1936:* **Сүлейман Рәһимов,** Шамо, Баки, 1940. **Мәммәд Сәид Ордубади,** Гылынч вә гәләм, Баки, 1948. **Мирзә Ибраһимов,** Кәләчәк күн, Баки, 1951.

[2] Очерки по истории Азербайджана, см. Известия Ак. наук АзССР, № 1, 1946, Баку, стр. 50—51.

[3] *И. Орбели,* Памятники эпохи Руставели, введение, Ленинград, 1938, стр. 5.

пользовалась известностью сколоченная в окрестностях Барды в XVI веке группировка сил различных племен азербайджанского и курдского народов, прозванная «Игирми дорт» («Двадцать четыре») и имевшая 30 тысяч хорошо вооруженных бойцов[1]. К таким группировкам сил относится также известная группировка «Отуз ики» («Тридцать два»), организованная в XVI веке на территории Карабаха и Барды, в которой принимали деятельное участие 32 различных племени азербайджанского и курдского народов[2].

В конце XVI и в начале XVII вв. экономическое и политическое положение азербайджанцев, армян, грузин и курдов сильно ухудшилось в Турции и Иране. Историки-современники Шереф-эд-дин Битлиси, Искендер Мунши и Аракел Даврижеци, по национальному происхождению отличаясь друг от друга, однородно описывают крайнюю нищету крестьян, тяжелую и безутешную жизнь, обреченную на голодную смерть. Они повествуют как о народных бунтах локального значения, так и о грозных восстаниях более широкого масштаба, в том числе о крупном азербайджанском крестьянском восстании так называемых джалали. Это восстание было направлено как против иранской и турецкой деспотии, так и против местных феодалов. Одним из вождей восстания был известный Кёр-оглы, о героических подвигах которого народ сложил целый цикл песен под общим названием «Кёр-оглы»[3]. Историк-современник Аракел Даврижеци, упоминая о 23 главарях восстания, говорит: «Все они принадлежали к племени джалали, не подчинявшемуся царю»[4]. Восстало против царя именно крестьянство. Это явствует хотя бы из некоторых меткких имен, напр., «Чыплаг», что означает—«голыш» («оборванец»), «Карасаат»—«человек, у которого судьба черная, нерадостная», «Тангри танмаз»—«безбожник», «непризнающий бога»,

---

[1] *Scheref*, prince de Bidlis.--Scheref-nameh ou histoire des Kourdes, t. I, Petersbourg, 1860, стр. 323 (на перс. яз.).

[2] *И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, стр. 136.

[3] БСЭ, второе издание, т. I, 1949, стр. 443—444.

[4] *Аракел Даврижеци*, История, Вагаршапат, 1884, стр. 64 (на древнеарм. яз.).

равным образом «Кёр-оглы»—«сын слепца». «Это и есть тот Кёр-оглы, о котором сложена масса песен и которые ныне распевают ашуги»,—пишет он[1]. Воодушевленные свободолюбивыми идеями они всюду совершали беспримерные подвиги храбрости и смелости. «Они мужи именитые, храбрые бойцы, победители и непобедимые соперники»[2],—как показывает армянский замечательный историк.

Бок о бок с азербайджанскими повстанцами сражались и курды-джалали[3]. Само название джалали (جالالى), что по арабски означает «восстающий, раздражительный, вспыльчивый», по сей день носят несколько этнических группировок, входящих в большое племенное объединение Бруки, напр., джалали-сакянли, джалали-бануки (баноки—А. Дж.), гёянли-джалали[4].

Достойно внимания то, что роды бануки (баноки), гёянли и сакянли иногда упоминаются без прилагательного джалали, иногда же упоминаются лишь под названием джалали. Итак, нет сомнения, что эти брукские групповые объединения являлись соратниками азербайджанских повстанцев. Именно поэтому эпитет «джалали», как прилагательное, был перенесен на них, и он сохранился по сей день.

В «Истории» Аракела Даврижеци имеется упоминание и о курдских участниках азербайджанского повстанческого движения.

«В 1591 г. выступил Гзир-оглы, из племени курд-джалали»[5],—пишет он. Невольно вспоминается один из соратников Кёр-оглы, видный герой эпоса, Гзир-оглы Мустафа, выступавший как командир-главарь отряда повстанцев. Историк далее прибавляет: «И он был товарищем Кёр-оглы, который неоднократно вспоминает его в своих «песнях»[6].

---

[1] *Аракел Даврижеци*, История, Вагаршапат, 1884, стр, 64 (на древнеарм. яз.).

[2] Там же, стр. 63.

[3] *J. de Hammer*, Histoire de l'Empire Ottomans, trad. de l'Allemand par Docher, t. II, Paris, 1844. livres XLI—XLIII.

[4] *С. Егиазаров*, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, см. „Записки Кавказ. отдела имп. Русск. географ. общества, кн. XIII, Тифлис, 1891, стр. 10.

[5] Там же, стр. 488.

[6] *А. Даврижеци*, История, стр. 64.

В это самое время вместе с движением курдов-джалали в некоторых курдских районах вспыхнули мелкие и более крупные восстания, которые совпали с повстанческим движением азербайджанских джалали. Известно крупное восстание в крепости Дымдыме, воздвигнутой на вершине неприступной одноименной горы Тергавера в иранском Курдистане, на границе Турции. Оно вспыхнуло в 1608 году и длилось до конца 1609 года. Это освободительное движение целиком было направлено как против иранских, так и против турецких захватчиков.

Современник и участник дымдымовского восстания дворцовый историк Шах-Аббаса, Искендер Мунши в своем известном труде «Тарихи Аламар» дает весьма ценные сведения об этом народном движении. Он рассказывает как отряд джалали в 300—400 чел. соединился с Эмир-ханом (вождем восстания в Дымдыме—А. Дж.) и поклялся в верности, предложив ему свою боевую помощь[1].

Крепость Дымдым, восстание которой, как отметили мы, было направлено против деспотии Ирана и Турции и в деле обороны которой пало множество свободолюбивых героев—повстанцев, в т. ч. и азербайджанских джалали, и по сей день своими вековыми развалинами, крепостными стенами и полуразрушенными башнями продолжает оставаться символом освободительной борьбы против деспотии и хищных захватчиков.

Восстание в Дымдыме непосредственно было связано с восстанием азербайджанских джалали, «Дымдым» совпал с созданием азербайджанского эпоса «Кёр-оглы», сложенным в это же самое время[2]. И это вполне естественно, ибо и тот и другой своим освободительным характером были направлены против врагов этих народов, против деспотии Ирана и Турции.

Этим именно объясняется то, что азербайджанский эпос и его главный герой Кёр-оглы столь любимы и популярны в свободолюбивой среде курдского трудового народа.

---

[1] *Искендер Мунши*, „Тарихи Аламар". Рукопись № 2, Восточн. отдела Матенадарана при Сов. Мин. Арм. ССР, стр. 234–248, 286–288.

[2] «Короғлу», топлаяны Һүммәт Әлизадә, Баки, 1941. «Короғлу», тәртиб әдәни М. Һ. Тәһмасиб, Баки, 1949.

Среди курдов все знают имя Кёр-оглы и многим доводилось слышать то или иное предание, легенду, героический эпизод, сложенные о нем и его соратниках. Имя Кёр-оглы, что в дословной передаче значит «сын слепца», в курдской среде имеет смысл храбрости, бесстрашия, благородства. Вот почему курды, подобно другим народам, именем Кёр-оглы называли людей, выделявшихся своей силой, бесстрашием и храбростью, совершавшие великие подвиги. Многие родители нарекали своим сыновьям имя Кёр-оглы. Характерно то, что это имя в большинстве случаев носят дети трудящихся.

Именем Кёр-оглы названы многие географические места: высокие горы, леса, иногда глубокие и темные ущелья, пещеры и т. п[1], напр., ч'йае К'орог'ли—гора Кёр-оглы, Гьре К'орог'ли—высота Кёр-оглы и т. д. В этих местах находили свое убежище восставшие против турецкой и иранской деспотии курды—качахи (партизаны—недовольные властями и скрывающиеся от них элементы). Эти местности иногда почитались как своеобразные места паломничества, одаряющие духом и силой людей, обездоленных и угнетенных и беззаветных храбрецов.

Пламенная любовь народа к азербайджанскому герою Кёр-оглы особенно ярко отображена в сложенных о нем (Кёр-оглы) и широко известных в курдской среде памятниках народного творчества (лиро-эпические поэмы, легенды, сказки, героические песни и т. п.).

Курдский народ, переняв у братского азербайджанского народа глубоко народный эпос «Кёр-оглы», в некоторой степени локализировал его, обработал, приспособил его к условиям своей жизни. Из многочисленных курдских сказов «Кёр-оглы» пока что записано лишь 24 сказа. Борьба, отображенная в этих сказах, направлена против иранского шаха и турецкого султана. Если в Иране мы встречаем лишь одного Кёр-оглы и его ослепленного отца, то в Турции (Стамбуле) свободолюбивый герой выступает в окружении нескольких десятков безыменных храбрецов, ведущих беспощадную борьбу против

---

[1] *Гакстгаузен,* Закавказский край, С.-Петербург, 1855, стр. 153.

всякого рода деспотов. Таким образом, в эпосе весьма определенно выступают друг против друга две социальные группировки, два класса, имеющие диаметрально противоположные интересы и позиции, а именно: с одной стороны, угнетатели в лице Шах-Аббаса (Гасан хана), Султана Мурада (Боли бека) и Рехана Араба, а с другой—угнетенные в лице Кёр-оглы и окружающих его повстанцев-соратников (Гзир-оглы, Айваз Бали, Тангри Танмаз и др.).

В целях более успешной борьбы с угнетателями и оказания существенной помощи трудящимся Кёр-оглы укрепляется в крепости Чардахли Чамлибеле, откуда постоянно проходили богатейшие караваны иранского шаха и турецкого султана. Впрочем, он не всегда остается в этой крепости, а покидает ее и идет в другие страны, чтобы оказать действенную помощь трудящимся в их борьбе с угнетателями, поработителями. Он никогда не забывает трудящихся, даже в самой горячей схватке с турецким султаном и другими поработителями.

В этом аспекте курдские сказы эпоса напоминают нам героя армянского эпоса Давида Сасунского, пощадившего трудящихся, насильно пригнанных на поле брани. Кёр-оглы наставляет своих товарищей, говоря: «Эй вы, храбрецы-игиты мои, не бейте бойцов, жалко их, они дети рая, землеробы, их насильно пригнали; поймайте лишь Боли бека, приволоките его в крепость, чтобы я расправился с ним, как душе моей угодно».

Эти «игиты» курдских сказов «Кёр-оглы» не цари и царевичи, не лица духовного звания и купцы-богатеи, а вышедшие из недр народа храбрецы, поборники интересов трудового народа. Имена многих из них указывают не только на их колоссальную силу, но и на их социальное происхождение, напр., Дамырчи-оглы, означает сын кузнеца, Дагирманчи-оглы—сын мельника и т. д.

Интересно отметить то, что герои эпоса являются представителями различных народов. Вместе с азербайджанскими героями в эпосе соратниками Кёр-оглы выступают армяне, грузины, курды, арабы, персы, туркмены. Героический образ Кёр-оглы и весь эпос «Кёр-оглы» преисполнены возвышенной идеей дружбы народов. В этом отношении весьма знаменатель-

но, что многие народы Закавказья и Средней Азии эпос «Кёр-оглы» считают родным эпосом[1].

Это обстоятельство само говорит о глубокой народности азербайджанского эпоса. «Изнывающие под гнетом одной и той же политической деспотии и одного и того же произвола господ, одних и тех же социальных несправедливостей и беспощадной экономической эксплуатации и угнетения, народные массы,—пишет проф. Х. Самуэлян,—независимо от своей национальной принадлежности, были воспламенены одинаковой классовой ненавистью и чувством антагонизма и усматривали в героической личности Кёр-оглы идеальный образ своего защитника. Именно здесь кроется то ядро, то семя героического эпоса «Кёр-оглы», которое придало ему интернациональный характер»[2].

Политическое отношение Кёр-оглы к трудящемуся народу создало нерушимую связь между ним и трудящимися различных народов. В этом отношении курдский сказ эпоса «Кёр-оглы и Аслан паша» является одним из весьма характерных образцов. Краткое содержание его сводится к следующему.

Багдатский Гасан паша приказывает схватить Коса Кан-хана, Дамирчи-оглы, Айваза Балу, содрать с них кожу и убить. Кёр-оглы спешит на помощь. По пути он встречается с рыдающим стариком и спрашивает: «Почему плачешь?»—Старик отвечает: «Если не мне плакать, не мне вздыхать, то кому плакать и вздыхать? Да ослепнут мои глаза, схватили Кёр-оглы со своими двумя храбрецами. Завтра должны их предать лютой смерти».—«Не плачь, старик, не вздыхай, все уладится»,—говорит Кёр-оглы.

Курдские сказители сложили ряд легенд и сказаний о тесной связи Кёр-оглы с народом и о его славе. В качестве примера сошлемся здесь на весьма оригинальную и широко распространенную легенду «Кёр-оглы и пастух»[3].

---

1 *Л. И. Климович*, Хрестоматия по литературе народов СССР. Москва, 1947. Антология туркменской поэзии, Москва, 1949.

2 Кёр-оглы, изд. Арм. ФАН'а, собрал и записал Г. Тарвердян. Ереван, 1941, см. предисловие, стр. 20—21 (на арм. яз.).

3 *А. Джнди*, Курдские народные сказки, Ереван, 1952, стр. 17 (на арм. яз.).

В образе Кёр-оглы сгущены лучшие черты характера народа. Он решительный в своих думах и поступках. Для врага слово его разящий, острый, смертельный меч. Даже в кандалах он величав, непреклонен и наводит страх на коварного султана. Обращаясь к турецкому султану, Кёр-оглы говорит.

«Я не боюсь лукавых людей.
Лиса говорит: «Я выгоню льва из его берлоги».
Но это болтовня.
Я не боюсь подлых людей».

Кёр-оглы величав, самоуверен, правдив, а его противники—султан и шах—немощны, вероломны, лживы и изменники. Вспомним в качестве иллюстрации к сказанному измену Боли бека.

Боли (Поли) бек, побратим Кёр-оглы, вероломно нарушил свою клятву и изменил ему. Коварно схваченный Кёр-оглы говорит Боли беку: «Разве мы ради этого поклялись, чтобы ты так вероломно связал меня?»—«Наша клятва, наше побратимство остались там, в крепости Чардахли Чамлибеле, а здесь все это не пройдет»,—отвечает ему Боли бек.

В эпосе «Кёр-оглы», в частности в курдских сказах его, среди выдающихся действующих персонажей выступают также женщины. Они свободолюбивы, самостоятельны и обладают твердой волей и здоровым умом. Они побуждают своих мужей и товарищей их совершать лихие, героические подвиги. Нередко они сами принимают участие в боях, защищают Чардахли Чамлибел от врагов. Как свободолюбивые героини, они противополагаются господствующему деспотическому строю.

Кёр-оглы не избежал бы неминуемой смерти, если бы ему не помогла умная и прекрасная дочь турецкого султана, Дона или Дуня ханум. Эта отважная девица ухаживает за пленным Кёр-оглы, спасает его, а потом с Айвазом Бали, одним из соратников-героев его, едет в освобожденную крепость Чардахли Чамлибел. Таковы и остальные девушки, уходящие с удальцами Кёр-оглы, а именно: Махбуб-ханум, Телли-ханум, Руги-ханум и Хури-ханум. Все они самые заклятые враги насильственного брака и дедовских обычаев, освященных религией.

К числу выдающихся женщин эпоса относятся и Нигяр-ханум, жена Кёр-оглы, прекрасная и умная дочь Джаварли паши. Она также выступает против традиционного, принятого патриархальным обществом брачного закона и вопреки воле отца уходит вместе с Кёр-оглы. Нигяр предпочитает уйти «вместе с храбрым, сердечно любимым мужчиной, чем, пребывая в роскоши, переносить гнет и презрение со стороны окружающих». Она—ближайший друг, советник и соратник Кёр-оглы. В отсутствие Кёр-оглы она замещает его в обороне Чардахли Чамлибела против наступающих врагов.

Если Кёр-оглы для своих удальцов и их жен друг или брат, то Нигяр-ханум—сестра их или мать. После Кёр-оглы она самая любимая фигура в эпосе. Не случайно, что во многих семьях своих дочерей в честь ее называют Нигяр.

3.

Мифологические представления азербайджанского народа нашли при посредстве эпических сказов «Кёр-оглы» родную почву в курдском народе.

Как в эпосах других народов, так и в мифологии «Кёр-оглы» и курдских сказов его много места и внимания уделено чудодейственной воде. Это объясняется той решающей ролью, которую играла вода в жизни азербайджанского крестьянства и курдов-горцев. Воде посвящено множество произведений певцов и сказителей этих народов. В них расхваливаются живые воды бессмертных источников— аблhайат, многоводные реки, и животворные вешние дожди. С водой связаны также мифические бессмертные герои других народов. К ним относится также Кёр-оглы—эпический герой азербайджанского народа. Вода не только является источником бессмертия, но и дарует неиссякаемую силу ему и действующим с ним животным. Кёр-оглы и его Кырат пьют бессмертную воду Бин-гёла и становятся могучими и непобедимыми.

Курды-горцы в своем эпосе отвели важное место, живительной дождевой воде, а потому сверхчеловеческую силу Кёр-оглы они связывают с дождевой водой. По мифу Кёр-оглы

именно этой воде обязан своей храбростью и отважностью, умом и знанием.

«Говорят: однажды, когда Кёр-оглы пас лошадей, хлынул проливной дождь, вода сильно поднялась. Две маленькие пены оказались на поверхности воды и вели друг с другом следующую беседу. Одна сказала:

— Кто выпьет меня, тот станет храбрецом, никто не будет обладать такой огромной силой.

Другая ответила ей:

— Кто выпьет меня, может в любое время обернуться, сделаться умным и ловким.

Кёр-оглы услыхал эту беседу, вошел в воду, правой рукой схватил пену, обещавшую храбрость, а левой—пену, дарующую ум и ловкость.

Говорят, что с того дня Кёр-оглы стал храбрым, умным и ловким».

По другому сказу Кёр-оглы выпил три пузыря пены.

Третий пузырь, выпитый им, даровал ему могучий, громоподобный голос, наводивший страх на врагов. Азербайджанский народный герой своим громовым голосом напоминает в курдской мифологии мечущего гром и молнию зычного Мама Рашана и Огана Горлана армянского эпоса.

В жизни героев эпоса выдающуюся роль играет море, являющееся источником силы и родной матерью их. Из моря выходят, в частности, чудо-кони героев, как Кырат и Торат.

Этот мифологический мотив представлен в одном из курдских сказов этого эпоса, с той лишь разницей, что вместо моря здесь описывается озеро. И это вполне понятно, ибо для горца-курда озера, находящиеся на разных высотах и имеющие жизненное значение, заменяли моря.

В курдских сказах «Кёр-оглы» Кырат и Торат рождаются из волн озера. Они быстры, как молния, как ветер, и мудры, как люди. Они напоминают нам Куркик-Джалали, коня Давида Сасунского, бьющегося с врагами наравне со своим хозяином. Как невозможно представить себе Давида Сасунского без Куркик-Джалали, так и Кёр-оглы без Кырата. По курдским преданиям Кырат из тех выдающихся коней, которые и сейчас ходят по суше и по воде. К ним относятся также

говорящий, мудрый конь Бор в «Маме Зине», Беджан в «Кар у Кулук-е», Равше Балак в «Ростаме Зал-е» и др.

Меч Кёр-оглы подобно Мечу-молнии Давида Сасунского, грозового происхождения. Без этого всепобеждающего меча невозможно себе представить силу и славу Кёр-оглы. Этим мечом он становится непобедимым, напоминая всепобеждающего Джанполата (стальное тело) курдских сказок.

По курдской мифологии персонифицированы не только конь, верный товарищ горца, но и его сбруя и оружие героя. Это ясно видно в курдских сказах эпоса «Кёр-оглы». Однажды Боли бек, обращаясь к Кёр-оглы, говорит:

Бәхте тә, hәспе тә,
Зине тә, шуре тәдамә,

что значит: обращаюсь к тебе, твоему коню, к седлу твоего коня, твоему мечу, чтобы ты пощадил меня.

Олицетворен также саз[1] Кёр-оглы. Как конь и меч Кёр-оглы, так и саз его не терпят несправедливости. В этих случаях его саз и тамбур[1] издают звуки, а меч выходит из ножен и снова входит в ножны.

Олицетворенные в азербайджанских и курдских сказах конская сбруя, оружие и саз, подобно Кырату, помогают герою осуществить поставленные цели. Саз, не имеющий по наружному виду никакой связи с войной, в руках Кёр-оглы превращается в разящее врагов орудие, в острое оружие. Кёр-оглы в образе гусана, обращаясь на наступающего на него Боли бека, говорит под аккомпанимент саза:

«В руки твои денежку положу,
В очи твои соломинку вложу,
Жен то ваших оставлю без мужей,
А тебе, Боли, я покажу».

Вместе с игрой на сазе Кёр-оглы побеждает врага также в словоборстве, силой заклинания и ворожбы. Кёр-оглы иногда превращается в ашуга, дервиша, что дает ему возможность выступить против врага и победить его.

---

[1] Струнный музыкальный инструмент.

М. Горький говорит: «Не сомневаюсь в том, что древние сказки, мифы, легенды известны вам, но очень хотелось бы, чтобы основной смысл их был понят более глубоко. Смысл этот сводится к стремлению древних рабочих людей облегчить свой труд, усилить его продуктивность, вооружиться против четвероногих и двуногих врагов, а также силою слова, приемов «заговоров», «заклинаний» повлиять на стихийные, враждебные людям явления природы»[1].

В эпосе «Кёр-оглы», как и в курдских сказах его важное место занимают также вещие сны. И здесь, как и в эпических произведениях других народов («Слово о полку Игореве», «Давид Сасунский», «Песнь о нибеллунгах», «Маме и Зине»), вещие сны играют в жизни героев крупную роль. В качестве примера упомянем здесь сновидение Кёр-оглы о силе дождевых пузырей, сновидение Иса Бали о заключении в тюрьму Кёр-оглы и т. д.

Как в других курдских памятниках устного творчества, так и здесь сновидения повторяются. При помощи повторяющихся сновидений выясняется судьба попавшего в несчастье героя и даже его местопребывание.

4.

Курдские сказы эпоса «Кёр-оглы» выделяются также своим искусством. Их сюжет, подобно азербайджанским сказам, стройный и целостный. При помощи деталей сюжета выявляется передовое содержание эпоса. По сюжету эпоса написана известная азербайджанская опера «Кёр-оглы», по поводу постановки которой И. В. Сталин говорил, как передает композитор У. Гаджибеков, следующее: «...достоинство оперы в том, что она написана на основе народного творчества, сюжет ее построен на народном эпосе»[2].

Эпос выделяется свежими и живыми образами, метафорами, которые долго остаются в памяти слушателей, например:

---

[1] *М. Горький*, Доклад на Первом Всесоюзном съезде советских писателей (Лит. газета от 20.VIII. 1934 г.).

[2] „Сталин, К шестидесятилетию со дня рождения", Госиздат, Москва, 1939, стр. 243.

«Ох, уж этот Кёр-оглы слился с конем воедино, да так, будто стал один человек, одна душа! А конь-то—он рассекает облака, словно красавец-голубок вот-вот взмахнет крылом и пронесется чрез горы и долы», или «Сердце девы столь полно пламенной любовью, что если б воды Амберта и снега Алагяза соединились и полились на это пламенное сердце, едва ли оно охладилось бы».

В эпосе «Кёр-оглы», как средство художественного выражения. немаловажное место занимают характеризующие эпитеты. Они, присоединяясь к имени героя, выявляют его социальное состояние, бытие, поведение, образ действия. Эпитет Кёр-оглы, ставший собственным именем, лучшее доказательство сказанного. И в самом деле, Кёр-оглы не только означает «сын слепца», но и «храбрый, бесстрашный, могучий герой».

Народ при посредстве эпитетов выявил свое идейно-эмоциональное отношение. Если положительные герои наделены эпитетами, выражающими любовь, уважение, восторг, то отрицательным героям, напротив, даны эпитеты, выражающие ненависть и отрицательное отношение сказителя и слушателей. К последним эпитетам относятся: «качал—«плешивый»—эпитет Хамзо, сторонника султана, «трус» («Бьздо»), как назван один из воинов Боли бека и т. д.

В курдских сказах эпоса имеется целый ряд глубокомысленных и образных курдских пословиц и поговорок, как, напр., әзк'әтьмә т'ор'а тә» —«я попал в твою западню», что означает: «я сдаюсь, хочешь, убей, хочешь, отпусти (помилуй)», xwә мьн нане xwә röha нәхарийә»— «хлеб-то ведь я не ушами ел», что значит: «я прекрасно понимаю тебя», или «Шәрма xwә да тә'ве»—«срам свой вывел на солнце», т. е. «он открыл свою душу, все свои недостатки показал свету», или «мала мә, гор'а мә» «дом наш,—могила наша», т. е. следует молчаливо хранить тайну.

В эпосе «Кёр-оглы» часто встречаются азербайджанские пословицы и поговорки, например:

Нә гидәр, баг'дан гидәр,
Баг'ванчидан нә гидәр?
[Все, что уходит, из сада уходит,
От садовника что уходит?»]

В другой поговорке выражена идея неотделимости Кёр-оглы и его коня, Кырата.

Биндьм Qьрат,
Алдьм мурад.
[Сел я на Кырата,
Достиг я мурата («цели»)].

В эпосе нашло место множество образных метафор, напр.: «Нигаре гот:—Гоште пәзе нер мьн h'әрам» Нигар сказал:— («Да не пойдет мне в прок мясо барана! т. е. впредь не выйду замуж, не буду сожительствовать с мужчиной»). Счет войска ведется по пыли, поднятой им: «Уришанпьш xwәва ньher'и,т'ое у думан óса hьлдьк'ьшә, руе ә'зман гьртийә». [«Уришан оглянулся, увидел: ураган пыли поднялся, покрыл небесный свод»].

Кёр-оглы и его соратники иногда друг с другом говорят метафорами, напр., когда вблизи Чардахли Чамлибела враг не показывается, говорят: «небо ясное», а когда он подступает, говорят: «день пасмурный». Конец войны определяется метафорой «плача матери». «Кёр-оглы сказал:—Тари Танмаз, что означает эта пасмурность, чья мать будет плакать?»—«Сказал: — Их мать заплачет!»—т. е. враг потерпит поражение.

В курдских сказах эпоса «Кёр-оглы» уделено большое внимание образным сравнениям, сопоставлениям и противопоставлениям, напр., «Кёр-оглы сказал:—Товарищи, наступайте на войско Боли бека, как свора волков, как медведи теснин, как лесные изголодавшиеся львы», или он «как волк в отаре овец» и т. д.

Одним из важных образных выразительных средств является гипербола. Так, например, о численности вражеских войск, наступающих на Кёр-оглы, говорится: «Шатров было такое множество, что звездам небесным счет есть, травкам и цветкам гор и полей счет есть, а шатрам вражеским счету нет», или «Посмотрел Кёр-оглы и увидел: идут четверо всадников, подобны они небесным огню да пламени».

В гиперболической форме дана стоимость Кырата, верного коня Кёр-оглы.

«Что стоит Кырат?»
Кёр-оглы отвечает.

«Скажу я вам стоимость Кырата:
За казну в восемьдесят тысяч не дам,
За коней восемьдесят тысяч не дам,
За деньги восьмидесяти тысяч стран,
За восемьдесят тысяч плугов не дам,
За восемьдесят тысяч сох не дам,
За восемьдесят тысяч волов не дам,
За восемьдесят тысяч жен младых не дам,
За восемьдесят тысяч девиц не дам».

Ярко выраженные в курдских сказах эпоса народный незлобный юмор в отношении друзей и резкая, бичующая сатира в отношении недругов, придают эпосу живость и игривость. Например, Кёр-оглы идет в Багдад, чтобы спасти приговоренных к смертной казни Косу Канхана, Айваза Балу и Демирчи-оглы. Переменив свое обличье, он входит в город, предварительно договорившись со своим войском, «лишь только проведу руку по усам, нападайте на врага». Однако, кушая плов, рис застрял в его усах, и он оказался в безвыходном положении, ибо, если он дотронется до усов, войско двинется на врага, а если не дотронется, то очутится в смешном положении. Все же полагая, что наступление не своевременно, он предпочитает не вытирать усов и этим самым дать повод врагам для бойкого и здорового смеха.

Приведем еще один пример:

Кёр-оглан, не будучи в состоянии угнать Кырата, угнал Тората. Кёр-оглы сел на своего Кырата и погнался за Кёр-огланом. Последний, увидя настигающего его Кёр-оглы, остановился у одной мельницы, слез с коня, переоделся в платье мельника и вышел навстречу ему. Кёр-оглы быстро спустился с коня, передал узду мнимому мельнику и вошел в мельницу. Кёр-оглан тотчас же прыгнул на Кырата и ускакал. Для обманутого Кёр-оглы создалось весьма неудобное положение. Пристыженный он возвратился в город. «Жители,—говорится в эпосе,—осмеяли Кёр-оглы, говоря, ты Кырата обменял на То-

рата. Сколько туманов ты додал? Поздравляем тебя с покупкой!»

В среде курдского трудового народа уважаемы и любимы песня и музыка братского азербайджанского народа. Певцы с любовью перенимали азербайджанские народные, в частности гусанские (=ашугские) песни, временами участвуя в создании подобных произведений. Этим и объясняется то, что песенные отрывки азербайджанского эпоса столь близки и приемлемы для курдского народа. Курдские сказители прозаические отрывки сказывают по-курдски, а песни поют на азербайджанском языке, например:

Уста, мәнә бир гылынч сеч,
Нә узун, нә гыса,
Орта, бах, белә,
Вахтында, вахтында
Гара әхрәб дилзәһәр олар,
Хорасан поладынын
Яхшысыны сеч.
Мастер, куй мне меч,
Не длинный, не короткий,
Пусть будет средний.
Чтоб в нужное время,
Был колок как жало скорпиона.
Куй из стали Хорасана,
Наилучший, отменный.

Язык курдских сказов эпоса «Кёр-оглы», общенародный язык курдов, ясный и понятный. Значительную часть этих сказов сказывал известный курдский гусан (ашуг) и мастер-сказитель Ахме Чоло. Язык его богатый и образный; он весьма осторожно относился к каждому высказанному им слову и выражению. «Я много гулял на горах, покрытых разноцветны-

---

1 Известные курдские гусаны (ашуги) Ахме Чоло и Назук, помимо ряда заимствованных азербайджанских песен, сами сочиняли песни на азербайджанском языке. См. А. Джнди, „Курдское советское народное творчество", Известия Ак. наук Арм. ССР, 1951, № 10, стр. 123.

ми благоухающими цветами, много прислушивался к журчанию клокочущих горных речек и к сладкому пению парящих в ясном небе птиц. Я видел красивые скалы и покрытые зеленью ущелья и после всего этого постоянно думал, как оживить свою речь, чтобы было слышно все то, что я слышал, чтобы видно было все то, что я видел»,—говорил этот мастер повествования.

Сказы «Кёр-оглы» веками бытовали в среде курдов и постоянно обновлялись, не теряя своей свежести, увлекательности и красочности.

Курдские сказы эпоса «Кёр-оглы» составляют неотделимую часть излюбленных произведений курдского народного эпического творчества.

Любя эпического героя азербайджанского народа, «Кёр-оглы», курды в своих сказах воздержались изобразить смерть его, повествуют о внезапном исчезновении его, чтобы он, незримый, продолжал оказывать помощь угнетенному народу.

Кёр-оглы, однако, не всегда останется незримым. По эпосу он снова вернется к народу и поведет его против султанов и шахов. Этот веский факт свидетельствует о несокрушимой вере народа в отношении светлого оптимизма и конечной победы.

Это и является передовым идейным содержанием гениального азербайджанского эпоса и его курдских сказов.

«ՔՅՈՒՈՎԱՆԻ» ԷՊՈՍԻ ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

ԲՈՐՕՂԼԻՆ

Ժուկով-ժամանակով մի ջալալի մարդ է լինում՝ անունն Ալի։ Էս մարդը շահի մոտ ձիապան է լինում. ամեն օր շահի ձիերի երամակը տանում է Այղը լճի ափերն արածացնելու։ Մի օր էլ ձիերն արածացնելիս, տեսնում է, որ լճի միջից երկու ձի դուրս եկան։ Շահի երամակի միջի երկու զամբիկն էլ ֆալ էին, ասել է թե՝ ժամանակն էր, որ հովատակները դրանց ծածկեին։ Լճից դուրս եկած հովատակներից մեկը գորշ գույնի է լինում, իսկ մյուսը՝ կարմիր։ Գորշ գույնի հովատակը ծածկում է իրեն նման գորշ գույնի զամբիկին, իսկ կարմիրը՝ կարմրին։ Հետո հովատակները նորից մտնում են լիճը։ Ալին էլ օրվանից առանձին խնամք է տանում էդ երկու՝ գորշ և կարմիր գույնի զամբիկներին։ Անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ։ Մի օր էլ էդ զամբիկները երկու քուռակ են բերում, գորշ զամբիկն իրեն նման գորշ քուռակ է բերում, իսկ կարմիրը՝ կարմիր։ Ալին փորձված ձիապան է լինում, իմանում է, որ էդ քուռակները ծովային ձիերից են։ Նրանց վրա հատուկ ուշք է դարձնում, խնամում։

Մի օր էլ, երբ ձիապանը արածացնում է ձիերը, հանկարծ ամպերի գոռոց է լսում։ Կայծակ է խփում։ Նա գնում է կայծակի խփած տեղը, տեսնում է, որ մի կտոր երկաթ է ընկած։ Վերցնում է էդ երկաթը ու դնում է մաղախի մեջ։ Իրիկունը ձիերի երամակը բերում է։ Գնում է տուն, գտած երկաթի կտորը մաղախի միջից հանում տալիս է կնոջը.

— Ա՛յ կնիկ,—ասում է նա,—ես էսօր, էս երկաթի կտորը կայծակի խփած տեղից գտա, պահիր, կարող է մեզ պետք գալ։

Կինը վերցնում, գցում է ջվալի տակ, ջվալն էլ դնում է տեղաշորի ծալքի տակ։ Թող դա ծալքի տակ ճնա, հիմա խոսենք քուռակներից։ Սրանք շատ նիհար են լինում, բարակ, ծուռ ու մուռ ոտներով։

Օրերից մի օր մի հարուստ մարդ հյուր է գալիս շահի մոտ։ Շահը շատ է պատվում, հյուրասիրում նրան։ Նրանք շատ սիրով են լինում, հաշտ ու համերաշխ։ Հյուրին նվեր տալու նպատակով՝ շահը կանչում է իր ձիապան Ալիին և ասում է.

— Ա՛յ Ալի, դու իմ փորձված ձիապանն ես, առավոտը երկու լավ քուռակ երամակից ջոկիր, սանձիր, բեր, որ սիրելի հյուրիս նվեր տամ։

Լսելով շահի հրամանն՝ Ալին մտածմունքի տուն է ընկնում, թե ինչպես անի, որ հյուրի համար արժանի քուռակներ ջոկի։ Մտածում է և առավոտ կանուխ ծովային ձիերից եղած էդ երկու նիհար՝ բարակ, ծուռ ու մուռ ոտներով քուռակներին սանձում ու բերում է շահի պալատի առաջ։ Շահը և նրա հյուրը պալատից դուրս են գալիս, որ տեսնեն նվեր բերած քուռակներին։ Բայց ինչ տեսնեն։ Նիհար, բարակ, ծուռ ու մուռ ոտներով քուռակներ։ Շահը շատ է ամաչում։ Էլ նվերի մասին ձեն չի հանում, մի խոսք էլ չի ասում։ Հյուրի գնալուց հետո միայն՝ կանչել է տալիս Ալուն և ասում է.

— Ա՛յ մարդ, ինչո՞ւ ինձ սևերեմ արիր հյուրիս մոտ, ինչո՞ւ իմ ձիերի երամակի մեջ ուրիշ հարմար ձի չկար, որ էդ նիհար, բարակ, ծուռ ու մուռ ոտներով քուռակները բերիր։

— Շահն ապրած կենա,—պատասխանում է Ալին,—ես ձիապան եմ, գիտեմ թե ո՞րն է հարմարը, որը՝ չէ։ Եթե էդ քուռակներն արժանի չլինեին, չէի բերի։

— Լավ, թող խոսքդ լինի,—ասում է կատաղած շահը,—հիմա էլ ես քեզ համար մի հարմար բան կանեմ, տեսնեմ՝ դրա մասին ինչ կասես։ Եվ չար շահը հրամայում է գինվորներին, որ Ալիի աչքերը տեղն ու տեղը հանեն։—Դե, հիմա, ազատ ես,—ասում է շահը։ Էդ երկու քուռակներն էլ քեզ եմ տալիս՝ աչքերիդ լույսի փոխարեն, որ լավ իմանաս թե ինչ ասել է՝ շահին ամօթով թողնել։

Ծառաները Ալու ձեռքից բռնում՝ քուռակների հետ տանում են տուն։

Ալին մի որդի է ունենում՝ Ուբիշան անունով։ Սա տեսնելով կուրացած հորը՝ սարսափած հարցնում է.

— Ա՛յ հեր, էդ ի՞նչ գուլում ու կրակ են բերել քո գլխին։

— Լա՛ռ,—ասում է հերը,—շահի արածն է, տե՛ս գլխիս ինչ անիրավություն բերեց։

— Ա՛յ հեր,—ասում է տղան,—պարտքս թող լինի, եթե կեն-

դանի ճնամ, սրանից հետո բոլոր դաժան ու չար մարդկանց Թշնամի կլինեմ։

— Լա՛ո,— ասում է կույրը,— նպատակիդ հասնելու համար՝ շատ բան կա անելու։ Իսկ հիմա դու, էդ քուռակներին տար գոմում կապիր, խնամիր, էնպես արա, որ արևի երեսը չտեսնեն։

Ութոք տգա է լինում Ուրիշանը՝ աչքաբաց, ժիր և բանիմաց։ Քուռակներին տանում է գոմը կապում, իր աչքի լույսի պես է պահում, ջրում ու կեր տալիս։ Էնպես է անում, որ լույս ներս չընկնի։ Ամեհամիս հոր ձեռքից բռնում տանում է քուռակների մոտ ցույց տալիս։ Էդ ձևով անցնում է երեք տարի։ Քուռակներն էլ էնքան են լավանում, գեղեցկանում, որ նրանց նմանը չի լինում ոչ շահի և ոչ էլ շահի երկրի ձիերի մեջ։ Ուրիշանն էդ օրերին նորից հոր ձեռքը բռնում, տանում է գոմ, իր մեծացրած քուռակներին ցույց տալիս։ Հերը ձեռք է տալիս քուռակներին, տեսնում է, որ դրանք շատ են լավացել, փարթամացել, ուժ են առել, ասում է.

— Լա՛ո, քո քուռակները ոչ մի պակասություն չունեն, իսկական ձի են դառնում։ Հիմա զգուշ կաց, որ արևի լույս չընկնի ներս։

Դրանից հետո անցնում են օրեր։ Մի անգամ Ուրիշանը գոմ մտնելիս տեսնում է, որ հավերը երդիկի վրա քջուջ անելիս՝ առաստաղը ծակել են. էդ ծակից էլ արևի մի բարակ շողք ներս է ընկել կարմիր քուռակի մեջքի վրա։ Ուրիշանը հոր վախից բարձրանում է երդիկի վրա ու ծածկում է էդ ծակած տեղը։ Հետո, երբ մի ամիս անցնում է, նորից հոր ձեռքից բռնում և տանում է քուռակների մոտ։ Հերը ձեռքը դնում է գորշ քուռակի մեջքի վրա, տեսնում է, որ շատ է լավացել

— Շատ լավ է, սրանից հետո սրա անունը Թող լինի Ղըռաթ։ Հետո ձեռքը դնում է կարմիր քուռակի մեջքի վրա և հարցնում է զարմանքով.

— Ուրիշան, լա՛ո, էս ի՞նչ բան է, ձիու մի կողքը Թուլ է, խոմ արևի լույս չի ընկել դրա վրա։

— Ա՛յ հեր,— ասում է Ուրիշանը,— Թե որ ճիշտն ես ուզում իմանալ, մի քանի օր առաջ հավերը երդիկի վրա քջուջ անելիս մի ծակ էին բաց արել, էդ ծակից էլ արևի լույսն ընկել է սրա մեջքի վրա։

— Լա՛ո,— ասում է հերը,— չպետք է լիներ, որ եղել է, էլ ուշ է դրա մասին խոսել։ Էս ձին էլ լավ է, բայց չի հասնի

Ղռաթին, նրա հետ չի կարող չափ ընկնի։ Թող դրա անունն էլ Տոռաթ լինի։ Ուրիշան, լմա,— ասում է հերը,— հիմա ինձ տար տուն։ Գնա հանդ, տես ում արտն է գութանով ցել արած, որ քուռակներիդ փոքռես, տեսնենք դրանց վազքով կարող ենք շահի ձեռքից ազատվել, թե՝ չէ։ Շահն երեք էնպիսի ձի ունի, եթե արծվի վրա էլ նստած լինես, նրանց առջևից չես ազատվի։ Երբ որ գութանով վարած արտը տեսար, գնա մի տեղից յոթն օր, յոթը գիշեր ջուր բաց թող դրա վրա, երբ տեսար, որ հողը էլ ջուր չի ծծում, կգաս Ղռաթին կհեծնես, ցելի մի ծերից կքշես մյուս ծերը, եթե ձիու ոտների տակից սև հող բարձրացավ՝ քո գլխի վրայից շատ ավեց, կազատվենք, իսկ եթե չբարձրացրեց, շահի ձիերի առջևից չենք ազատվի։

Էսպես էլ անում է Ուրիշանը։ Ղռաթին հեծնում, մի ուշ գիշեր գնում է ջրած արտի մոտ, մի ծերից քշում է մյուս ծերը։ Ջոր հողը Ղռաթի ոտների տակից դուրս է թռչում և Ուրիշանի գլխավերևը շատ է գալիս։ Սա նայում, տեսնում է, որ իսկի էլ Ղռաթի հողը չէ, կարծես նոր դուրս բերած լինի։ Վերադառնում է. փոշուց ու ցեխից մաքրում է ձիու ոտները, մեջքն ու փորը, տանում է գոմում կապում, Հետո գնում է հոր մոտ, ասում է.

— Մ՛յ հեր, Ղռաթը ոչ մի պակասություն չունի, ես որ քշում էի՝ սև հողը փոշու նման իմ գլխի վրայից շատ ավեց, իսկի նրա հողը չէր, կարծես նոր դուրս բերած լինեի։

— Լմա,— ասում է հերը,— էդ լավ է, հիմա էն մեկելին փորձիր։

Մյուս իրիկուն Ուրիշանը Տոռաթին հեծնում գնում է էդ արտի մոտ, մի ծերից քշում է մյուս ծերը։ Նայում, տեսնում է, որ Ղռաթի նման չոր հողը չի կարողանում բարձրացնել։ Ձիուց իջնում, տեսնում է դրա քրտնակալած ականջները։ Քշում գալիս է տուն։ Ձիու ոտները, մեջքն ու փորը լվանում ու տանում է գոմում կապում, գնում է հոր մոտ, ասում է.

— Մ՛յ հեր, Տոռաթը Ղռաթի նման չէր, հողը իմ գլխի վերևից շատ չավեց, դրա ականջները քրտնակալեցին։

— Լմա,— ասում է հերը,— էդ էլ կլավանա, բայց Ղռաթի հետ չի կարող գնալ, նրա տեղը չի կարող բռնել։ Իսկ հիմա, գնա երկու լավ թամբ սարքել տուր և առ երկու լավ սանձ։

Ինչպես հերն ասել էր, Ուրիշանն էպես էլ անում է. բերում է երկու լավ թամբ և երկու լավ սանձ։

— Լա՛ո,— ասում է Ալին,— մի ժամանակ ես մի երկաթի կտոր էի գտել, տվել էի օղորմած մորդ, չգիտեմ թե ո՞ւր է դրել։ Մի նայիր, տես որտեղ է։

Ուբիշանը նայում է ջվալի մեջ, տեսնում է երկաթը, բերում է հոր մոտ և ասում է.

— Հայրիկ, գտա, սա՛ է։

Հերը վերցնում է երկաթի կտորը և ասում.

— Լա՛ո, հենց սա է։ Դրանից մի կտոր երկաթ է կտրում, տալիս է տղի ձեռքը, ասում է.

— Լա՛ո, տար դարբնի մոտ, թող սրանից մի բիզ շինի քեզ համար։ Էդպես էլ անում է Ուբիշանը։ Էն ժամանակ հերն ասում է.

— Լա՛ո, էս բիզը վերցրու քեզ մոտ, ոչ մեկին ցույց չտաս, պետք կգա։ Հիմա էլ էն երկաթը տար դարբնի մոտ, թող քեզ համար մի թուր կռի։

Ուբիշանը տանում է թրագործի մոտ, ասում է.

— Վարպետ, էս երկաթից մի թուր կռիր ինձ համար, վարձիդ մասին մի մտածիր, հետո ադրբեջաներեն մի երգ է ասում.

Ուստա, մանա բիր կըլընջ սեչ,
Նա ուզուն, նա գըսա,
Օրթա, բախ, բելա
Վախտընդա, վախտընդա,
Գանըա ախրաբ դիլգահար օլար,
Խորասան փոլադընըն,
Յախշըսընը սեչ։

Իշարաթ էգանդա այլամասին հեչ,
Գանըա ախրաբ դիլգահար օլար,
Ուբիշան դեյար-քիմսադան ալմա մինանաթ,
Ուստուդան չանք շիրման սուրաթ,
Շահմար քիմի չալսամ օ սահաթ
*Իսանը ասլան, իսանը գափլան, փանլանգ օլար**։

---

* Վարպետ, ինձ համար մի թուր կռիր,
Ոչ երկար լինի, ոչ էլ կարճ,
Թող միջակ լինի,
Տեղն եկած ժամանակ՝
Սև կարիճի խայթիչի պես կտրուկ լինի։
Խորասանի պողպատից

— Ուրիշան ջան, անհոգ կաց, քեզ համար մի էնպիսի թուր կկռեմ, որի նմանը ոչ մի երկրում չլինի,— ասում է թրագործը։

Ուրիշանը գնում է հոր մոտ, հերը հարցնում է.

— Լմո, քո երկաթը տվիր, ինչ արեց։

— Հայրիկ,— ասում է տղան,— երկաթս հավանեց, ասաց, որ «էնպիսի թուր կկռեմ, որի նմանը աշխարհում չլինի»։

— Լավ ես արել, լմո, ասում է հերը։

Թրագործը շատ փորձված մարդ է լինում։ Երկաթի կտորին է նայում, տեսնում է, որ էդպիսի երկաթ չկա աշխարհում։ Դրանից մի էնպիսի թուր է կռում, որ ոչ մի ժամանակ, ոչ մի թրագործ վարպետ էդպիսի սիրուն, փայլատակող ու հատու թուր չէր կռել։ Դրա նման ուրիշ երկաթից կռում է վեց թուր էլ։ Ուրիշանի համար կռած թուրը թաքցնում, դնում է մի սնդուկի մեջ, իսկ մյուսներն՝ ուրիշ տեղ։

Մի քանի օր անցնելուց հետո Ուրիշանը հորն ասում է.

— Ա՛յ հեր, վարպետը խոսք է տվել, որ թուրս տա, գնամ բերեմ։

— Ուրիշան, լմո,— ասում է Ալին,— վարպետը քո թուրը քեզ չի տա։ Ջո Թրի երկաթը ուրիշ է։ Հիմա ականջ արա, թե ինչ պիտի ասեմ։ Էն բիզը որ դրա երկաթից շինել տվիր, տար քեզ հետ։ Վարպետը մի քանի Թրեր քեզ ցույց կտա։ Դու էդ բզով փորձիր, դիր դրանց բռնատեղի վրա, հուպ տուր, թե որ ծակեց, իմացած եղիր, որ քոնը չէ, իսկ եթե դրանցից մեկն ու մեկի վրա ապակու նման պլստաց, իմացիր, որ քոնն է։

Ուրիշանը բիզը վերցնում է, գնում է թրագործի մոտ, ասում է.

— Վարպետ, թուրս տուր։

— Ուրիշան ջան,— ասում է թրագործը,— էս սնդուկի դուռը բաց արա, քո թուրն էնտեղ է։

Ամենալավն ընտրիր,
Որ ուզածս ժամանակ կուռս պահի
Ու սև կաբիճի խայթիչի պես կտրուկ լինի։
Ուրիշանն ասում է՝ ոչ ոքից կախում չունեմ
Մի լավ պատյան Թրիս համար սարքիր,
Շահմարի նման խփելու պես,
Որ անմիջապես ցած գցի
Թե առյուծին, թե հովազին և թե վագրին։

Ուրիշանը անդուկի դուռը բաց է անում, նայում, տեսնում է, որ վեց թուր կա էնտեղ, ասում է.

— Ա՛յ վարպետ, էս վեցից որն է իմը, չեմ ճանաչում։

Վարպետը մի թուր անդուկից հանում տալիս է նրան, ասում է.

— Սա է քո թուրը։

Ուրիշանը թուրը վերցնում, բիզը դնում է դրա բռնատեղի վրա, հուպ է տալիս, տեսնում է, որ բիզը «խըրըպ» անելով ծակեց, անցավ մյուս կողմ։ Էդ ձևով փորձում է երկրորդը, երրորդը, էն ժամանակ թրագործը գլխի է ընկնում, որ Ուրիշանը բոլոր թրերը կջարդի, դրա առաջն առնելու համար ասում է.

— Ուրիշան ջան, չլինի թե սխալվել եմ, քո թուրը էն անդուկի մեջ լինի։ Գնում է թուրն էնտեղից հանում, տալիս է նրա ձեռքը։ Դե վարպետն իրեն համար է կռել՝ իմացած եղիր, թե ինչ լավ, գեղեցիկ թուր պիտի լինի։ Ուրիշանը նորից բիզը դնում է դրա բռնատեղի վրա, հուպ տալիս, տեսնում է, որ բիզն էս անգամ ապակու նման դրա վրայից պլստաց, ասում է.

— Ա՛յ, սա իմ թուրն է։

— Ներիր,—ասում է թրագործը,—շշկլվել էի։

Ուրիշանը թուրը կապում է մեջքը, վարպետի վարձը տալիս է, վերադառնում է տուն, ասում է հորը.

— Ա՛յ հեր, նա չէր ուզում թուրս տալ, բայց ես քո տղան եմ, կոտրեցի նրա երկու թուրը։

— Ա՛յ, էդպես,—ասում է հերը,—էդպես աչքաբաց եղիր, լմու։ Իսկ հիմա վեր կաց, ինչ որ ունենք տանը՝ սրան-նրան տուր, ծախիր, թեթևացրու։

Ունեցած չունեցածն Ուրիշանը հոր ասածի նման բաժանում է սրան ու նրան, ծախում, վող է դարձնում, հորն ասում է.

— Հայրիկ, բան չմնաց, բոլորը ծախեցի, մենք ու մեր ձիերը մնացինք։

— Լա՛ո,—ասում է հերը,—լավ ես արել, դե, հիմա էլ վեր կաց պատրաստություն տես, էս գիշեր պիտի վախչենք, էստեղից հեռանանք։ Եթե շահը լսի, որ էդ քուռակներից էսպիսի ձիեր են դուրս եկել, ինձ էլ կսպանի, քեզ էլ, ձիերն էլ կսեփականացնի։

Վեր է կենում Ուրիշանը, պատրաստություն է տեսնում, ձիերը թամբում, գիշերվա կեսին դրանց դուրս է քաշում, հորը Տոռաթի մեջքին է նստեցնում, իսկ ինքը հեծնում է Ղռաթին, և քաղաքից դուրս գալով, վախչում են։

Ալու հարևանները մյուս օրը տեսնում են, որ նրա տանից ոչ մարդ է դուրս գալիս, ոչ մարդ է ներս գնում, ոչ էլ ծուխ է բարձրանում։ Գնում են ու տեսնում, որ տան դուռը բաց է, ներսն էլ մարդ չկա։ Լուր են տանում շահին, թե՝

— Ալուն տված էն քուռակներն էնպիսի ձիեր դարձան, որ ամեն մեկն մի աշխարհ արժի։ Էս պիշեր Ալին փախցրել է դրանց, տարել է։

Շահը ձեռաց հրամայում է թե՝

— Շուտ նրա ետևից ընկեք, բռնեք բերեք։

Թող սրանք իրենց պատրաստությունը տեսնեն, մենք էլ Ալուց ու նրա տղայից խոսենք։ Ճաղաքից դուրս գալուց և բավական ճամփա անցնելուց հետո, Ալին ասում է.

— Ուբիշան, լաո, նայիր ետևդ, ով գիտի, կարող է մեր ետևից ընկնեն։

Ուբիշանը նայում է ետևը, տեսնում է, էնպիսի մի թոզ ու դուման է բարձրացել, որ երկնքի երեսը բռնել է. երեք ձիավոր կայծակի արագությամբ գալիս են ետևից և քիչ է մնում, որ նրանց հասնեն։

— Ա՛յ հեր,— ասում է Ուբիշանը,— երեք ձիավոր են գալիս, էս է, ուր որ է մեզ բռնելու են։

— Լաո,— ասում է Ալին,— ես էդ ձիերը ճանաչում եմ, աչքերս չեն տեսնում, նայիր, տես էդ երեքից որն է առաջից գալիս։

— Գորշ ձին է առաջից գալիս,— ասում է Ուբիշանը։

— Լա՛ո,— ասում է Ալին,— քշիր վշոտ, մացառոտ, հարոս տեղեր։ Գորշ դույնի ձին նուբը մարմին ունի, էդպիսի տեղերում չի դիմանա, ետ կմնա։

Ուբիշանը երբ քշում է վշոտ, մացառոտ տեղեր, գորշ դույնի ձին չի դիմանում, ետ է մնում. կարմիր ձին է առաջ ընկնում։ Ուբիշանը նայում է ետև, ասում է.

— Հայրիկ, հիմա կարմիր ձին է գալիս։

— Լա՛ո,— ասում է հերը,— քշիր քարոտ, քարքարոտ տեղեր, նրա սմբակները վատուկ են, քարերին չեն դիմանա, ետ կմնա։

Ուբիշանը քշում է, քարքարոտ տեղերը, կարմիր ձին չի դիմանում, ետ է մնում։ Էս անգամ էլ են ազատվում։ Մի քիչ անցնելուց հետո, Ուբիշանը նորից է նայում ետև, տեսնում է, որ սև ձին է գալիս, ասում է.

— Հայրիկ, հիմա էլ սև ձին է գալիս։

— Լա՛ո,— ասում է հերը,— քշիր դուբան (հարթ) տեղեր, վոշին կմանի նրա քթածակերը կբռնի, նա էլ դրան չի դիմանա, էտ կինա։

Էդպես էլ լինում է, նրանք էտ են անում։ Ուրիշանը և հայրը քշում են ձիերը մինչև որ հասնում են Իրանի ու Թյուրքիայի սահմանների միջև ընկած մի բարձր սարի և նոր միայն իջնում են ձիերից։ Էն ժամանակ Ալին ասում է.

— Ուրիշան, լա՛ո, ես շատ եմ հոգնել, ձիերդ օրուկիր, էստեղ ամայի տեղ է, հակիր դրանց, քունս գալիս է, քնեմ։ Վրնեղուս ժամանակ հարավի կողմից մի ամպ կբարձրանա, մի հորդ անձրև կգա, հեղեղ կբարձրանա, էն ժամանակ ինձ արթնացրու, որ ջուր խմեմ, ծարավս կոտրեմ։ Էս ասում ու քնում է։

Ուրիշանն իր ձիերի մոտից չի հեռանում, նրանցով ուրախանում է, դե՛ ամայի տեղ, խոտն էլ առատ՝ հազար գույնի ծաղիկներով, էլ ի՞նչն էր պակաս։ Մեկ էլ երկնքին է նայում, տեսնում է, որ հոր ասածի նման՝ հարավից մի վրանի չափ ամպ բարձրացավ, ինչքան գնաց մեծացավ։ Մի էնպիսի անձրև տեղաց, որ հեղեղ բարձրացավ։ Ուրիշանը ծարավ է լինում։ Մինչև գնում է մի փոս քարից ջուր է խմում, վերադառնում քնած հոր մոտ՝ արթնացնելու, մեկ էլ տեսնում է՝ անձրևը կտրվեց, հողն առաջվա նման չորացավ։

— Լա՛ո,— ասում է հերը,— ինչու՞ շուտ չարթնացրիր։

— Հայրիկ,— ասում է Ուրիշանը,— ես ծարավ էի, մինչև գնացի փոս քարից անձրևաջուր խմեցի, վերադարձա, քեզ ձեն տվի, մեկ էլ տեսա անձրևը կտրվեց, արևը դուրս եկավ, հողն էլ տեղն ու տեղը չորացավ։

— Լա՛ո,— ասում է հերը,— բախտը քեզ ժպտաց, վալլահ, եթե ես խմեի, աչքերս կլավանային, բայց բախտը քեզ է ժպտացել։

— Հայրի՛կ,— ասում է Ուրիշանը։

— Ջա՛նե,— ասում է հերը։

— Սրանից հետո,— ասում է Ուրիշանը,— Պարսկաստանի երկիրը մեզ համար հարամ է, արի գնանք Ստամբուլ։ Մի մոտիկը, ես էնտեղ կաշխատեմ, քեզ կպահեմ։

— Լա՛ո,— ասում է հերը,— սրանից հետո դու գիտես, մեկ է՝ աչքերս չեն տեսնում, քո ուզածն արա։

Ուրիշանն իր հորը նստեցնում է ձիուն, ինքն էլ հեծնում է մյուս ձին, քշում գնում են Ստամբուլ քաղաք, մի տուն են վարձում, մի երկու տարի ճնում են էն-

տեղ։ Էստեղ՝ էլ տղային Ուբիշան չեն ասում, հոր կուրության պատճառով ասում են Ֆորօղլի, որ նշանակում է կույրի տղա։

Դրանց հարևաններից մեկը վեզիրի ծառան է լինում։ Մի օր դա վեզիրի դիվանում ասում է.

— Վեզիրն ապրած կենա, ձեր ձիերը լավ չեն որսի համար, որսի գնացող մարդը պետք է Ֆորօղլու ձիու նման ձի ունենա։

Վեզիրը էդ խոսքը լսում է թե չէ, գնում է թագավորի դիվանը և ասում է.

— Թագավորն ապրած կենա, էսօր իմ ծառան էսպես մի բան ասաց, թե Ֆորօղլին մի էնպիսի ձի ունի, որի նմանը աշխարհումս չկա, որսի գնացող մարդը,—ասում է,—պետք է էդպիսի ձի ունենա, որ իր նպատակին հասնի։

Թագավորը հրամայում է թե՝

— Վեզիր, ծառայիդ ուղարկիր, թող գնա էդ մարդուն կանչի, բերի ինձ մոտ։

Վեզիրն ուղարկում է իր ծառային։ Նա էլ գնում կանչում է Ֆորօղլուն, բերում է թագավորի մոտ։

— Դու ես Ֆորօղլին,—հարցնում է թագավորը։

— Հրամանքդ բարի, ես եմ,—պատասխանում է Ֆորօղլին։

— Վաղը,—ասում է թագավորը,—պիտի գնամ էս ինչ սարը որսի, դու էլ ձիդ հեծիր արի վեզիրիս ձիավորներին միացիր, որ միասին գնանք։

— Հրամանքդ գլխիս վրա,—ասում է Ֆորօղլին,—կգամ։

Մյուս առավոտ, թագավորի նշանակած ժամին, Ֆորօղլին հեծնում է ձին, գալիս է վեզիրի ծառաներին միանում։ Քաղաքի մարդիկ, թագավորն ու վեզիրը, երբ տեսնում են Ֆորօղլուն ու նրա ձին, ծիծաղում են ապշած։ Ծնալվեր Ֆորօղլին կարծես ձիու հետ մեկ մարդ, մեկ հոգի էր դարձել։ Ձին էլ էնպիսի ձի է՝ ամպերը է պատռում, զեղեցիկ աղավնու նման ուզում է թեղից թռչի, սարերն ընկնի։ Թագավորը մի սրտով չէ, քսանհինգ սրտով նրա ձին հավանում է, ինքն իրեն ասում է. «Էս ձին ինձ է արժանի»։ Նայում է սարի կողմ, տեսնում է մի հոտ այծյամներ են գալիս։ Մինչև թագավորը, վեզիրը, վեզիրի ծառաները մի այծյամ են որսում, Ֆորօղլին՝ երկուսն է որսում։ «Սա ձիու շնորհքն է,—ասում է թագավորն ինքն իրեն։

Մինչև ես ու ծառաները մի այծյամ որսացինք՝ նա երկուսը որսաց։ Վալլահ, էս ձին ինձ է արժանի, Քորօղլուն չեմ տա։

Իրիկնապահին որսից վերադառնում են։ Ամեն մեկը գնում է իր տունը։ Թագավորը վհզիրի ծառաներին ուղարկում է Քորօղլու եաևից, կանչում է իր մոտ։ Քորօղլին գալիս է թագավորի պալատը, նրա առջև խոնարհվում է։ Նստելու տեղ են ցույց տալիս։ Քորօղլին նստում է, թագավորն ասում է.

— Քորօղլի, լա՛ո, դիտես ես ինչո՞ւ համար եմ քեզ կանչել, ես նրա համար եմ քեզ կանչել, որ դու քո ձին ինձ տաս։

— Թագավորն ապրած կենա,—ասում է Քորօղլին,—ձիս անհանգիստ ձի է, մարդու չի թողնում մոտենալ, վախենամ ծառաներիդ զարկի, ինձ մեղադրեն։

— Ա՛յ մարդ,—ասում է թագավորը,—դու տուր, մնացածը՝ քեզ ի՞նչ։ Քորօղլին ճարը կտրած գնում է ձին բերում թագավորի պալատի առաջ, տանում է գոմում կապում։ Էհ, Քորօղլու Ղաաբն՝ ի՞նչ ես կարծում, իսկի մարդ կթողնի, որ իրեն մոտենա։ Նրա գլխավերևից ծակում են պատը, ջուրն ու կերը էդ անցքով են տալիս։ Էհ, Ղաաբն իսկի առանց թիմարի կմնա։ Շատ է բրդոտում։ Թագավորը կանչում է վեզիրին, ասում է.

— Վեզիր, թող ծառադ գնա Քորօղլուն կանչի, բերի էստեղ։

Ծառան գնում, կանչում է Քորօղլուն, տեսնում է, որ նա չալիս է, հարցնում է.

— Տղա Քորօղլի, ինչո՞ւ ես լաց լինում։

— Իմ ձիու դարդից,—պատասխանում է նա։

— Ա՛խ, թագավորը քեզ կանչում է,—ասում է ծառան։

Քորօղլին գնում է թագավորի պալատը, թագավորն ասում է.

— Քորօղլի, եկա՞ր։

— Եկա, թագավոր,—պատասխանում է Քորօղլին։

— Տղա՛ս,—ասում է թագավորը,—քո խոսքն է, ձիդ անհանգիստ ձի է, ոչ մի մարդ մոտ չի թողնում։ Օրը երկու երեք անգամ պիտի գաս, իմ թուլլուվուբյամբ, իմ հրամանով թուղթ վերցնես, գնաս ջուր ու կեր տաս դրան, թիմարես։ Քո վարձն էլ, ամսականդ էլ՝ կտամ։

— Թագավորն ապրած կենա,—ասում է Քորօղլին,—էդ հնարավոր է, բայց ոնվ գիտի, կարող է պետք լինի ես անժամանակ գամ, դրա համար էլ թուղթ պիտի տաս, որ քո պահակներն ինձ թուլլ տան ներս մտնեմ, որ չկտրեն ինձ։

Թագավորը թուղթ է տալիս թե՝ երբ էլ գաս, ոչ մի մարդ

իրավունք չունի առաջդ կտրել, ոչ մի մարդ իրավունք չունի քեզ ներս չթողնել։ Ծորօղլին թուղթը դնում է գրպանը. օրը երեք անգամ դնում է ձիուն տեսնում։

Նա գիդար, բաղդան գիդար,
Բաղվանչիդան նա գիդար.
(Ինչ որ գնում է՝ այգուցն է գնում,
Այգեպանից լինչ է գնում)։

Ջին էնպես է խնամում, որ իր աչքի լույսից էլ լավ։ Պարապ ժամանակն էլ քաղաքում ման է գալիս։

Ջունևոր ու խեղճ մարդիկ քաղաքում շատ են լինում։ Դրանք լսում են, որ Ծորօղլու ձին զոռով տարել են։ Էդ մարդիկ ման են գալիս, որ Ծորօղլուն տեսնեն։ Մի անգամ էլ հանդիպում են։ Էդ խեղճ չքավորները Թվով երեսուն-քառասուն հոգի են լինում։ Դրանք ու Ծորօղլին գաղտնի կերպով մխանում են, երդվում և իրար մեջ պայմանավորվում են՝ թե ինչ պիտի անեն։ Դրանք ասում են.

— Ծորօղլի, դու մեզ համար մի ճար արա, եղիր մեր մեծը, մեր հերը, ինչ ասես, մենք կանենք, քեզ կլսենք։

— Տղերք,— ասում է Ծորօղլին,— հիմա ամեն մեկդ թող գնա իր տունը։ Տանն ինչ ունեք-չունեք՝ ծախեք, փող դարձրեք, հետո եկեք մի ճամփա գանենք մեզ համար։ Բայց ես էս երկրացի չեմ, էս երկրում որ սարը բարձր է, անասիկ է, ցույց տվեք, որ գնանք էնտեղ մնանք։

— Էդպիսի տեղ Զարդաղլի Զամլիրելն է, աշխարհի բոլոր հարուստ մարդկանց քարավանները նրա մոտով են անցնում ու գառնում։ Ես էդ սարին, հողին ու ջրին լավ ծանոթ եմ,— ասում է մեկը։

— Էդ լավ ասիր,— նրա խոսքը կարճ է կտրում Ծորօղլին,— դե հիմա գնացեք ձեր տները ծախեք, փող դարձրեք, ձեզ հետ վերցրեք մենակ մի ձի և մի հրացան։

Ինչպես Ծորօղլին ասել էր, էդ մարդիկ էդպես էլ անում են, գալիս են նրա մոտ, ասում.

— Ծո՛րօղլի, ինչ որ ասացիր, մենք արինք, պատրաստ ենք։

— Իրիկունն էսինչ ժամին,— ասում է Ծորօղլին,— հավաքվեցեք էսինչ տեղը, ես կգամ։

Նրանք հավաքվում են։ Ծորօղլին ասում է.

— Հիմա էստեղ մնացեք, ես կգամ։

Քորօղլին գնում, Տոռաթին թամբում է, հորը դնում ձիու վրա, բերում է իր ընկերների մոտ, ասում է.

— Ընկերներ, հորս նայեք, էս է, մի տեղ կգնամ, կգամ։

Գիշերվա ուշ ժամին նա թուղթը տանում տալիս է թագավորի պահակին։ Պահակը կարդում է։ Տեսնում, որ թագավորը գրել է. «Եթե Քորօղլին կես գիշերին էլ ձիս հեծնի, ման բերի, ոչ մի մարդ թող չառարկի, չխոսի»։

— Ա՛յ ախպեր,— ասում է պահակը,— թագավորի հրամանն է, չնայած ուշ ժամանակ է, բայց թագավորի հրամանը պարտավոր եմ կատարել, համեցիր ներս գնա։

Քորօղլին ներս է մտնում, մի լավ թիմարում է Ղռաթին, թամբում, հեծնում և դուրս է գալիս։ Բշում—իրեն սպասող ընկերներին հասնում։ Սրանք էլ՝ յա՛ ալլահ ասելով, միանում են նրան, դուրս են գալիս քաղաքից, քշում են դեպի Զարդաղլի Զամլիրել։

Գնում են, շատ ու քիչ, մի օր էլ հասնում են Զարդաղլի Զամլիրել սարի գագաթը։ Քորօղլին նայում, տեսնում է, որ էդ սարը ծածկված է խիտ անտառով, մի շատ անանցանելի վայր է, իսկական վախտաականների տեղ է։ Սարի ներքևում դաշտ է, չորս կողմը արոտավայրեր ու մարգագետիններ են։ Ամեն կողմից լսվում է ջրերի խշխշոցը, էստեղ ու էնտեղ ակնաղբյուրներ են, էնքան ճամփաներ կան, կարծես Ադրբեջանի ճամփաները լինեն։ Իրենց վրաններըը խփում են էնտեղ, սկսում են քողտիկ ու հյուղեր շինել։

Թագավորը լսում է, որ Քորօղլին իր հոր և մի քանի ընկերների հետ վախել է, Ղռաթին էլ՝ տարել։ Ոչ մի մարդ նրա ետևից չի ուղարկում, վախից ոչ մեկը հանձն չի առնում նրան հետապնդել։ Քորօղլին էլ ապատան գտնելով էնտեղ, մի օր ասում է կույր հորը.

— Երդվում եմ, որանից հետո, խանների ու հարուստների, վաճառականների ու քարավանապետների թշնամին լինել և սկսում է պնացող-դարձող քարավանները սեփականացնել, տանել Զարդաղլի Զամլիրել։

Օրերից մի օր Քորօղլին նայում է ու տեսնում, որ մի մեծ քարավան է գալիս։ Գնում է, առաջը կտրում ու ասում.

— Քարավանապե՛տ, դու ո՞ւմ քարավանապետն ես։

— Ես,— պատասխանում է նա,— Ստամբոլ քաղաքի թագավորի քարավանապետն եմ։

Ֆորօղլին նրա ամբողջ ունեցվածքը խլում է և ասում.

— Ֆարավանապե՛տ, քեզ ձեռք չեմ տա, վերադարձիր Թագավորին ասա, թե ինչքան զորք ունի, Թող հավաքի գա Զարդաղլի Ջամլիրել կռվի։ Թե ուժով է Թող էս անգամն էլ ձիս խլի։

Ֆարավանապետը վերադառնում է, իր լսածն ու տեսածը պատմում է Թագավորին։ Էհ, Թագավորն իրենից ինչ էր ներկայացնում, կամ նրա ուժն ինչ էր, որ գնար Զարդաղլի Ջամլիրել։

Ֆորօղլին էս անգամ սկսում է իր շուրջը հավաքել աշխարհքում քաջ, արտոտ մարդկանց։ Ամենից առաջ Ֆոսա Ֆանհանին է բերում, նրանից հետո՝ Ֆոսա Սաֆարին, նրանից հետո՝ Եղի Գեյան Նալ Ղռան Դամբչօղլուն, նրանից հետո՝ Ալի Բարաթլուն, Զըլթ Ղըլիչ Ղոլի Ղովաթլին, Ֆոսա Հասան Ղադրդիին։

Ֆորօղլին իր քաջ ընկերներով էս անգամ բարձր սարերի վրա բերդեր է շինում։ Ամեն տեղ հարուստների ունեցածը խլում են։ Գեղեցիկ աղջիկներին առնելիս, կամ նրանց անուննները լսելիս՝ գնում բերում ամուսնացնում են՝ իրենց ընկերների հետ։

Մի օր էլ Ֆորօղլին իր քաջերով գնում է դեպի Թաքյալթու սարը։ Էնտեղ հասնելով, նայում է հեռադիտակով, տեսնում է, որ Զևա աղբյուրի կողմից մի մեծ քարավան դուրս եկավ։ Ֆարավանապետն էլ լսել էր, որ Թաքյալթու սարի վրա ղաչաղներ կան։ Նա էլ աղբյուրի մոտից հեռադիտակով նայում, տեսնում է, որ սարի վրա արծվի նման ինչ որ սավեր է երևում։ Էն ժամանակ դիմելով իր ծառաներին, ասում է.

— Տղե՛ք, սպասեցեք, ուղտերի առաջը կտրեք, Թաքյալթուի վրա մարդիկ են երևում։

Ֆորօղլին էդ տեսնելով՝ ասում է. «Կա՝ չկա, քարավանապետը մեզ տեսավ։ Թամբի տակ դրվող մի Թաղիք է բերել տալիս, հետո մի շերեփ մածուն է վերցնում, էդ Թաղիքը գցում է ներքև, դրա եռևից էլ մածնով շերեփը գցում, ինքն էլ տեղն ու տեղը պահ է մտնում։ Ֆարավանապետն էդ բանը տեսնելով՝ ասում է.

— Լա՛ո, արծիվ էր, ծրտեց, Թռավ գնաց։

Ֆարավանը նորից շարունակում է իր ճամփան։ Ֆորօղլին էլ գալիս է քաջերի մոտ, ասում է.

— Ընկերնե՛ր, քարավանը գալիս է, դե՛, հեծեք, Փառնավուտ ձորի կողմից դրա առաջը կտրեք, ինքն էլ մյուս կողմովը է գնում։

Քարավանը գալիս է։ Մեծ քարավան է լինում։ Շահի քարավանն է լինում, էն շահի, որ Քորօղլու հոր աչքերը կուրացրել էր։ Քորօղլու քաջերը դրա առաջը կտրում են, քարավանապետն ապշած ասում է.

— Հերս Թող խեր չտեսնի։ Հերս ու մերս մի անգամ իրար հետ տանը նստած խոսում էին դեսից ու դենից։ Ես մորս մոտ էի։ Հերս ինձ կանչեց։ Ես բորիկ ոտս դրեցի հատակի վրա՝ գնացի մոտս։ Էդ օրվանից էլ աչքիս լույսը պակասեց, էդ էր որ չկարողացա հեռվից ձեզ ջոկել։

— Քարավանապե՛տ,— ասում է Քորօղլին,— էդ խոսքիդ համար քեզ չեմ սպանի, սպրանքիդ կեսն էլ քեզ կտամ։ Իր նիզակը դարձնում է կանգուն (հալաբի), ինչքան Քիրմանի կտոր է լինում, ղումաշ, ատլաս ու խաս՝ չափում է, կեսն իրեն է վերցնում, մյուս կեսը քարավանապետին է թողնում, ասում է.

— Գնա շահին ասա, որ ես նրա կուրացրած ձիապանի տղան եմ, Ուրիշանն եմ՝ Քորօղլին։ Թող լավ իմանա, սրանից հետո ես կլինեմ նրա Քշնամին, Քե որ հարկ լինի՝ նրա գլուխը կթռցնեմ, Քե որ հարկ լինի՝ նրա քարավանը կթալանեմ, նրան հանգիստ, օր ու արև չեմ տա։

Քարավանապետը վեր ու վոշման ետ է գառնում։ Քորօղլու ասածը հայտնում է շահին։

Թող դրանք էնտեղ ճնան, հիմա էլի Քորօղլուց լուր տանք։

Քորօղլին ու նրա քաջերը հեծնում են ձիերը՝ վերադառնում են Զարդաղլի Զամլիքել։ Շահի քարավանից խլված շամ ու դուբնին, Քիրմանի շալերը, ատլասն ու խասը, դնավուզը Քորօղլին իր քաջերին է բաժանում։ Նրանք էլ տանում են իրենց կանանց համար, քեֆ և ուրախություն են անում։ Քեֆի ժամանակ քաջերից մեկն էսպես է ասում.

— Տղերք, մենք իսկի լավ մարդ չենք։ Տեսնք, Քորօղլին քոլորիս ամուսնացրեց, իսկ ինքը մինչև հիմա էլ չի ամուսնացել։ Մենք էլ դրա մասին իսկի չենք մտածում։

— Իսկ նրա համար մի արժանի աղջիկ ո՞րտեղից գտնենք, ասում է մի ուրիշը։

— Որտեղի՞ց,— ասում է երրորդը,— ա՛յ, Ջավարլի վաշայի աղջիկը՝ Նիգար խանումը, արժանի է նրան։

Քորօղլին էս խոսակցությունը լսելով՝ ասում է.

— Ո՛վ քաջեր, իսկի մի մտածեք, մինչև ես իմ աչքով էդ աղջկան չտեսնեմ, չհավանեմ, չեմ ամուսնանա։ Ու պատրաս-

տուքյուն է տեսնում, Ղռաթին դուրս է քաշում, հեծնում և գնում է դեպի Ստամբոլ քաղաքը։ Մի պառավի տան առջև ձիուց իջնում է, Ղռաթին տանում գոմում կապում։

— Ա՛յ նանի,—ասում է Ֆորօղլին,—էս ոսկիները վերցրու, մենակ մի պայմանով, որ ոչ մեկը չգա, ձիս չտեսնի։ Ու մի երկու օր մնում է էդ պառավի տանը։ Պառավն էլ ինչ որ պետք է լինում անում է։ Մի օր էլ Ֆորօղլին ասում է.

— Ա՛յ նանի, գիտե՞ս ինչի համար եմ եկել։ Ես Ջավարլի փաշայի աղջիկ Նիգար խանումի համար եմ եկել։ Դու պետք է Նիգար խանումին ինձ ցույց տաս։

— Ա՛յ խենթ,—ասում է պառավը,—քեզ պես հազարներն են եկել-գնացել, բայց չեն կարողացել Նիգար խանումին տեսնել։

— Ինչպե՞ս թե,—հարցնում է Ֆորօղլին։

— Էնպես,—պատասխանում է պառավը,—ճիշտ է, դու լավ, գեղեցիկ երիտասարդ ես, բայց դու արի տես՝ Նիգար խանումը ոչ մի մարդու չի թողնում իրեն մոտ, քեզ էլ չի թողնի։

— Նանի՛,—ասում է Ֆորօղլին,—կամ տանդ մեջ ինձ պիտի սպանես, կամ էլ Նիգար խանումին ինձ պիտի ցույց տաս, հիմի երկուսից մեկը որոշի։

— Լա՛ո, ասում է նա,—էդպես մի ասա, ինչ որ ձեռքիցս գա, ես քեզ կօգնեմ։ Հիմա պետք է իմանալ, թե Նիգար խանումը ե՞րբ է գնում այգի զբոսնելու։ Երբ գնում է այգին, իր վրանը խփում է, երեք օր էնտեղ է մնում, էն ժամանակ կարող է, որ դու տեսնես։

Մյուս օրը պառավը մի ճիպոտ է վերցնում ձեռքը, գնում է Նիգար խանումի քյոշկ ու սարայի կողմը։ Նայում, տեսնում է, որ դռան առաջ մի ագռավին է նստել։ Պառավը նրան սիրաշահելով ասում է.

— Լա՛ո, քո արևշատության խաթեր համար, իմ մի հարցին ճիշտ պատասխան տուր, ասա՛, Նիգար խանումը ե՞րբ է էնտեղից դուրս գալիս։

— Նանի՛,—պատասխանում է աղջիկը,—ուրբաթ օրերն է գնում էնտեղ լողանում, երեք օր հանգստանում է, հետո վերադառնում է տուն։

Պառավը էս լսելով վերադառնում, գալիս է Ֆորօղլուն ասում.

— Նիգար խանումն ուրբաթ օրերն է գնում այգի, մար-

մարի հավուզում լողանալուց հետո՝ երեք օր մնում է էնտեղ-զբոսնում, նոր միայն վերադառնում քյոշկ ու սարայը։

— Նանի՛,—հարցնում է Ֆորօղլին,—իսկ դու այգու ճամփան գիտե՞ս։

— Գիտեմ, պատասխանում է պառավը։

Ֆորօղլին երկու ոսկի է տալիս նրան։ Հետո իր շորերը փոխում մի ձեռք հին շոր է հագնում և պառավի հետ գնում է դեպի այգի։ Այգու դուռը բաց են անում, պառավը ներս է մտնում։ Նայում է, տեսնում, որ Նիգար խանումը հավուզից դուրս է եկել, շորերը հագել, զբոսնում է։ Աղախինները գալիս են նրա առաջը կտրում և ասում.

— Ա՛յ պառավ, դու էստեղ ինչ գործ ունես։

— Լա՛ո, —ասում է նա,—եկել եմ, որ խանումին տեսնեմ, գործ ունեմ։

Աղախինները լուր են տալիս խանումին, նա էլ ասում է.

— Խեղճ կին է, թող գա, տեսնենք ինչ է ուզում։

Պառավը գնում է խանումի մոտ։ Ֆորօղլին էլ խեղճ-խեղճ սպասում է մի տեղ։ Խանումը պառավից հարցնում է.

— Ա՛յ նանի, էն խեղճ մարդն ո՞վ է, որ քեզ հետ է եկել։

— Էդ մի գրբաց է,—պատասխանում է պառավը,—բախտու մուրազի գիրն է բաց անում։

Աղախինները էդ լսելով՝ կանչում են Ֆորօղլուն, նրա չորս կողմը բռնում և խնդրում են, իրենց համար մի բան ասի։ Նա էլ ամեն մեկին մի բան է ասում, թե՝

— Ֆո բախտը կկապվի էսպիսի մարդու հետ, քոնն էլ՝ էնպես։

Աղջիկները ծիծաղում և հարցնում են.

— Բա էս գեղեցիկ, նուրբ ու նազուք խանումի բախտն ում հետ կկապվի։

— Նրա բախտը,—ասում է նա,—Զարդաղլի Զամլիբելցի Ֆորօղլու հետ կկապվի։

Նիգար խանումը ծիծաղում և ասում է.

— Ա՛յ խեղճ, Ֆորօղլին էստեղից փախել, դաշտաղ է դարձել, ձրաեղից պիտի գա։ Բայց ինչ որ ճիշտ է՝ ճիշտ, եթե Ֆորօղլուն տեսնեի, ես կուզենայի էդպիսի դաշտաղ կին դառնալ։

— Նիգար խանում,—ասում է պառավը,—եթե օրերից մի օր Ֆորօղլուն բերեմ ձի նստած, հրացանը ուսին, ինչ կտաս։

— Եթե ես սիրեմ,— ասում է Նիգար խանումը,— ինչ ուզես, կտամ, իսկ եթե չսիրեմ, թող գնա:

— Նիգար խանում,— ասում է պառավը,— ինձանից քեզ խրատ չի հասնի: Դե երդվիր, որ Քորօղլուն փորձանքի մեջ չես գցի:

— Ա՛յ պառավ,— ասում է Նիգար խանումը,— երդվում եմ, իմ սրտով էլ լինի, իմ սրտով էլ չլինի, նրան չեմ ճլասի, փորձանքի մեջ չեմ գցի: Նանի,— շարունակում է նա,— էսօր ուրբաթ է, ամեն ուրբաթ օր գալիս եմ էս այգին: Մյուս ուրբաթ օրն էլ կգամ, դու պետք է նրան քեզ հետ բերես:

Քորօղլին էլ լսում է դրանց խոսակցությունը: Նա և պառավը վերադառնում են տուն: Նիգար խանումն էլ ադախիններով վերադառնում է քյոշկ ու սարայը: Մյուս ուրբաթ օրը Քորօղլին զարթնում է, հեծնում է ձին, քշում գնում է Նիգար խանումի այգու դռան մոտ կանգնում: Նիգար խանումը նստած է լինում, նրա ադախիններն էլ՝ առաջը կանգնած: Քորօղլին ներս է մտնում: Նիգար խանումը նայում և տեսնում է Քորօղլին մի էնպիսի ձի է նստել, որ քոչելիս ամպեր է իրարից բաժանում: Նիգար խանումը տեսնելով նրան՝ սրտանց հավանում և ասում է.

— Համեցի՛ր, ձիուց իջիր:

— Ես չեմ իջնի— ասում է Քորօղլին,— եթե դու քո տված խոսքի տերն ես, մոտեցիր, իսկ եթե չէ, կգնամ:

— Ես իմ խոսքի տերն եմ,— պատասխանում է Նիգար խանումը:

Քորօղլին նրա ձեռքից բռնում գնում է ձիու գալակը և հայդե, քշում գնում է: Նույն օրը հասնում է Զարդաղլի Զամլիբելի գագաթը: Էհ, Ղռաթին լինչ.

Բինդըմ Ղռաթ, ալդըմ մուրադ*:

Զարդաղլի Զամլիբելում յոթն օր, յոթը գիշեր Քորօղլու ու Նիգար խանումի հարսանիքն են անում, ուտում, խմում, քեֆ անում:

Ներանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր երեխաների մուրազին[1]:

---

* Ղռաթին հեծա, նպատակիս հասա:

ՓՈՐՕՂԼԻՆ ԵՎ ԻՐ ՀԱՅՐԸ

Փորօղլու հերը՝ Ալին, ապրում էր Մաքու քաղաքում։ Նրա տունը քուրդ քոչվորների ճամփի վրա էր։ Մի անգամ ջալալի քոչվոր քրդերը գալիս անցնում են նրա տան մոտից։ Նրանց հետ լինում է մի ձիավոր աղջիկ։ Անցնելու ժամանակ մի գեր խոյ ոչխարի հոտից ետ է ընկնում, չի կարողանում առաջ շարժվել։ Ալին նայում, տեսնում է, որ էդ աղջիկը մի ձեռքով բարձրացրեց էդ խոյը, դրեց իր առջև ու ձին քշեց, գնաց հասավ քոչվորներին։ Շատ է զարմանում Ալին ու էլ չի սպասում, իր ձեռքի բահը դնում է մի տեղ, ընկնում է նրանց ետևից՝ գնում։

Քոչվոր ջալալիները գնալով հասնում են մի տեղ։ Սա տեսնում է, որ էդ աղջիկը նորից մի ձեռքով խոյը բռնեց, ձիուց ցած բերեց ու դրեց մի կողմ։ Նայում, տեսնում է, որ էդ աղջիկը մի ոտից կաղ է։ Քոչվորները երբ մի քիչ հանգիստ են առնում, նստում են հացի, մեկ էլ տեսնում են կանգնած Ալուն, ասում են.

— Էս մարդը՝ զարխը մարդ է։ Կանչեք, թող գա մեզ հետ հացի նստի։

Նա էլ գալիս է, բարև է տալիս, բարև է առնում։

Ուտում են,

Ալին էդ ժամանակ տան մեծավորին ասում է.

— Զարմանում եմ։

— Ինչո՞ւ ես զարմանում,—հարցնում է մեծավորը։

Ասում է.—Քեր էս աղջիկը հասակն առել է, ինչո՞ւ մինչև հիմա մարդու չեք տվել։

— Մեր աղջիկը,—ասում է տան մեծավորը,—մի ոտից կաղում է, դրա համար էլ մինչև հիմա ոչ մեկը չի եկել, չի ուզել։

— Կաղ է, թող կաղ լինի, տվեք ինձ, խնդրում է Ալին։

Սրանք էլ նայում են նրան, տեսնում են, որ լավ մարդ է, ասում են.

— Ալի, թող քեզ հալալ լինի, տար։

Աղջկան ու Ալուն ամուսնացնում են։

Մի ամսից հետո Ալին գալիս աղջկան տանում է տուն։ Ինն ամիս, ինն օր հետո էս աղջիկը մի տղա է բերում. տղի անունը վերշան են դնում։

Վերշանի հերը՝ Ալին, հայտնի ձիապան է լինում։ Էդ օրերին հիվանդություն է ընկնում Իրանի ձիերի մեջ։ Թեհրանի շահը Ալուն տանում է իրեն մոտ։ Սա բուժում և առողջացնում է նրա ձիերը։ Շահը էդ տեսնելով՝ Ալու համար ամսական է նշանակում, էլ չի թողնում, որ վերադառնա տուն, ասում է.

— Պետք է ինձ մոտ մնաս։

Ալին տասնչորս տարի մնում է նրա մոտ։ Մի օր ձիերն արածացնելիս՝ սա նայում տեսնում է, որ մի հովատակ ծովից դուրս եկավ, եկավ շահի գորշ գույնի զամբիկը ծածկեց ու նորից մտավ ծովը։

Հենց էդ օրերին Ալու հետ աշխատող ձիապանները բամբասում են նրան՝ գնում են շահի մոտ, ասում են.

— Ալին ուզում է վախչել։

Շահը կանչում է Ալուն ու հրամայում է, որ նրա աչքերը հանեն։ Ասում է. «Էլ չի կարող վախչել, լավ ձիապան է, ձեռք տալով էլ կարող է ասել, թե ո՞րն է լավը, որը՝ վատ»։

Հիմա Վերշանից խոսենք։

Վերշանը գառնում է տասնչորս տարեկան։ Մի օր ասում է. «Գնամ հորս տեսնեմ» ու վեր է կենում, գալիս է Թեհրան քաղաքը, պատահողներից հարցնում է թե՝

— Քաղաքի ձիապանը ո՞րտեղ է։

— Ծովի մոտ մի վրան կա, էնտեղ ձիերի մոտն է, պատսխանում են էդ մարդիկ։

Վերշանը գնում է դեպի հոր վրանը։

Նայում, տեսնում է, որ հորը կուրացրել են, ասում է.

— Ա՛յ հեր, քեզ հետ ինչ է պատահել։

— Տղա՛ս,—ասում է հերը,—շահն ինձ կուրացրեց, չթողեց, որ վերադառնամ տուն։ Հիմա գնա ծովի ափ, մի գորշ գույնի զամբիկ կա, տես ծնո՞ւլ է թե՝ չէ։

Վերշանը գնում է ձիերի մեջ, նայում, տեսնում է, որ

զամբիկը ծնել է, մի գորշ գույնի քուռակ է բերել։ Գալիս է հոր մոտ, ասում է.

— Հայրիկ, զամբիկը ծնել, մի գորշ գույնի քուռակ է բերել։ Հիմա ինչպես անենք, որ քեզ տանեմ, ես ուզում եմ քեզ տանել, բայց դու չես կարող գալ, ինչ անենք։

— Տղաս,—ասում է հերը,—դու չես կարող ինձ տանել, գնա տանդ մասին մտածի։ Ես ամսականս ամսեամիս քեզ կուղարկեմ, մյուս տարի էս ժամանակ էլի, տես, արի ինձ մոտ։

Վերշանը վերադառնում է տուն։ Էդ օրից անցնում է մի տարի։ Մի օր Ալին ասում է շահին.

— Շահ, խնդիրք ունեմ, որ վարձիս փոխարեն էն գորշ քուռակը տաս ինձ։

— Թող քեզ լինի,—ասում է շահը։

Վերշանն էլ էդ օրերը գալիս է հոր մոտ։ Ալին ասում է.

— Ես ամսականիս փոխարեն քո տեսած քուռակը վերցրի։ Հիմա քեզ եմ տալիս, տար խնամի, լավ նայի։

Վերշանը քուռակին տանում է, պահում։ Քուռակը դառնում է երկու տարեկան։ Վերշանը հեծնում է՝ վարժեցնում Թամրի։ Մի օր էլ քշում գալիս է հոր մոտ ու ասում.

— Ա՛յ ձիապան, մի արի քուռակս տես, տեսնենք խելքդ ինչ է կտրում դրանից։

Ձիապանը դուրս է գալիս վրանից, ձեռքը դնում է քուռակի մեջքին, շրթունքը կծում. ասում է.

— Ա՛յ տղա, էս քուռակը գորշ զամբիկից է։

— Ես էլ,—ասում է Վերշանը,—կաղ մորից եմ, դե արի քեզ վախցնեմ։

— Տղա՛ս,—ասում է հերը,—քուռակը դեռ չի մեծացել, հիմա էլ գլուխդ ինձ ցույց տուր, տեսնենք ինչպես է։ Մի մատով խփում է տղայի գլխին, ասում է.

— Տղաս, գլուխդ էլ դեռ չի հասունացել, ինձ չես կարող տանել, գնա մյուս տարի արի։

Վերշանը նորից տուն է վերադառնում։ Նրա քուռակը դառնում է երեք տարեկան։ Էս անգամ էլ քշում գալիս է Թեհրան, հոր մոտ, ձիուց իջնում, ասում է.

—Ա՛յ ձիապան, արի ձիս տես։

Ձիապանը վեր է կենում, ձեռքը տալիս է ձիու մեջքին ասում է.

— Սա գորշ զամբիկից է։

— Ես էլ կաղ մորից եմ,— ասում է տղան։

Հերն ասում է.— Ջամբիկդ լավ է, ինձ կարող է ազատել։ Դե, հիմա էլ արի գլխիդ նայեմ, տեսնեմ հասունացե՞լ է։ Ջեռքը դնում է տղայի գլխի վրա, ասում է.— Գլուխդ էլ հասունացել է, դե՛, հիմա կարող ես ինձ ազատել, ինձ դիր ձիու գավակն ու ինչքան կարող ես քշիր։

Վերշանը հորը նստեցնում է ձիու գավակը և քշում է։

Շահի զորքը եռևից է ընկնում։ Բավական ժամանակ անցնելուց հետո՝ հերն ասում է.

— Վերշա՛ն, նայիր, տես, հո մեր եռևից չեն ընկել։

— Մ՛յ հեր,— ասում է Վերշանը,— չորս ձիավոր են գալիս, սպիտակ ձիավորը քիչ է մնացել մեզ հասնի։

— Տղաս,— ասում է հերը,— քշիր փշոտ տեղեր, սպիտակ ձին փշերից վախենում է։

Քշում է փշոտ տեղեր, սպիտակ ձին հետ է մնում։

— Տղա՛ս, հիմա ինչպես է,— հարցնում է հերը։

— Գորշ ձին է գալիս,— ասում է Վերշանը։

— Քշիր քարքարոտ տեղեր, գորշ ձիու ոտները նուրբ են, քարերից վախենում է։

Քշում է քարքարոտ տեղեր, գորշ ձին էլ ետ է մնում։

— Տղա՛ս, հիմա ո՞րն է գալիս,— հարցնում է հերը։

— Սև ձին է գալիս,— ասում է Վերշանը։

— Քշի՛ր ցելերի մեջ,— ասում է հերը,— սև ձին ուժ չունի, ցելերի միջից չի կարող դուրս գալ։

Քշում է ցելերի մեջ, սև ձին էլ է ետ մնում։

— Հիմա ի՞նչպես է,— հարցնում է հերը։

— Հայրի՛կ,— ասում է Վերշանը,— կարմիր ձին է գալիս։

— Տղա՛ս,— ասում է հերը,— կարմիր ձին շատ ուժեղ է, նրանից ազատվելը շատ դժվար է։ Հիմա ձիուդ սանձն ազատ թող և, ինչքան ուժ ունես, քշիր, հետո կարմիր ձիուն հայհոյիր, կարող է ետ մնա, ուրիշ ոչ մի բանով չես կարող նրանից ազատվել։

Կարմիր ձին էլ է ետ մնում։ Վերշանն էդպիսով հորն ազատում է, հասնում են տուն, հետո դառնում է դաչաղ՝ հայտնի է դառնում Քոռօղլի անունով[2]։

ՓՈՐՕՂԼԻՆ ՈՒ ԲՈՒԻ ԲԵԿԸ

Ժամանակով Զարդաղլի Զամլիբեյում ապրում էր Փորօղլին իր քաջերի հետ։ Նրա քաջերից մեկն էր Թանղրի Թանմազը։ Փորօղլին մի օր ասում է.

— Թանղրի Թանմազ, լա՛ո, մի դուրս գնա՛, տես ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Թանղրի Թանմազը դուրս է գնում, նայում տեսնում է, որ Փորօղլու արգելված մարգագետնում մի մեծ քարավան վրաններ է խփել։ Հետ է դառնում, ասում է.

— Փո՛րօղլի, քո արգելած մարգագետնի մեջ մի մեծ քարավան վրաններ է խփել։

— Տղերք,—ասում է Փորօղլին,—ղոսթը թամբեք, տարբ՛ք դուրս։ Զենքերը կապում, հեծնում է ձին, էնտեղից ուղիղ իջնում է դեպի քարավանը։

Քարավանապետն էլ առաջուց իր մարդկանցն ասում է.

— Տղե՛րք, ասում են, թե էս սարում ղաչաղներ կան, անց ու դարձ անող քարավաններին թալանում են։ Ձեզնից մեկը թող վրանիս մոտ կանգնի նայի, եթե որևէ մարդ անտառի կողմից դուրս գա, ձիավոր լինի, թեոտավոր, մեկ է, թող գա ինձ շուտ իմաց տա։

Դրսում կանգնած պահապանը նայում տեսնում է, որ մի մարդ գորշ ձիու վրա նստած, ելավ անտառից։ Շուտ իմաց է տալիս քարավանապետին։

— Տղե՛րք, ձիս բերե՛ք,—հրամայում է քարավանապետը։ Զեռաց զենքերը կապում, հեծնում է ձին ու քշում Փորօղլու առաջ։

Էդ քարավանն էլ Ստամբոլ քաղաքի թագավորինն է լինում։ Փորօղլին նայում տեսնում է, որ քարավանապետն ուզում է կռվել, ինքն իր մտքում ասում է. «Մեղք է, նրա հետ

չեմ կռվի, մի երկու խոսք կասեմ, թե որ բարկությունն իջավ՝ լավ, թե չիջավ՝ նոր կռվի կբռնվենք, գետնով կտամ։ Թուրը սազի տեղ դնում է կրծքին ու էսպես ասում.

Ստամբոլդան չխոի բիր ուլու քյոփվին,
Գյաղդի չիմանլխդա գոյդու բազիրգին,
Դեղիմ քալաշլարըմա՝ բաջը գյոնդեր,
Ալի ալա վուրդի, գյուլդի բազիրգին։

Բազիրգաննաին էթմանիմ սավաշի,
Դաբալը, թանփալը գոլդուրարամ լեշի,
Մզրախինաին, օլչաբամ սանին գումաշի,
Ալի ալա վուրդի, գյուլդի բազիրգին։

Բաշընա օրթուփսան չըխալի բորքյու
Ուստունա ալըփսան Խորասան քյուրքյու,
Ֆորօղլի սոյլադի ուչխանա սազի,
Սաքսան մին ալթուն սայ մանա, բազիրգան*։

Երբ քարավանապետը լսում է, որ իր հետ խոսողը Ֆորօղլին է, ասում է.

— Ամա՛ն, Ֆորօղլի, ներիր, ես չգիտեի, որ դու ես, ինձ մի սպանիր. ինչ ապրանք, կտոր եմ բերել, բոլորն էլ քեզ լինի։ Ուղտերն ու ջորիները Ֆորօղլին բարձում է, քարավանապետին էրեն հետ վերցնում՝ դեպի ամրոցն է գնում։ Քարավանապետին

---

* Ստամբոլից դուրս եկավ մի մեծ քարավան,
Եկավ արոտում վրան խփեց մի վաճառական,
Ասեցի իմ քաջերիս՝ Թող տուրք ուղարկի.
Ձեռքը ձեռքին խփեց՝ ժպտաց վաճառականը։

Չեմ ուզում կռվել վաճառականի հետ,
Իսկ եթե կռվեմ, ձորերն ու բլուրները դիակներով կլցնեմ։
Ձասն ու դումաշը նիզակով կչափեմ.
Ձեռքը ձեռքին խփեց՝ ժպտաց վաճառականը։

Գլխիդ դրել ես փափուկ մի գլխարկ,
Խորասանի մորթին դցել ես վրադ,
Ֆորօղլին ասաց երեք տուն երգ,
Ութսուն հազար ոսկի հաշվիր ինձ, վաճառական։

ասանում է մոտը։ Նրա քայլերը հավաքվում, նայում տեսնում են, որ Քորօղլին էնքան ապրանք է բերել, որ հաշիվ չկա, քարավանապետին ու ծառաներին էլ գերի է բռնել։ Բոլորը գալիս նստում, ուտում, խմում են։ Էդ ժամանակ ներս է մտնում և Նիգար խանումը։

— Նիգար խանում,— ասում է Քորօղլին,— էսօր էս քարավանատեն ուզում էր ինձ հետ կռվել։ Հիմա ինչպե՞ս ես ուզում. գլուխը թողնե՞մ սպանե՞մ, թե՞ բաց թողնեմ։

Նիգար խանումն ասում է.— Քորօղլի, բավական չէ, որ ապրանքը խլել ես, իրեն բռնել, հիմա էլ ուզում ես սպանե՞լ, էդ լավ բան չի, բաց թող, թող գնա։

Քարավանապետի ձին ձեռից խլում են, շորերը վրայից հանում, հին շորեր են հագցնում, մի նիհար ձի են տալիս ու ազատ արձակում։ Նա էլ սուս ու փուս ետ է դառնում։ Մի օր հասնում է Ստամբուլ, ձին բաց է թողնում, էլ տիրություն չի անում, գնում է Թագավորի պալատը։ Թագավորը նայում, տեսնում է, որ իր քարավանապետն է՝ մի ձեռք հին շորեր հագած, ասում է.

— Ա՛յ քարավանապետ...

— Չմմմե,— պատասխանում է նա։

— Էս ինչ բան է, էս ինչ վիճակի մեջ ես ընկել,— հարցնում է Թագավորը։

— Տներս որ գու լինես,— պատասխանում է նա,— իմ վիճակն էլ էսպես կլինի։ Մարդ. Զարդաղլի Զամլիբելցի Քորօղլու նման տեր պիտի ունենա, որ հանգիստ սրտով տեղ գնա ու ետ դառնա։ Ես էնքան ապրանք, էնքան խաս ու առլաս ինձ հետ տարա, որ հաշիվ չկար։ Ճամփա ընկա գնացի Զարդաղլի Զամլիբելի մոտ։ Քորօղլին եկավ թալանեց տարավ։ Եթե նրա կինը չլիներ, ինձ էլ կսպաներ։ Վրայիցս շորերս հանեցին, ինձ էսպես տկլոր քեզ մոտ ուղարկեցին։

— Հենց էդպե՞ս,— ասում է Թագավորը։

— Հա՛, հենց էդպես,— պատասխանում է քարավանապետը։

Թագավորը հրամայում է, որ քաղաքում դալալ կանչեն, տեղ ասի, թե՝ «Ով որ երեք օրվա ու երեք գիշերվա մեջ գնա Զարդաղլի Զամլիբել, Քորօղլուն Ղռաթի հետ միասին բռնի բերի, իմ շարմաղ, նազանի աղջիկ Դոնա խանումը նրան կտամ»։

Դալալն ամեն տեղ ձեն է տալիս. գալիս է շուկա, մոտե-

նում է մի սրճարանի. Ինտեղ Բոլի անունով մի աշակերտ է լինում։ Սա դուրս է գալիս, էդ դալալի առաջը կտրում ասում է.

— Ա՛յ դալալ, էս ի՞նչ բան է, որ էդպես ընկել ես քաղաքի մեջ, էտեղ-էնտեղ հա ձեն ես տալիս։

— Ի՞նչ է, չ՚ես իմանում, թե ինչու եմ ձեն տալիս,—ասում է դալալը։ Զարդաղլի Զամլիբելում Քորօղլին թալանել է Թագավորի քարավանապետին։ Նա էլ եկել բողոքել է։ Թագավորը հիմա հրամայել է, թե՝ «Ով որ գնա Քորօղլուն կենդանի բերի՝ նրա ձիու հետ միասին, ես աղջիկս՝ Դոնա խանումը նրան կտամ»։

— Ա՛յ դալալ, մի քիչ կա՛ց,—ասում է Բոլին,—գնամ գամ, ու մտնում է ներս, մոտենում աղային և ասում.

— Ա՛յ աղա, Թագավորն էսպիսի հրաման է տվել, ինձ Թույլ տուր ես գնամ Քորօղլուն բերեմ, նրա աղջկանն էլ առնեմ։

— Մեղք ես,—ասում է աղան,—էդպիսի բան չանես, Քորօղլին քեզ կսպանի։

— Սպանում է, Թող սպանի,—համառում է Բոլին,—կամ կսպանվեմ, կամ էլ Դոնա խանումին տեր կդառնամ։

— Մեղքը վիզդ,—ասում է աղան,—գնում ես, գնա, մենակ լսիր, թե ինչ եմ ասում։ Քորօղլու մոտից երկու ծառա փախել, եկել են Թագավորի մոտ։ Դրանցից մեկի անունը Հասան է, մյուսինը՝ Հուսեյին։ Աշխարհքում ոչ մի մարդ Քորօղլու ֆանդն ու ֆելը չի իմանում։ Չես կարող նրան ճանաչել։ Էդ ծառաները նրան կճանաչեն։ Եթե դրանք ասեն թե՝ սա Քորօղլին է, դու բռնիր բեր, թե չէ, Թագավորը գլուխդ կկտրի։

Բոլին գալիս է դալալի մոտ, հայտնում իր համաձայնության մասին, դալալն էլ գալիս է Թագավորի մոտ և ասում.

— Թագավորն ապրած կենա, էս երիտասարդն ասում է, թե ես կգնամ Քորօղլուն ձիու հետ կբռնեմ կբերեմ։

— Խոսքս խոսք է,—ասում է Թագավորը,—եթե գնա Քորօղլուն ձիու հետ բռնի բերի ես աղջիկս՝ Դոնա խանումը կտամ նրան, իսկ եթե Քորօղլու վոխարեն մի ուրիշին բերի, իր գլուխը կկտրեմ։

Պայմանագիր են գրում. Թագավորն ստորագրում է. «Եթե դու բերիր, աղջիկս քեզ կտամ», Բոլին էլ է ստորագրում՝ «Եթե չբերի, գլուխս Թող։ Նրանք պայմանագիրը կնքում, անդուկի մեջ են դնում։ Բոլու շորերը փոխում են, նրա անունն

Էս անգամ դնում են Բոլի բեկ (Թագավորի վեզաճն է, հո հասնաք բան չէ)։ Էդ ժամանակ Բոլի բեկն ասում է.

— Թագավորն ապրած կենա, նրա ծառաներից երկուսը քեզ մոտ են, մեկի անունը Հասան է, մյուսինը՝ Հուսեյին։ Դրանք էլ թող ինձ հետ գան։ Ես Ֆորօղլուն չեմ ճանաչում, նրանք են ճանաչում։ Թող ինձ ցույց տան, ես բռնեմ, բերեմ։

— Թող Հասանն ու Հուսեյինն էլ քեզ հետ գան, մենակ պատրաստվիր գնա,—շտապեցնում է Թագավորը և հրամայում է զորապետին, որ զորքի պատրաստություն տեսնի։ Էդ ժամանակ գալիս Բոլի բեկին ասում են, թե զորքն արդեն պատրաստ է։ Բոլի բեկը, Հասանն ու Հուսեյինը հեծնում են ձիերն ու ճամփա ընկնում։ Բոլի բեկը զորքի առաջն է ընկնում. անթիվ, անհաշիվ զորքը շարժվում, գալիս հասնում է Զարդաղլի Ջամլիրել։

Թանկրի Թանմազը ծառայում է Ֆորօղլու մոտ։ Դուրս է գալիս, նայում, տեսնում է, որ Ֆորօղլու ձիու արածելու հանդատեղում էնքան զորք է հավաքվել, էնքան վրաններ են խփել՝ երկընքի աստղերին թիվ կա, դրանց թիվ չկա, սարի խոտերին ու ծաղիկներին թիվ կա, դրանց թիվ չկա։ Հետ է դառնում։ Ֆորօղլին էլ քաջերի հետ խմում է։ Ֆորօղլին ասում է.

— Թանդրի Թանմազ, ինչպե՞ս է եղանակը։

— Իգիթ,—ասում է նա,—ամպ է, ամպամած է։

Ֆորօղլին ձեռաց հասկանում է, որ կռիվ է լինելու՝ ինքն իրեն ասում է. «Կռիվ է, եկել են մեզ վրա կռվի»։

— Թանդրի Թանմազ, դու որ ասում ես ամպ է, տեսնես, ձեմ մերը լաց կլինի։

— Նրանց մերը լաց կլինի,—պատասխան է տալիս Թանդրի Թանմազը։

— Գնա՛ քաջերին՝ Այվազ Բալուն և մյուսներին ասա, որ Ղռաթը թամբեն,—ասում է Ֆորօղլին։

Ղռաթը թամբում են, ինքն էլ զենքերը կապում քաջերին ասում է.

— Դուք էստեղ կացեք, գնամ տեսնեմ՝ ինչ զորք է, ուր են գնում, ինչո՞ւ են եկել։

Ֆորօղլին շորերը փոխում է, մի սազ է առնում ձեռքը, դերվիշի կերպարանք մտած՝ սարից իջնում է դեպի ներքև, գնում է դեպի մարգագետինները։ Մոտենալով վրաններին՝ մի ծեր մար-

դու հանդիպում, տեսնում է, որ մի աման կա նրա ձեռքին՝ ուզում է նամազ անի։

— Սալամ-ալեքյում, պապիկ,—ասում է Բորօղլին։

— Վայ, ալեքյում ասսալամ,—ասում է ծերունին։

— Պապիկ,—ասում է Բորօղլին,—հարցնելն ամոթ չլինի, էս ինչ զորք է, ինչ իրարանցում է։

— Դերվիշ բաբա,—ասում է նա,—ես էլ լավ չգիտեմ, ասում են՝ էս սարում դաչաղներ կան։ Դրանց մեծավորը Բորօղլին է, էդ մարդը Թագավորի քարտավանապետին թալանել է։ Թագավորն էլ հրամայել է՝ «Ով որ գնա Զարդապլի Ջամլիրել, Բորօղլուն ու իր Ղռաթ ձին բերի, աղջիկս նրան կտամ։ Բոլի բեկը նրան խոստում է տվել, ասել. «Ես կգնամ կբերեմ»։ Թագավորն էլ ասել է, թե՝ «Ես էլ աղջիկս քեզ տվի»։ Հիմա Բոլի բեկը եկել է, որ Բորօղլուն իր Ղռաթ ձիու հետ բռնի տանի Թագավորին, որ նրա աղջիկն առնի։

— Ա՛յ պապի,—ասում է Բորօղլին,—յոթը որը երեխա ունեմ։ Եթե գնամ Բոլի բեկի մոտ, ինչ ես կարծում, մի բան ինձ կտա, որ երեխաներիս տանեմ։

— Դերվիշ բաբա,—ասում է ծերունին,—Բոլի բեկը չահել մարդ է, անհոգ, Թագավորի աղջկա համար էլ խոսք են տվել։ Իմ կարծիքով, եթե գնաս, նրա համար սազ նվագես, շատ փող կտա քեզ։

Բորօղլին ձին բաց է թողնում, մարակով խփում է մեջքին, ասում՝ «Իմ լավ ձի, գնա փոխվիր, դարձիր սպիտակ պատրաստողների ձիերի նման»։ Ձին փոխվում, լղարիկ յարու է դառնում, չի կարողանում ոտները տեղից շարժել։ Բորօղլին սազը վերցնում գնում է դեպի Բոլի բեկի վրանը։ Նայում, տեսնում է, որ իր մոտից վախած ծառաները՝ Հասանը և Հուսեյինը դռան մոտ կանգնել, պահակություն են անում։

— Դերվիշ բաբա,—ասում է Հասանը,—ինչ ես մեն գալիս։

Ասում է.—Լսել եմ, որ Բոլի բեկը զորք է կապել եկել Էստեղ, եկա որ գնամ մոտը։ Յոթ երեխա ունեմ, կարող է մի բան տա ինձ երեխաներիս տանեմ։

— Էստեղ կաց,—ասում է Հասանը,—գնամ հայտնեմ, տեսնենք թույլ կտա, որ ներս գնաս։ Ու գնում է ներս, Բոլի բեկից թույլտվություն է վերցնում։ Բոլի բեկն ասում է.

— Թող գա, տեսնենք ինչ մարդ է։

Հասանը ետ է դառնում, դերվիշին թույլ է տալիս, որ

ներս մտնի։ (Էլ Քորօղլի չասենք՝ ասենք դերվիշ)։ Դերվիշը նայում տեսնում է, որ Բոլի բեկը ներքնակի վրա նստել է, կանգնում է առաջը։

— Ո՞վ ես դու, ի՞նչ ես ուզում,—հարցնում է Բոլի բեկը։

— Բոլի՛ բեկ,—ասում է նա,—ես մի դերվիշ եմ, մինչև հիմա Քորօղլու մոտ էի. յոթ որը երեխա ունեմ. Քորօղլին լսել է, որ դու եկել ես, էլ հաց չտվեց երեխաներիս, չպահեց, ևկա քեզ մոտ, որ երեխաներիս համար մի բան ճարեմ։

— Քանի որ Քորօղլու մոտն ես եղել, հիմա լավ կճանաչես նրան, մի ասա՝ ջահի՞լ է, թե՞ ծեր,—հարցնում է Բոլի բեկը։

— Ես լավ եմ ճանաչում,—պատասխանում է նա,—թուլլ տուր նվագելով ասեմ.

Գոշունու չաքմիշսան ուստումա,
Բոլի՛, ման սանի, ման սանի...
Ջալը՛մ, նա գիրմիշսան կյաստիմա,
Բոլի՛, ման սանի, ման սանի*...

Բոլի բեկն ասում է.— Ա՛յ տղա, ի՞նչ է, դու ինձ ես հայհոյում։

— Բոլի՛ բեկ,—ասում է Քորօղլին,—աստված վկա, Քորօղլին իր լեզվով է ասել, ես էլ նրանից եմ սովորել։ Ադա, թե որ սխրտդ չի՞ ուզում՝ չեմ ասի։

— Ասա, ասա,—հրամայում է Բոլի բեկը,— տեսնենք ասելիքդ ի՞նչ է։

Քորօղլին ասում է.

Օվջունա փուլ գոյսրսամ,
Գյոզլսրինա միլ գոյսրսամ,
Գըզ, արվադը դուլ գոյսրսամ,
Բոլի՛, ման սանի, ման սանի**...

---

*Ձորք ես կապել բերել ինձ վրա,
Բոլի՛, ես քեզ ցույց կտամ, ցույց կտամ։
Ա՛յ գալտամ, ինչո՞ւ ես եկել ինձ վրա,
Բոլի՛, ես քեզ ցույց կտամ, ցույց կտամ։

**Ջեռքիդ մեջ փող կդնեմ,
Աչքիդ մեջ շյուղ կդնեմ,
Ջեր աղջիկներին, կանանց այրի կթողնեմ,
Բոլի՛, ես քեզ ցույց կտամ, ցույց կտամ։

— Ա՛յ տղա,—ասում է Բոլի բեկը,—դու իմ անունն ես տալիս։

Դերվիշն ասում է.—Բոլի՛ բեկ, հավատա ասածուն՝ Քորօղլին իր բերնով, իր լեզվովն է ասել, թե որ սիրտդ չի ուզում, չեմ ասի։ Ծուռ մարդ է, ծուռ խոսքեր է ասում։

— Իսկ քանի՞ տարեկան է,—հարցնում է Բոլի բեկը։

Քորօղլին ասում է.

Քորօղլիյամ, կոջալմիշամ,
Խունքյաբլաբդան բաջ ալմիշամ,
Բոլի՛, մեն սանի, մեն սանի*...

Էս բանը որ ասում է, Բոլի բեկը ծիծաղում, ասում է.

— Ա՛յ դերվիշ, էդ ինչի՞ր ես դուրս տալիս։

— Բոլի՛ բեկ,—ասում է նա,—ես քեզ արդեն ասի, որ ծուռ մարդ է, գլխից դուրս է տալիս, իր լեզվովն է ասել, ես էլ նրանից եմ սովորել։

Հասանը և Հուսեյինը դերվիշի էդ խոսքը դռան մոտից լսում են։

Հասանը ասում է Հուսեյնին.

— Զլինի՞ թե սա ինքը Քորօղլին է։ Բոլի բեկին կապանի, հետո էլ մեզ բոլորիս կկոտորի, ոչ մեկը նրա ձեռից չի ազատվի։

Հասանը մտնում է ներս։ Ոտնամաններըը դնում է Բոլի բեկի առաջ։ Բոլի բեկը հագնում դուրս է գալիս։

— Բոլի՛ բեկ,—ասում է Հասանը,—էս մարդը, որ էսպես ֆել ու ֆանդ է անում՝ Քորօղլուն է նմանում, կարող է ինքը լինի, պիտի փորձես։ Ներս մտնելիս եթե քո առջև վեր կացավ, էն ժամանակ իմացած եղիր, որ նա չէ, իսկ եթե վեր չկացավ, ձեռները տարալ ետևը, իմացած եղիր, որ հենց ինքն է։ Էն ժամանակ ասա՝ դու Թագավորի բռնավորն ես։ Քորօղլին նամարդ մարդ չէ, ձեռները ետ կտանի, քեզ կլսի։ Մեզ կանչիր, կգանք կկապենք։

Բոլի բեկը մտնում է ներս, տեսնում է, թե քարն իր տեղից շարժվեց, դերվիշն էլ՝ շարժվեց։ Տեղից վեր չի կենում։ Բոլի բեկն ասում է.

---

* Քորօղլին եմ, ծերացել եմ,
Արնախումներից տուրք եմ վերցրել,
Բոլի՛, ես քեզ ցույց կտամ, ցույց կտամ։

— Դու Քորօղլի՞ն ես։

— Ես Քորօղլին չեմ,— ասում է դերվիշը։

— Ձեռներդ տալ եմ,— ասում է Բոլի բեկը,— դու Թագավորի բռնավորն ես։ Հետո կանչում է Հասանին ու Հուսեյինին։ Քորօղլու ձեռները եռևից պինդ կապում են։ Ձեն է տալիս իր մի ծառային և ասում.

— Գնա սրա ձին էլ բեր։

Գնում է ծառան, ձին բերում, բայց լո՛նչ ձի՝ նիհար, չի կարող քայլել։ Զարմանում է Բոլի բեկը. «Ա՛յ մարդ,— ասում է ինքն իրեն,— Քորօղլու Ղաթի մասին շատ գովասանական խոսքեր էին ասում, իսկ սա լո՛նչ տեսակ ձի է, խելի տեղից չի կարող շարժվել»։

— Ա՛յ Բոլի բեկ,— ասում է դերվիշը։

— Ի՞նչ է,— հարցնում է Բոլի բեկը։

— Սա իմ ձին է,— ասում է նա,— ես էլ դերվիշ եմ, յոթ որը երեխա ունեմ, հիմա ճամփես են նայում։ Քորօղլին է՛լ բան չի տա, երեխեքս առանց ինձ կկոտորվեն։ Եթե ինձ տանես, ես կբողոքեմ Թագավորին, հիմա մտածիր, թե ինչ ես անում։

— Չէ, որ չէ,— ասում են Հասանն ու Հուսեյինը,— սա Քորօղլին է, Թալիսման ունի, ուզած ժամանակ կարող է փոխվել, ուզում է խաբել մեզ, մեր ձեռքից ազատվել։

Քորօղլուն գնում են ձիու վրա։ Բոլի բեկի հրամանով զինվորները հավաքում են վրաններըը, իրենց եկած ճամփով էտ են դառնում, որ գնան Ստամբոլ՝ Թագավորի մոտ։ Գնում են, գնում, մեկ օրվա ճամփա է մնում, որ հասնեն Ստամբոլ։ Ճամփի վրա մի աղբյուր է լինում՝ Հանգստի աղբյուր անունով։ Բոլի բեկը հրամայում է, որ զորքը վրաններ խփի, հանգստանա։ Իր համար էլ վրան են խփում։ Բոլի բեկը նստում է ներքնակի վրա, Քորօղլին էլ՝ նրա մոտ։ Սա մի խաբ է անում. «Ախը, եթե ինձ քաղաք տանեն կսպանեն, դրանից ինչ օգուտ։ Սազն առնում է ձեռքը, տեսնենք Բոլի բեկին ի՞նչ պիտի ասի.

Շուբհա էյլամա, Բոլի բագիմ,
Ման Քորօղլու դայիլամ,
Գյորմիշսան, շաշըրթմիշսան քանդինի,
Բոլի բաբ, ման Քորօղլու դայիլամ։

Քորօղլուննուն բիր աթի վար, ջիվանդըր,
Հայ դեյանդա նալլարընը գըրանդըր,
Անդ իչարամ՝ ադըմ Ուրիշանդըր,
Բուլի բագ, մանն Քորօղլու դայիլամ։

Քորօղլուննուն բիր աթի վար, դալիդիր,
Դալի դայիլ, բիր իլտըրըմ քիմիդիր,
Անդ իչարամ՝ աթամըն ադի Ալի դիր,
Բուլի բագ, մանն Քորօղլու դայիլամ*։

Բուլի բեկը կանչում է ծառաներին՝ Հասանին ու Հուսեյնին և ասում.

— Տղերք, սա երդվում է, ասում է թե անունս Ուրիշան է, հորս անունը Ալի է, եթե տանեմ Թագավորի մոտ, ասում դուրս գամ, գլուխս կթռցնի։ Գնացեք նրա ձին բերեք։

Ծառաները ճարները կտրած գնում են ձին բերում։ Ձին չի կարողանում ոտները փոխել, կամաց է քայլում, նիհար է լինում, Բուլի բեկն ասում է.

— Դերվիշ, վեր կաց գնա, դու Քորօղլին չես, ազատ ես, թե չէ՝ Թագավորը գլուխս կթռցնի։

Քորօղլին հեծնում է ձին, կամաց քշում, զորքի միջից դուրս է գալիս, Հեռանալով Էնտեղից՝ մտրակը խփում է ձիու մեջքին ու ասում. «Շնորհալի ձի, նրից նախկին գույնդ ընդունիր, հորս տաբեւան գարձիր»։ Դառթը էդ խոսքի վրա էլի նախկին կերպարանքն է ստանում, դառնում հորս տաբեւան՝

---

* Ի՛մ Բուլի բեկ, մի կասկածի,
Ես ասի՝ Քորօղլին չեմ,
Տեսել ես, շփոթվել ես,
Բուլի բեկ, ես Քորօղլին չեմ։

Քորօղլին մի ջահել ձի ունի,
Տիրոջ մի խոսքից սլանում է,
Երդվում եմ՝ իմ անունը Ուրիշան է,
Բուլի բեկ, ես Քորօղլին չեմ։

Քորօղլին կատաղի մի ձի ունի,
կատաղի չէ, մի հրեղեն ձի է,
Երդվում եմ՝ իմ հոր անունն Ալի է,
Բուլի բեկ, ես Քորօղլին չեմ։

գեղեցկանում, պայծառանում։ Քորօղլին մինչև ոտը դնում է առաջին պակին, մեկ էլ տեսնում է, որ արդեն Զարդաղլի Զամբիրելուցն է։

Հիմա զորքից, Բոլի բեկից խոսենք։

Բոլի բեկը զորքը նորից եկած ճամփով շարժում է առ, ասելով՝ Զարդաղլի Զամբիրել, ձրտեղ ես, եկա։ Գալիս է նախկին տեղը, որտեղ բռնել էր Քորօղուն, վրաններ են խփում՝ հանգիստ առնում։

Քորօղլին հասնելով Զարդաղլի Զամբիրել, քաջերին հավաքում է մի տեղ, սկսում են քեֆ անել, գինի խմել, ուրախանալ։ Էդ ժամանակ նա Թանղրի Թանմազին ասում է.

— Թանղրի Թանմազ, լա՛ո, գնա դուրս, տես եղանակն ինչպե՞ս է։

Թանղրի Թանմազը գնում է դուրս, տեսնում է, որ Քորօղլու մարգագետնում էլի մեծ զորք է հավաքվել, էնքան շատ են՝ թիվ կա ասողերին, թիվ չկա զինվորներին, առ է գառնում, ասում է.

— Քորօղլի, երկինքն ամպել է։

— Որ ամպել է, տեսնես՝ էս անգամ ձեմ մերը լաց կլինի։

— Քորօղլի,—ասում է Թանղրի Թանմազը,—էս անգամ քո մերը լաց կլինի։

— Մ՛վ քաջեր,—ասում է Քորօղլին,—ամեն մեկդ թող վերցնի իր ձին, զենքերը, որ գայլերի ոհմակի նման հարձակվենք թըշնամու զորքի վրա, բայց զինվորներին չսպանեք՝ խեղճ են, ռամկաթի տղաներ են, ռանչպար են, զոռով են բերել։ Միայն Բոլի բեկին կենդանի բռնեք բերեք ամբոց, որ նրա հետ վարվեմ էնպես, ինչպես սիրտս է ուզում։

Քաջերը գնում են, պատրաստություն են տեսնում։ Հեծնում են ձիերը, քշում Բոլի բեկի զորքի վրա։ Ոչ մի զինվորի ձեռք չեն տալիս, չեն սպանում։ Զորքն էլ վախից փախչում է էս ու էն կողմը։ Բոլի բեկի վրանը շրջապատում, բռնում բերում են։ Բոլոր վրանները բարձում, առ են գառնում դեպի Զարդաղլի Զամբիրել։ Բոլի բեկին էլ իրենց հետ են տանում։ Ավարը բաժանում են։ Քորօղլին Բոլի բեկին տանում է իր ամբոցը։ Նրա երեք հարյուր վաթսունվեց քաջերը գալիս հավաքվում են էնտեղ։ Նիգար խանումը՝ Ջավարլի փաշայի աղջիկը՝ քահրաբաե մուշտուկը ձեռին, նույնպես գալիս է էնտեղ։ Նայում տեսնում ե, որ մի գեղեցիկ, լավ երիտասարդ էնտեղ խեղճ-

խեղճ նստել է մի անկյունում, շորերը վրայից հանել են,— ասում է.

— Փորօղլի, էս ինչ երիտասարդ է, որ էդպես խեղճ-խեղճ նստել է։

— Նիգար խանում,— ասում է Փորօղլին,— էս մարդը մի անգամ ինձ բռնեց տարավ։ Ճամփին ես հազիվ-հազ նրա ձեռից ազատվեցի եկա, հիմա նորից զորք է հավաքել եկել ինձ վրա, որ ինձ բռնի։ Հիմա ինչ կասես, ինչ արժանի պատիժ տանք, ինչպես վարվենք նրա հետ։

— Փորօղլի,— ասում է Նիգար խանումը,— էդ որ դու ես անում, քաջին վայել չէ։ Տեղն եկած ժամանակն ասում ես՝ «ազնիվ եմ», բայց դու աբի տես՝ քո էս բռնած գործն իսկի էլ ազնիվ մարդուն չի սազում, քո անվանը հարմար չէ։ Էս խեղճ մարդն էլ, կարող է, գարդ ունի, որ եկել է կռվի։ Մի հարցրու, տես՝ ինչ մուրազ ունի, հետո ուզածդ արա։

— Բոլի բեկ, այ տղա,— ասում է Փորօղլին,— դու մի անգամ եկար, ես խորամանկությամբ քո ձեռից ազատվեցի, ասա, հիմա ինչո՞ւ ես եկել։

— Փորօղլի,— ասում է Բոլի բեկը,— ես սիրում էի Դոնա խանումին՝ Թագավորի աղջկան։ Թագավորը հրամայել էր, թե՝ ով որ Փորօղլուն իր ձիու հետ բերի, ես աղջկանս՝ Դոնա խանումին նրան կտամ։ Ես մտքումս ասի, հենց ինքս կգնամ, կամ Փորօղլին ինձ կսպանի, որ ես էս ցավից ազատվեմ, կամ էլ՝ հետս կգա, ինձ կհասցնի իմ մուրազին։

— Ա՛յ Փորօղլի,— ասում է Նիգար խանումը,— թե որ քաջ ես, գնա էս մարդուն հասցրու իր մուրազին, եկել քեզ է դիմում, քո բախտն է ընկել, ինչ որ ճիշտն էր, քեզ ասացի։

— Նիգար խանում,— ասում է Փորօղլին,— դու Ջավարլի փաշայի աղջիկն ես, խելոք ես։ Փո խոսքն է։ Ես կգնամ, բայց դու աբի տես, որ նա գլխիս փորձանք չբերի։

— Փորօղլի,— ասում է Բոլի բեկը,— որ կասկածի մեջ չընկնես, աբի գառնանք արնախպեր։ Հաց բեր, հացովդ երդվեմ, որ քեզ չեմ դավաճանի։

Հաց են բերում։ Բոլի բեկը նրա հացով երդվում է։ Հետո մի բաժակ ջուր են բերում, իրենց ճկույթներն արնոտում դնում են մեջն ու էդ բաժակից մեկ-մեկ կում ջուր խմում, գառնում են արնախպեր։ Նիգար խանումն էլ վեր է կենում, երկուսի պատրաստությունը տեսնում։ Փորօղլին շորերը հագնում է, զենքերը

կապում, հեծնում է Ղռաթ ձին։ Բոլի բեկի համար էլ շոր են բերում, ձի են բերում։ Հեծնում է։ Մի վրան են բերում, կապում ձիու գավակին, մյասին քշում գնում են Ստամբոլ։ Մի օր, երկու օր գնում, հասնում են մեր գիտցած Հանգստի աղբյուրին։ Տեսնում են, որ ցրված զորքն էլ էնտեղ է հավաքվել։ Վրան են խփում։ Զորքը հավաքվում է նրանց վրանի մոտ, ապշած՝ Քորօղլուն ու նրա ձիուն են նայում։ Քորօղլին նստում է ներքնակի վրա։ Բոլի բեկն էլ փոքր եղբոր պես ծառայում է նրան։

Ղաջարօղլին Բոլի բեկի հորեղբոր տղան է լինում։ Քաղաք հասած զինվորներից իմանում է, որ Բոլի բեկը Քորօղլուն բռնել բերել է Հանգստի աղբյուրի մոտ։ Սա իր հետ վերցնում է երեք-չորս ընկեր, ասում է.

— Քորօղլուն, նրա ձին շատերն են գովում, հորեղբորս տղան՝ Բոլի բեկը բռնել է, քանի շուտ է, եկեք գնանք տեսնենք, թե չէ, որ բերին Թագավորի մոտ, էլ չենք կարող նրան տեսնել։

Ղաջարօղլին երկու տիկ հին գինի է վերցնում։ Սրանք գալիս են դեպի Հանգստի աղբյուրը, տեսնում են, որ զորքի վրաններըը շարված են կողք-կողքի։ Գնում են Բոլի բեկի վրանի մոտ։ Դե, Ղաջարօղլին ու Բոլի բեկը հորեղբոր տղաներ են լինում, բարև են տալիս, բարև են առնում, իրար քեֆ ու հալ են հարցնում։ Ղաջարօղլին նայում տեսնում է, որ Քորօղլին մի ձեռք էնպիսի շոր է հագել, որ մարդ նայելիս կարող է ուշքը կորցնի, շորերի վրայից էլ զենքեր են կապած, նստել է ներքնակի վրա, Բոլի բեկն էլ փոքր եղբոր պես ծառայում է նրան։ Ղաջարօղլին շատ է սրտնեղում, իր մտքում ասում է, «Սա գնացել էր, որ Քորօղլուն գերի բռնի բերի, էս ինչ է, խաբելով է բերել։ Թագավորն էլ ինչո՞ւ աղջիկ սրան պիտի տա, եթե տա, Քորօղլուն կտա, էլ սա ինչացո՞ւ է»։ Ղաջարօղլին Բոլի բեկի ոտնամաններըը բերում դնում է առաջը։ Բոլի բեկը դուրս է գալիս։ Ղաջարօղլին ասում է.

— Բոլի բեկ, ոնաքանդ, եթե Քորօղլուն էդ ձևով բերես Թագավորի մոտ՝ գլուխդ կկտրի, Դոնա խանումին էլ Քորօղլուն կտա։

— Բա ինչ անեմ, հարցնում է Բոլի բեկը։

— Պետք է որ նրա ձեռներն ու ոտները կապենք, տանենք

թագավորին հանձնենք, որ թագավորն իմանա, թե դու քրիս ուժով ես բռնել բերել։

— Ղաջարօղլի,— ասում է Բոլի բեկը,— մենք արնախալեր ենք դառել, երդվել եմ, որ նրան չդավաճանեմ։

— Էդ եղավ բան,— ասում է Ղաջարօղլին,— այ տնաքանդ, ձեր երկուսի երդումն էլ Զարդաղլի Զամլիբելումն է մնացել։ Էստեղ չի անցնում էդպիսի երդում։

— Մենք չենք կարող նրան հաղթել,— ասում է Բոլի բեկը,— եթե փորձ անենք նրա ձեռները կապել, նա մեզ բոլորիս կկոտորի, կջարդի։

— Գիտե՞ս, ինչպես կանես,— ասում է Ղաջարօղլին,— ես Ստամբուլից քեզ համար յոթը տարվա հին գինի եմ բերել։ Դու նստիր, ես գինին կբերեմ. ասում են, որ Քորօղլին խմիչքը շատ է սիրում։ Գինին ես ձեզ կտամ, քո թասը չեմ լցնի, իսկ նրան լիք-լիք կլցնեմ ու կտամ։ Երբ ուշագնաց լինի, ձենքերը կարձակենք, կվերցնենք, ձեռներն ու ոտները կկապենք, ձիուն կդնենք, կտանենք թագավորի պալատի դուռը, թող մարդիկ էլ իմանան, որ մեր սրերի ուժով ենք նրան բռնել բերել։ Քո նշանածն էլ կլսի, կուրախանա։

Բոլի բեկը գնում է ներս, նստում է։ Ղաջարօղլին էլ գինի է բերում ու տալիս է նրանց, Բոլի բեկի թասը դատարկ է տալիս, իսկ Քորօղլունը՝ լիքը լցնում։ Քորօղլին խմում, շատ է խմում ու ընկնում է մի կողմ։ Էն ժամանակ Քորօղլու թևերը կապում են, նրա ձենքերը արձակում, վերցնում են, հետո ձի են բերում, նրան նստեցնում են ձիու վրա, ձիու փորի տակից ոտները կապում ու զորքի հետ ճամփա ընկնում դեպի Ստամբուլ։ Շատ են գնում, թե քիչ մի ժամ է մնում որ հասնեն Ստամբուլ։ Մեկ էլ Քորօղլին ուշքի է գալիս, նայում տեսնում է, որ իր ոտներն ու ձեռները կապած են, դառնում է Բոլի բեկին, ասում.

— Բոլի՛ բեկ, ինչո՞ւ, ես բանի համար երդվեցինք, որ ինձ էսպես դավաճանորեն կապկպել ես։

— Մեր երդումը, մեր ախպերությունը,— ասում է Բոլի բեկը,— Զարդաղլի Զամլիբելում մնաց, իսկ էստեղ էդպիսի բաներ չեն անցնի։

Էն ժամանակ Քորօղլին երգելով ասում է.

Բոլի բաղամ, սանամ դեյիմ,
Ջամլիբելդա նայմ գալդի,
Ղալդի՝ քայլիք Նիգար խանում գալդի։
Մանի թուխդու Ղաջարօղլի,
Օլդուբուր վերմազ մաջալի,
Դորթ դիրազքլի, բեշ բաջալի,
Ջամլիբելդա նայլիմ գալդի,
Ղալդի Նիգար խանում, գալդի։

Ֆարօղլի սոյլամազ յալան,
Ջամլիբելդա նայլիմ գալդի,
Ղալդի Նիգար խանում, գալդի*։

— Ո՞ւր է՛ն ու է՛նը,—հայհոյում է Ղաջարօղլին,—ինչո՞ւ էնտեղ մի մարդ չկա, որ Նիգարին...

— Թող էգպես լինի,—ասում է Ֆարօղլին,—քո էդ խոսքը չեմ մոռանա, ասացիր, անցավ գնաց։

Էդպես ամոթալի վիճակով Ֆարօղլուն տանում են քաղաք։ Թագավորի պալատի դռան մոտ նրան ձիուց վայր են բերում։ Քաղաքով մեկ տարածվում է, թե Բոլի բեկը Ֆարօղլուն բռնել բերել է։ Բոլորը գալիս լցվում են Թագավորի պալատը։ Ֆարօղլուն բերում են ներս՝ Թագավորի մոտ։ Թագավորը նայում է նրան, վախով բռնվում ու հարցնում է Բոլի բեկին.

— Սրան ինչպե՞ս բռնեցիր, մի պատմիր քո կռվի մասին։ Տեսնենք ինչպես է եղել։

---

* Բոլի բեկ, ես քեզ ի՞նչ ասեմ,
Ջամլիբելում ի՞նչս է ինում,
Մնում է՝ կաքավ Նիգար խանումս է ինում։
Ինձ բռնեց Ղաջարօղլին,
Սպանում է, հանգիստ չի տալիս,
Մնում է չորեք այունի, հինգ օդանցքով տունս,
Ջամլիբելում ի՞նչս է ինում,
Մնում է՝ Նիգար խանումս է ինում։

Ֆարօղլին սուտ չի ասել,
Ջամլիբելում ի՞նչս է ինում,
Մնում է՝ Նիգար խանումս է ինում։

— Թագավորն ապրած կենա, — պատասխանում է Բոլի բեկը,—նա ինչ է, որ ինձ հետ կռվի, նա միայն անունով է հայտնի դարձել։ Մի անգամ դրա վրա գոռացի՝ կուչ եկավ, էլ չկարողացավ կռվել, թուրը բռնել։ Ես էլ բռնեցի բերեցի։ Ուզում ես, զորքից էլ հարցմունք արա։

— Թագավորն ապրած կենա,—ասում է քաջ Քորօղլին,— հրամանատուր, ես էլ խոսեմ, մենակ խոսքս սաղի վրա նվագելով կասեմ։

— Խոսիր,—ասում է Թագավորը,—մեկ է բռնվել ես, տեղդ գտել ես, ինչ որ սիրտդ ուզում է՝ ասա։

Ժողովուրդը հավաքվել էր, Քորօղլին ասում է.

Օ քի լաքա արայա գյալդի,
Մաջլիսին հալի վաբրիշան օլուր,
Բիր խգիթ արայա Թորաման,
Դուշմանին հալի վաբրիշան օլուր։
Սարչիյա բախ, գարագուշա քյամ բիչար,
Ղոչ խգիթըն բալասի պոչախ օլար,
Լաքա գովդա գյունու դայանմազ, գաչար,
Գաչար Թանհադա գինրամանո օլուր,
Քորօղլի դեյար—գորխմանամ մուխանանԹդան,
Թուլքու դեյար ասլանա գովարամ յուրԹդան,
Քեչի գորխա-գորխա գաչար գուրԹդան,
Համա մանո գորխմանամ հեչ բիր նամարդդան։

---

* Երբ որ նենգությունը մեջտեղ է գալիս՝
Ժողովրդի վիճակը դեպի վատն է գնում,
Իսկ երբ մի քաջ է մեջտեղ գալիս՝
Թշնամու վիճակը վատ է դառնում։
Ճնճղուկին նայիր՝ արծվին է ծաղրում,
Քաջի որդին էլ, իր հոր նման, քաջ է լինում։
Նենգը կռվի օրը Թողնում փախչում է,
Փախչում՝ մենակության մեջ կուրծք է դառնում։
Քորօղլին ասում է՝ չեմ վախենա նենգ մարդուց,
Աղվեսն ասում է՝ առյուծին կփախցնեմ ընչից։
Բայց խղուր։
Այծը վախենալով փախչում է գայլից,
Իսկ ես չեմ վախենա ոչ մի սուր մարդուց։

Թագավորը չնայած հավատում է Քորօղլուն, բայց դիմելով Բոլի բեկին, ասում է.

— Բոլի, լավն էն է, որ բերել ես, կուզով ես բերել, թե խորամանկությամբ, մեկ է։ Ես խոսքիս տերն եմ, Դոնա խանումին քեզ կտամ։ Քորօղլուն էլ քեզ եմ հանձնում, ինչպես սիրտդ է ուզում, էնպես արա, սպանում ես, բանտարկում ես, քո գործն է։

Քորօղլուն դուրս են բերում, Ղաջարօղլին, Հասանն ու Հուսեյինը խորհուրդ են անում, թե ինչ անեն նրան։ Մեկն ասում է.

— Սպանենք։

— Էդ չեղավ,— ասում է Հասանը,— ինչու՞ սպանենք։ Դրան պատժելու համար ամենից առաջ Ղառիբին բերեք նրա աչքի առաջ ծախենք։ Հետո էլ կտանենք կգցենք Զուլխուր-Մահլայում գտնվող խոր հորի մեջ։ Նա շատ է սիրում իր ձին, հորի մեջ նրա պատճառով հալ ու մաշ կլինի, կմեռնի, կպրծնենք դրանից։

Բոլի բեկն ասում է դալալին, որ ամեն տեղ հայտնի, թե՝ ես Քորօղլու ձին պիտի ծախեմ, Ստամբուլ քաղաքում ով որ հարուստ է, թող գա առնի։

Դալալն ամեն տեղ ձեն է տալիս։ Ստամբուլ քաղաքումն էլ մի շատ հարուստ մարդ է լինում։ Էդ մարդը գալիս է շուկա, նայում տեսնում է, որ Հասանն ու Հուսեյինը ձիու սանձից բռնել են, մոտենում է Բոլի բեկին և ասում է.

— Էդ ձին դու ես ծախում։

— Հապա դալալն ինչու՞ համար է ձեն տալիս, ասում է նա։

— Ի՞նչ արժի,— հարցնում է էդ հարուստ մարդը,— տեսնենք ինչքան ես ուզում։

— Ոչ հեծել եմ, ոչ էլ քշել, ես դրա բնավորությունը չգիտեմ, դրա համար էլ դժվարանում եմ գինն ասել, ասում է Բոլի բեկը։

— Դրա գինն,— ասում է Հասանը,— դրա տերը մենակ կարող է ասել, տերն էլ էստեղ է, թող ասի։

— Քորօղլի՛,— ասում է Բոլի բեկը,— դու պետք է ձիուդ գինն ասես։

— Թե որ ըրա գինն ասեմ, ոչ մեկը չի կարող առնել, ասում է Քորօղլին։

Էդ խոսքը հարուստ վաճառականին դուր չի գալիս։ Նա ասում է.

— Ա՛յ Քորօղլի, Ստամբոլ քաղաքի հարստության կեսն իմն է, ի՞նչպես թե չեմ կարող առնել։ Դու Քորօղլին չլինես, թե դրա գինը չասես։

Քորօղլուն լինչ հոգ։ Ասում է.

— Իմ ձին ինձ համար գին չունի, էլ լինչ ասեմ։

— Ասա, տեսնենք, լինչ ես ասում,—նորից հարցնում է հարուստ վաճառականը։

Էն ժամանակ Քորօղլին ասում է.

Ղռաթն դիյմաթինի սիզա սոյլեյիմ.
Սաքսան մին խազինա վուլա վերմաննամ,
Սաքսան մին աղթուքլու հոգաջա վերմաննամ,
Սաքսան մին աթա, սաքսան մին օլքանըն վուլունա վերմաննամ,
Սաքսան մին քյոթանա, սաքսան մին ջութա վերմաննամ,
Սաքսան մին քանչա—սաքսան մին օքյուզա վերմաննամ,
Քորօղլի դեյիր—մանըմը էնդիրին դուզա,
Սաքսան մին օլքյադան գյանչին օքյուզա,
Սաքսան մին գանլինա, սաքսան մին գըզա,
Սաքսան մին նար յուքու ալթունա վերմաննամ*։

Վաճառականը ետ է դառնում և ասում.

— Ես ութանասուն հազար աղջիկ, ութանասուն հազար հարս որտեղից պիտի բերեմ։

Քորօղլուն տանում են Զուխուր-Մահլան, ձեռների կապերը բաց են անում, իջեցնում են զնդանի մեջ ու քար են քերում դնում հորի բերանին։ Բոլի բեկն էն ժամանակ իր ծառաներից մեկին ասում է.

— Ա՛յ տղա, ձին տար նշանածիս՝ Դոնա խանումին տուր,

---

* Ղռաթի գինը ես ձեզ հիմա ասեմ.
Ութսուն հազար դանձարանի փողով չեմ տա,
Ութսուն հազար սպիտակ ոչխարի չեմ տա,
Ութսուն հազար ձիու, ութսուն հազար երկրի փողով չեմ տա,
Ութսուն հազար դութանով, ութսուն հազար արորով չեմ տա,
Ութսուն հազար դամեշի, ութսուն հազար եզան չեմ տա,
Քորօղլին ասում է՝ ունեցվածքս բերեք դաշտի մեջ,
Ութսուն հազար երկրներից բերված եղներով չեմ տա,
Ութսուն հազար հարս, ութսուն հազար աղջիկ,
Ութսուն հազար ուզտ՝ ոսկու բեռներով, էլի չեմ տա։

աստա, թող Աստ գոմում կապի, էս գենքերն էլ դնի պահարանի մեջ։ Կարող է հարսանիք լինի, էն ժամանակ ես էդ գենքերը կկապեմ, ձին էլ կհեծնեմ։ Թող արաբ աշխարհն իմանա, որ ձին ու գենքերը ես իմ թրի ուժովն եմ ձեռք բերել։

Ծառան ձին տանում տալիս է խանումին։ Սա էլ տանում է գոմի վերին գլուխը կապում ու ծառայից հարցնում է.

— Ա՛յ տղա, Քորօղլին ո՞րտեղ է, սպանեցի՞ք, ի՞նչ արի՞ք։

— Ստանում, Քորօղլուն տարել են Զուխուր-Մահլան, գցել են գնդանի մեջ ու բերանը քարով ծածկել են,— ասում է ծառան ու գնում։

— Ա՛յ աղախիններ,—ասում է խանումը,—դուք էլ խելացի մարդկանց աղջիկներ էք, խելք ունեք, ի՞նչ էք ասում, Բոլի բեկն էսպիսի ձիու ձիավորին, էսպիսի գենքերի տիրոջը կարո՞ղ է հաղթել։ Իմ կարծիքով Բոլի բեկը խորամանկությամբ է նրան բռնել ու բերել։

Դոնա խանումը Քորօղլու գենքերն էլ վերցնում, տանում գնում է պահարանի մեջ։ Էդպես ճնում է մինչև իրիկուն։ Մութն ընկնելուն պես խանումն աղախիններով գնում է Զուխուր-Մահլան, կանգնում է հորի մոտ, քարը մի կողմ է հրում ու ասում.

— Քորօղլի։

— Համմա, ասում է նա։

— Քեզ համար անկողին կբերեմ որ քնես։

— Թագավորի՛ աղջիկ,—ասում է Քորօղլին,—քո քեֆն է։

— Մի օրվան մեջ ի՞նչքան հաց, ջուր, գինի է քեզ պետք,— հարցնում է խանումը։

— Մի բաթման հաց (մոտ 12 ֆունտ), մի բաթման խոտած մի ես, մի տիկ գինի, մի կուժ ջուր թե որ բերես՝ կարող է ապրեմ,—ասում է Քորօղլին։

Խանումն աղախնին ուղարկում է, որ մի ձեռք տեղաշոր բերի. անկողինն իջեցնում են հորի մեջ։ Հորի բերանը բաց թողնում, ետ են գառնում իրենց տեղերը։ Հետո խանումը ձեռաց դնում է ձեր հացթուխի մոտ և ասում.

— Ա՛յ հացթուխ, դու պետք է օրական մի բաթման հաց թխես, տանես Զուխուր-Մահլան, իջեցնես հորի մեջ, որ Քորօղլին ուտի։ Ուրբաթ օրերն էլ արի ինձ մոտ՝ փողդ բոլ-բոլ ստացի։ Մենակ էս բանի մասին թող ոչ մեկը չիմանա, իսկ եթե ուրիշին իմաց տաս՝ գլուխդ զարնել կտամ։

— Ամանուհ,—ասում է հացթուխը,—ես ինչ իրավունք ունեմ, որ գաղտնիքդ ուրիշին հայտնեմ, դու թագավորի աղջիկն ես, իսկ ես ոմ եմ, մի աշխատավոր ոանչպար։

Ամանումը գնում է մսագործի մոտ և ասում։

— Դու օրական մի բաթման միս պիտի գցես փուռը, խորովես, հետո տանես Զուխուր-Մահլան, իջեցնես հորի մեջ, որ Ֆորօղլին ուտի։ Ուրբաթ օրերն էլ սրի մոտս վոզդ բոլ-բոլ ստացիր, պայմանով, որ ոչ մեկը չիմանա։

Դոնա խանումը գնում է գինեգործի մոտ և ասում.

— Օրական մի տիկ գինի պիտի տանես Զուխուր-Մահլան, իջեցնես հորի մեջ, որ Ֆորօղլին խմի։ Զլինեմ չիմանամ, որ գաղտնիքս ուրիշներն իմանան։ Ուրբաթ օրերն էլ սրի մոտս, վոզդ բոլ-բոլ ստացիր։

Ամանումը հետ է դառնում տուն և ազախնին ասում.

— Մ՛յ աղջիկ, քո ամսականն էլի կտամ, մենակ էս անգամ ուրիշ գործ պիտի անես—ամեն օր կգնաս այդի, մի կուժ ջուր կվերցնես, կտանես Զուխուր-Մահլան, Ֆորօղլուն կտաս, պայմանով, որ ոչ մեկին չասես գաղտնիքիս մասին։

Էդ բոլոր մարդիկ կատարում են թագավորի աղջկա ասածը։ Ինքը՝ Դոնա խանումն էլ օրը մի անգամ գնում է Զուխուր-Մահլան, Ֆորօղլու քեֆն ու հալը հարցնում, ասում է։

— Ֆորօ՛ղլի, ի՞նչպես ես քեզ զգում։

— Թագավորի՛ աղջիկ,—պատասխանում է նա,—ինձ լավ եմ զգում, գոհ եմ վիճակիցս։ Ֆորօղլին շատ է սիրում իր նեղ օրվան օգնող Դոնա խանումին։ Հիմի թող Դոնա խանումը դրան էդպես պահի, մենք որտեղից խոսենք։ Եկեք խոսենք Զարդաղլի Զամլիբելից։

Օրերից մի օր Նիգար խանումը երազ է տեսնում։ Տեսնում է, որ Ֆորօղլին նեղության մեջ է, օգնություն է խնդրում։ Վեր է կենում, ձեն է տալիս երեք հարյուր վաթսուն վեց քաջերին, հավաքում, ասում է.

— Եկե՛ք ամբոց։

Քաջերը գալիս նստում են, Նիգար խանումը Ֆորօղլու հացի սեղանը բաց է անում և ասում.

— Ո՛վ քաջեր, զավակներս, Ֆորօղլուն բռնել են։ Ես էս դիշերը երազ տեսա։ Շատ նեղ վիճակումն է, ձեզնից օգնություն է խնդրում, հիմա տեսնեմ ձեզնից ով կկամենա գնալ նրան օգնության։

— Ես կգնամ,—ասում է մեկը։
— Ես կգնամ,—ասում է մյուսը։
— Ես կգնամ,—ասում է երրորդը։
— Ես կգնամ,—ասում է մի ուրիշը։

Թաղերից ոչ մեկը չի ցանկանում ընկերոջից հետ մնալ։ Նիգար խանումը նայում տեսնում է, որ քաջերը էս բանի համար կարող են իրար կոտորել, ասում է.

— Ջավակներս, էդպես չի լինի, ամեն մեկդ թող գնա իր տանը քնի։ Էս գիշեր Բոլօղլին մեր երազ եկավ, թող առավոտը գա նրա հացով երդվի, ճիշտն ասի, նոր գնա։

Թաղերը ցրվում են։ Գիշերը քնում են։ Էդ քաջերից մեկն Իսա Բալին է լինում։ Ջահել է լինում, տասնհինգ տարեկան։ Բոլօղլին երեք անգամ նրան երազ է գալիս «Ստամբոլ քաղաքում, Ջուխուր-Մահլայում, գնդանի մեջ բռնված է Բոլօղլին»։

Լույսը բացվում է, բարի լույսը թող նեռկա եղողների վրա էլ լինի, նրանց վրա էլ լինի։ Թաղերը գալիս են Բոլօղլու ամբողը։ Նիգար խանումը հաց է բերում, մի բաժակ գինի է բերում գնում սեղանին և ասում է.

— Ո՛վ քաջեր, սա Բոլօղլու հացն է, սա մարդ (мэрд) մարդու բաժակն է, ձեզնից ով որ էս գիշեր երազ է տեսել, թող Բոլօղլու հացով երդվի, էս քաջության բաժակն էլ թող խմի, նոր մեկայն գնա նրան օգնության։

Բոլորը լռում են։ Տասնհինգ տարեկան Իսա Բալին ոտքի է կանգնում և ասում.

— Թող էս հացն ինձ հարամ լինի, թե ես սուտ եմ ասում. էս գիշեր երազումս տեսա, որ Բոլօղլին Ստամբոլ քաղաքի Ջուխուր-Մահլայում բռնված է. օգնություն է խնդրում։

Նրա էս խոսքերը նստած քաջերից ոչ մեկին դուր չի գալիս, ամեն մեկն իր մտքում ասում է.

— Դու ընդամենը տասնհինգ տարեկան ես, ինչպես կարող է պատահել որ քեզ երազ գա, իսկ ինձ երազ չգա։ Ջեն չեն հանում։

Իսա Բալին գնում է սեղանի մոտ, բաժակը վերցնում, ասում է.

— Ես կգնամ, ու մի սաղ է վերցնում, ուզում է նվագելով նեռկա եղողներին հասկացնել, որ նրանցից մի մարդ նրա հետ գա, մեկայն գնան։ Չէ՞ որ նա փոքր էր, չգիտեր.

Բու գյուն մեն բիր իգիթ խատըրեմ,
Գեթսին-գյալսին մեննինեն,
Դուշսուն զարիբ էլլարա,
Գեթսին-գյալսին մեննինեն*:

Նորից ոչ մեկը ձեն չի հանում.

Իգիթ գյորեք օլսուն գոչաղ.
Գալանդարդան ալսըն բաջի,
Դուշմանլարա այրի գիլջի,
Ջալսամ չալա մեննինեն**:

Իսա Բալին նայում տեսնում է, որ ոչ մեկը ձեն չի հանում: Քաջերն իրենց վիրավորված են զգում: Նախատում են նրան: Էն ժամանակ Իսա Բալին առանց ձեն ու ծպտուն հանելու դուրս է գալիս ամրոցից, գնալու պատրաստություն է տեսնում, վող է վերցնում, նոր շորեր է հագնում, զենքերը կապում, ձին քաշում է դուրս, հեծնում գալիս է Նիպար խանության մոտ:

— Դե, ինաս բարով, Նիպար խանում,— ասում է նա:

Նիպար խանությը ճամփու ծախսի համար շատ վող է տալիս: Իսա Բալին քշում գնում է դեպի Ստամբոլ. վող ձիուն ուժ լինի, մարակն էլ դործի լինի, քշի հա քշի, քամու թևերով գնա, կայծակի արագությամբ հասնի տեղ: Քշում է, օրերից մի օր էլ հասնում է Ստամբոլ քաղաքը:

Ստամբոլի շուրջը անտառներ, այգիներ են լինում. Այգիներից մեկն էլ Թագավորի աղջիկ Դոնա խանությին է պատկանում: Դոնա խանումն ու աղախիններն գալիս են էնտեղ: Իսա Բալին ձին քշելիս էր այդուց ձեն է լսում: Անծանոթ է լինում, քշում գնում է դռան մոտ, դուռը բաց է անում, նա-

---

* Այսօր ես մի քաջ եմ ուզում,
Ինձ հետ գնա ու գա,
Ընկնի օտար երկները
Ինձ հետ գնա ու գա:

**Քաջը պետք է լինի քաջ,
Հարուստներից առնի բաջ,
Թշնամիներին թրով խփի,
Խփի, գարկի ինձ հետ:

յում, մեկ էլ մի հուրի-փերի աղջիկ է տեսնում։ Երբ նայում է, ճնում է զարմացած, ուշքը գլխից գնում է։ Աղջիկն էլ տեսնում է նրան, տեսնում է, որ մի երիտասարդ ձիու սանձից բռնած՝ անշարժ կանգնել է դռան մոտ, ուղիղ իրեն է նայում։ Աղախիններից մեկին ասում է.

— Գնա, նրան ասա, որ էս այդին Թագավորի աղջկանն է, վայել չէ, որ էդպես կանգնել նայում է։ Էստեղ ինչ գործ ունի, Թող գնա։

Աղախինը գալիս է նրա մոտ և ասում.

— Բարի երիտասարդ, էս այդին Թագավորի աղջիկ Դոնա խանումինն է, ոչ մի տղամարդ ոտ չի դնում էստեղ, ինչ գործ ունես էստեղ, դուրս արի գնա։

— Ավելի շուտ կմեռնեմ, քան էստեղից կգնամ,— ասում է Իսա Բալին։

Նրանց խոսակցությունը Դոնա խանումը լսում է, տեսնում է, որ էդ լավ երիտասարդը դուրս չի գնում։ Էս անգամ ինքն էլ է գալիս։ Գլխին քառասուն մազի հյուսք է ունենում։ Իր հյուսքերից մեկը կտրում, սազի տեղ դնում է սպիտակ կրծքին և երգելով Իսա Բալուն հասկացնում է, որ էնտեղից հեռանա գնա.

Բաշընա դոնում, զավալը օղլան,
Գյալ գեթ բուրադան,
Սարըմ ջանըմ սննա ֆիդան,
Բույուր, Իսա Բալի, գյալ գեթ բուրադան*։

Էն ժամանակ Իսա Բալին էլ վերցնում է իր սազը և նվագում. տեսնենք ինչ պիտի ասի.

Ջամլիբելդեն բուրա գյալմիշամ**։

Աղջիկը նայում, իր մտքում ասում է. «Է՛հե՛, ուրեմն սա Քորօղլու խլիթներից է». Իսա Բալին ասում է.

---

* Մատաղ լինեմ, այ խեղճ տղա
Եկ, այստեղից գնա,
Գլուխս, հոգիս քեզ մատաղ,
Ե՛կ, Իսա Բալի, եկ այստեղից գնա։
**Ջամլիբելից եկա այստեղ։

Օլեր Իսա Բալի, գեթմեզ բուրադան,
Սեննա գուրբան օլում,
Օլեր Իսա Բալի, գեթմեզ բուրադան։
Դեիր Դոնա խանում,
Օ սոզ սեննըն բաշընի ապրըդար,
Բույուր, Իսա Բալի, գյել գեթ բուրադան,
Բոլի բեդ Քորօղլնի թուֆուրդըր,
Բույուր, Իսա Բալի, գյել գեթ բուրադան*,

Իսա Բալին ասում է.

Օ սոզ բաշըմի ապրըթմազ,
Բոլի Քորօղլունու թուֆմազ,
Օլեր Իսա Բալի, գեթմեզ բուրադան**։

Դոնա խանումն ասում է.

Դոնա խանում գեյեր.—Ջան Իսա Բալի,
Սեննա գուրբան բու շիրին ջանըմ,
Սեննեն Յուսուֆուն Քանհանի,
Բույուր, Իսա՛ Բալի, գյել գեթ, բուրադան***,

Իսա Բալին ասում է.

---

*Իսա Բալին կմեռնի, այստեղից չի գնա,
Թող ես քեզ մատաղ լինեմ,
Իսա Բալին կմեռնի, այստեղից չի գնա։

Դոնա խանումն ասում է.

Այդ խոսքը քո գլուխը կցավացնի,
Ե՛կ, Իսա Բալի, եկ այստեղից գնա,
Բոլի բեկը Քորօղլուն բռնել է,
Ե՛կ, Իսա Բալի, եկ այստեղից գնա։
**Այդ խոսքը գլուխս չի ցավացնի,
Բոլին Քորօղլուն չի բռնի,
Իսա Բալին կմեռնի՝ այստեղից չի գնա։
***Դոնա խանումն ասում է՝ Ջան Իսա Բալի,
Քեզ մատաղ լինի այս քաղցրիկ հոգիս,
Դու նման ես Յուսուֆ Քանհանին,
Ե՛կ, Իսա Բալի, եկ այստեղից գնա։

Համ դինըմսայն, համ՝ իմանըմ,
Ալագյոզ ուսաուննդա գաշըն քյամանըն,
*Օլար Իսա Բալի, գեթմազ բուրադան**:

Դոնա խանումը տեսնում է, որ Իսա Բալին եթե սպանվի էլ, էնտեղից չի հեռանա: Ինքն էլ սիրում է նրան: Իր աղախիններից մեկին կանչում ասում է.

— Մ՛յ աղջիկ, շորերդ հանիր տուր ինձ, ուրիշ շորեր հագիր, էս ձին էլ տար Ծաս գոմում կապիր, Ֆորօղլու ձիու մոտ կապիր, կեր տուր:

Դոնա խանումը աղախնի չադրան գցում է Իսա Բալու վրա, բերում է իր մյուս քառասուն աղախինների մոտ: Տանում է պալատ: Էն ժամանակ Իսա Բալին ասում է.

— Դոնա՛ խանում, էս բոլորը լավ, բայց ես իմ մասին չեմ մտածում, ես Ֆորօղլու համար եմ եկել, որտեղ է նա:

— Իսա՛ Բալի,—ասում է Դոնա խանումը,—իրիկունը Ֆորօղլուն քեզ ցույց կտամ:

Մնում է մինչև իրիկուն. մութն ընկնում է: Դոնա խանումը և աղախինները Իսա Բալուն իրենց հետ վերցնում տանում են Ջուխուր-Մահլան՝ հորի մոտ: Էն ժամանակ Դոնա խանումն ասում է.

— Իսա՛ Բալի, դու ձեն չհանես, ասում են, որ Ֆորօղլին իմաստուն է, տեսնենք, կարող է քո գալդ իմանալ: Հետո ձեն է տալիս Ֆորօղլուն և ասում.

— Ֆորօղլի, էս քանի ամիս է, որ դու բռնվել ես, իսկի քաջերդ միտդ չե՞ն գալիս:

Ֆորօղլին ախ է քաշում, ասում է.

— Դոնա խանում, ձեռքիդ մեջ ինչ կա՝ մտրակ լինի, թե ճիպոտ, մեկ է, գցիր ներքև, որ սազի տեղ դնեմ ու քո հարցին պատասխան տամ, ասում է.

Դիլդան դեյիմ, դիլինա դեյիմ,
Օդ դուշուբ մանիմ դիլիմա,
*Նայըմ յանըը, գյուրպք սոզումու սազնան դեյիմ***:

**Դու իմ հավատն ես, պաշտամունքս,*
Աչքերդ հուր են, ունքերդ՝ կամար,
Իսա Բալին կմեռնի, այստեղից չի գնա:

***Քեզ ինչ ասեմ, ինչ խոսեմ ես,*
Լեզուս այրվում է կրակի պես,
Դարդըս ինչ է՝ սազով ասեմ քեզ:

Աղջիկը վերևից մի ճիպոտ է քցում Բոլօղլու մոտ։ Լսենք, տեսնենք ինչ պիտի ասի Բոլօղլին.

Գենա ըու գյուն քալշլըրմ դուշմիշ մանըմ ֆիքիրիմա,
Բյոսա Բյանհան մանիմ յանմդա գյըրըք,
Եդդի Գեյիմ Նալգըռան Դամրչօղլու յանըմդա գյըրըք*։

Յանուման ասում է,—Էդ չեղավ։
Բոլօղլին ասում է.

Սան գերիսինա բախ,
Փադիշահ սիֆաթլի, ալի բարաթլի,
Ասլան գոլլու, պալան սիֆաթլի,
Բյոսա Սաֆթար յանըմդա գյըրըք**։

Դոնա Յանուման ասում է,—Էդ չեղավ։

Մ'յ, գո, քյոփակ գըզը, սան գերիսինա բախ.

Ուբիշան Ալի, էյվազը գյորմանամ, օլարամ գալի,
Իսա Բալի ըու գյուն յանըմդա գյըրըք***։

Իսա Բալին բերանը մոտեցնում է հորին, ասում է.
—Ջան, Բոլօղլի։
— Ջան, Իսա Բալի,—ասում է Բոլօղլին.

Ջանըմ, դուբլան օլսուն,
Սան յալդուզ գյըլդըն,
Իսա Բալի դեղի։
«Բալի, մանն յալդուզ գյըլմիշամ»**։

---

*Այսօր նորից քաջերս միաս ընկան
Բոսա Բանհանը պետք է մոտս լիներ,
Պայտ կռող Դամրչօղլին պետք է մոտս լիներ։
**Դու հիմա շարունակությունը լսիր.
Թադավորի դեմքով, ձևոքին բարաթ,
Ինքն ասյուծի նման ու վարդի դեմքով։
Բոսա Սաֆարն պետք է մոտս լիներ։
***Այ շան աղջիկ, դու շարունակությունը լսիր.
Ալիի տղան՝ Ուբիշանս, եթե Այվազին չտեսնեմ, կխելագարվեմ։
Իսկ հիմա Իսա Բալին պետք է մոտս լիներ։
****Ես քեզ մատաղ լինեմ,
Ի՞նչ է, մենակ ես եկել,
—Այո, մենակ եմ եկել,—ասում է Իսա Բալին։

Երբ Քորօղլին նրա անունը տալիս է, Դոնա խանումը լռեն ասում է. «Կա, չկա Իսա Բալին Քորօղլու և նրա կնոջ կողմից սիրված քաջերից է»։ Քորօղլին հասկանում է դրա միտքը։ Թոկ են բերում. քառասուն աղախին, Դոնա խանումն ու Իսա Բալին էլ թոկով Քորօղլուն հորից հանում։ Տանում են Դոնա խանումի պալատը, ուտում, խմում, քեֆ են անում մինչև լուսաբաց։ Էդ ժամանակ Դոնա խանումը Քորօղլու թուրն ու վահանը, զենքերը բերում դնում է նրա առաջ։ Իսա Բալին ձիերին լավ թիմարում է, թամբում, գնալու պատրաստություն է տեսնում։ Էդ ժամանակ Քորօղլին ասում է։

— Դոնա խանում, թուլլ տուր գնանք։

Ձիերը դուրս են քաշում։ Իսա Բալին ու Քորօղլին հեծնում են։ Դոնա խանումը կանգնում է պալատի աստիճանների վրա, որ նրանց ճամփա գցի։ Քորօղլին ասում է։

— Դոնա խանում, էս երեք չորս ամիս է, ինչ ես հորի մեջ քո հայդով ապրեցի, ձեռքդ տուր կերթամ հալալ արա։

Դոնա խանումը միամիտ է լինում։ Ձեռքը տալիս է նրան։ Քորօղլին նրա ձեռքից բռնում, բարձրացնում դնում է ձիու գավակը։ Դոնա խանումն էլ հենց էդ բանն էր ուզում։ Իսա Բալուն էր սիրում։ Ձիերը քշում են՝ «Հայդե, գնաց»։

Լույսը բացվում է։ Աղախիններն էլ լուր են տանում, թե՛ Քորօղլին Զուլխուր Մահլայի հորից դուրս եկավ գնաց, Դոնա խանումին էլ իր հետ տարավ։

Բոլի բեկի բարկությանը չափ ու սահման չի լինում։ Չէ՞ որ Դոնա խանումը նրա նշանածն էր։ Նա, Ղաջարօղլին, Հասանը ու Հուսեյինը հեծնում են ձիերը։ Բոլի բեկը զորքին հրամայում է թե՝ ես առաջուց գնացի, դուք իմ հետևից եկեք։

Ընկնում է նրանց հետևից, Քորօղլին հետ է նայում, տեսնում է, որ կայծակի արագությամբ չորս ձիավոր են գալիս։ Ձիուց իջնում, ասում է.

Իսա Բալի, թե որ կռիվ եղավ, դու Դոնա խանումին դիր ձիու գավակը տար մի տեղ կաց, ինձ սպասիր։

Իսա Բալին մի քիչ հեռանալուց հետո մի տեղ ձին օրուկում է, ինքն էլ Դոնա խանումին գրկում տեղն ու տեղը քնում են։ Իսա Բալու մտքով չի անցնում, որ Քորօղլին կարող է կռվի բռնվել։ Քորօղլին Բոլի բեկի, Ղաջարօղլու, Հասանի ու Հուսեյինի առաջը կտրում, ասում է.

— Ձեր է՛ս ու է՛նը, Բոլի բեկ, ախր դու դառել էիր իմ

արնախպերը, ինչո՞ւ էպխի բան արիր։ Դաջ՛րօղլի, դու ինչո՞ւ իմ գենքերը վերցրիր։ Դե, հիմա պատրաստվեք, մեր կռիվը՝ կռիվ է։ Թադավորի պալատում ձեզ շատ էիք գովում։ Զորսին էլ սպանում է։ Զորքն հասնում է տեղ։ Մեծ կռիվ է լինում։ Բորօղլին էնպես է կռվում, որ ոչ մեկը չի կարողանում ետ դառնալ, մնացածներն էլ վախից փախչում, ցրիվ են գալիս։

Բորօղլին դրանից հետո շարունակում է իր ճամփան։ Ճամփին լինչ տեսնի. տեսնում է, որ Իսա Բալին Դոնա խանումին գրկել քնել է։ Ոտը խփում է Իսա Բալու ոտին։ Նա տեղից վեր է թռչում, տեսնում է, որ Բորօղլին կանգնել է գլխավերևը։ Վախից նրա շրթունքները ճաքում են, իր մտքումն ասում է. «ինձ կսպանի» (նրան իմ արածը դուր չի գա)։ Բորօղլին քշում գնում է։ Իսա Բալին էլ վեր է կենում, Դոնա խանումին թողնում քնած, ինքն էլ քշում գնում է նրա ետևից։ Բորօղլին ետ է նայում, տեսնում է, որ Իսա Բալին Դոնա խանումին չի բերել, ասում է։

— Ա՛յ տղա, Իսա Բալի, ո՞ւր է Դոնա խանումը։

— Բո՛րօղլի,— ասում է նա,— ես քո վախից չբերեցի։

— Ե՛տ դառիր, գնա գլուխդ գավակը բեր, ներեցի քեզ, ասում է Բորօղլին։

Իսա Բալին ետ է դառնում, Դոնա խանումին գնում է ձիու գավակը, քշում գալիս հասնում է Բորօղլուն։ Միասին գնում են դեպի Զարդաղլի Զամլիրելի։

Շատ են գնում, թե քիչ են գնում, մի օր էլ հասնում են Զարդաղլի Զամլիրելի սահմանը։ Հանդապահները, նախրապաններըը, հովիվները տեսնելով վերադարձող Բորօղլուն, շտապում, գնում են աչքալուս են տալիս Նիգար խանումին.

— Ա՛չքդ լուս, Բորօղլին եկավ,— ասում են նրանք։

Բորօղլու տղան՝ Այվազ Բալին մի քանի խփիթների հետ գալիս է հորը դիմավորելու։ Այվազ Բալին առաջն է լինում, իսկ մյուսները նրա ետևից են գալիս։ Բորօղլին դրանց նկատում է և սազով Դոնա խանումին ասում.

Դանիշըրդն նեշի-նեշի,
Յանըրդն ջիդյըրիմն բաշի,
Էյվազդը ղոչ Բորօղլուննուն գարդաշի,
Բուդըը՝ գյալն Էյվազդըը.
Գյալն Էյվազդը, բու գյալն,
Սանա դեյիմ, Դոնա խանում,

Գյալեն էյվազդըը, բու գյալեն,
Սաբիմ, ջանըմ սանա ֆիդան,
Գյալեն էյվազդըը, բու գյալեն։
Էյվազ օնբեշ յաշընդադըը,
Դուռնա թելլար բաշնդադըը,
Գալամ-գուդրաթ գաշնդադըը,
Գյալեն էյվազդըը, բու գյալեն*։

Գալիս՝ հասնում են իրար։ Քորօղլին իր տղայով շատ է ուրախանում։ Հետո քշում հասնում է Զարդաղլի Զամլիբելի գագաթը։ Իջնում են ձիերից. ուրախանում են. խմում, քեֆ անում։ Դոնա խանումին տալիս են Իսա Բալուն։

Եդդի գյուն, եդդի գեջա չալղլար չալնդի, շաքար ազալդի, շաքրաթ իչիլդի, եյիր, իչդիլար, քեֆ չաքդիլար։ Դոնա խանում Իսա Բալիդա գեթսին օզ մուրազնա եթիշսըն, սիզդա գեդին օզ օղլանլարըզըն մուրազնա եթիշին[3]**։

---

*Խոսում էիր քաղցրիկ լեզվով,
Ջիգարիս կրակ տվիր,
Այվազը քաջ Քորօղու եղբայրն է,
Տես՝ եկողն ինքն Այվազն է։
Եկողն Այվազն է, տես՝ նա է գալիս,
Քեզ եմ ասում, Դոնա խանում,
Եկողն Այվազն է, տես՝ նա է գալիս,
Գլուխս, հոգիս քեզ մատաղ,
Եկողն Այվազն է, տես՝ նա է գալիս։
Այվազը տասնհինգ տարեկան է,
Կռունկի փետուրները գլխի վրան են,
Նա կամար ունքեր ունի,
Եկողն Այվազն է, տես՝ նա է գալիս։

**Յոթն օր, յոթ դիշեր երգիչները երգում են, նվագում, շաքար են գործածում, օշարակ են խմում, ուտում, խմում, քեֆ են անում։ Դոնա խանումն ու Իսա Բալին թող գնան իրենց մուրազին հասնեն, դուք էլ գնացեք ձեր տղաների մուրազին հասեք։

ԲՈՐՕՂԼԻՆ ԵՎ ԲՈՐՕՂԼԱՆԸ

Բորօղլան անունով մարդու մեկը գնում է մի ագայի մոտ դառնում ծառա։

Օրերից մի օր ագան ասում է.

— Ով որ Բորօղլու Դառթ ձին բերի, աղջիկս կտամ նրան։

— Ես կբերեմ,— ասում է Բորօղլանը,— և վեր է կենում, գնում է Բորօղլու մոտ։ Մի քանի տարի ծառայում է նրա տանը։ Բայց ինչ անում, չի անում, չի կարողանում Դառթը ձեռք բերել։ Ճարահատված Տոռաթ ձին է տանում. հեծնում և վախցնում է։ Էդ ժամանակ Բորօղլուն լուր են տանում, թե՝ քա չես ասի, Բորօղլանը Տոռաթին տարավ։

Բորօղլին հեծնում է Դառթ ձին և ընկնում է նրա ետևից։ Մոտենում է։ Բորօղլանը նայում տեսնում է, որ Բորօղլին էս է հասնում է։ Բշում է ճամփի վրա գտնվող ջրաղացի առաջ։ Ձիուց իջնում մտնում է ներս։ Շուտ-շուտ ջրաղացպանի շորերը հագնում ու դուրս է գալիս։ Տեսնում է, որ Բորօղլին էլ հասավ էնտեղ։ Բորօղլին կարծում է թե դա ջրաղացպանն է։ Դառթի սանձը տալիս է նրա ձեռքը և մտնում է ներս, որ Բորօղլանին վնասի բռնի։ Էդ ժամանակ ջրաղացպանի շորեր հագած Բորօղլանը հեծնում է Դառթ ձին ու արագ հեռանում ջրաղացի մոտից։

Մնում է Տոռաթը։

Բորօղլին էս անգամ Տոռաթ ձին է հեծնում և ինչ անում, չի անում, ինչքան քշում, չի քշում, չի կարողանում Դառթին հասնել, Բորօղլանին բռնել։ Ճարը կտրած, իր եկած ճամփով ետ

է դառնում։ Ասում է ինքն իրեն. «Ես ինչ արի՝ Ղաթին տվի նրան, Տոռաթն առա, էս ինչ եղավ, վայ ինձ»։

Մեր Բոլօղլին վերադառնում է իր քաղաքը, բնակիչները նրան ձեռ են առնում, ասում.

— Ա՛յ Բոլօղլի, Ղաթը տվիր, Տոռաթն առար։ Ֆանի՞ թուման ավել տվիր։ Բազարդ շնորհավոր լինի։

Բոլօղլուն ձեռք են առնում, ծիծաղում նրա վրա։ Կինն էլ նրան ձեռք է առնում։ Բոլօղլին ասում է.

— Մի օր առանց Ղաթի չեմ կարող ճնալ։ Թլխամ է անում, դառնում է դերվիշ։ Վեր է կենում, ճամփա ընկնում, մտածում է, «Թե որ Ղաթին չբերեմ, չեմ դառնա տուն։ Ղաթը չլինի, բանս բուրդ է»։

Գնում է էն ադայի գյուղը, ուր գտնվում է Ղաթը։ Դերվիշություն է անում։ Ղաթին էլ չի թողնում, որ ոչ մի մարդ իրեն մոտենա, լուր են տանում ադային.

— Մի դերվիշ է եկել, թուղթ է բաց անում։

— Գնացեք նրան բերեք էստեղ,—ասում է ադան։

Գնում դերվիշին բերում են։ Դերվիշը Ղաթին կեր է տալիս։ Գալիս ադային ասում են։

— Վալլահ, ձին հանդարտվեց։

Դերվիշը մի շաբաթ ձին խնամում է։ Ադան էլ լավ վարձ է տալիս նրան։ Օրերից մի օր դերվիշն ասում է.

— Ադա, հրաման տուր, էսօր ձին հեծնեմ, վարժեցնեմ։

Թույլ է տալիս։

Դերվիշը հեծնում է, իր ձիու մեջքին մի թլբամի թուղթ է անում, դառնում է Բոլօղլի։ Ժողովուրդը նրան տեսել էր, ճանաչում էր, լուր են տանում ադային, ասում.

— Բերածդ դերվիշը, դերվիշ չէր, Բոլօղլին էր։

Բոլօղլին ձին մի երկու մեյդան քշում է։ Ժողովուրդի միջից նրան հարցնում են.

— Ո՞ւ ձին ինչ արժի։

— Իմ ձին,—պատասխանում է նա,—արժի ութանասուն հազար աղջիկ, ութանասուն հազար եզ, ութանասուն հազար ձի, ութանասուն հազար գոմեշ, ու քշում գնում է։ Ասելով.

— Ով որ ուզում է, թող իմ ետևից ընկնի, ձիս տարա։

Ադան զրկք է հավաքում, ընկնում է նրա ետևից։ Բոլօղլին դառնում է դրանց վրա. էնպես է կոտորում, կենդանի էն

մարդն է մնում, ով իր տանից դուրս չէր եկել։ Փշում գնում է իր տունը։ Տնեցիք ուրախանում են։ Ժողովուրդն էլ հավաքվում է, աչքալուսանք են տալիս նրան, ուրախանում են։

Թող նրանք գնան հասնեն իրենց մուրազին, դուք էլ հասեք ձեր մուրազին[4]։

ՓՈՐՕՂԼԻՆ ԵՎ ԳԶԻՐՕՂԼԻՆ

Թագավորին (շահին) լուր են տանում, թե Փորօղլին քո սահմանի մեջ է մտել։

Ասում է.— Ով որ գնա Փորօղլուն բռնի բերի և կամ նրան սպանի, կամ էլ՝ նրա ձին բերի, թող գա, իմ թագավորության կեսը նրան կտամ, մենակ թագս չեմ տա։

Գզիրօղլին իր ծովային ձին հեծնում է, քշում է Փորօղլու ետևից։ Մի ժամանակ Փորօղլին ետ է նայում, տեսնում է, որ կայծակի արագությամբ մի վոթաւրկաբեր ամպ է նրան մոտենում։ Ղռաթի բերանից սանձը հանում և քշում է ծովի մեջ։ Ղռաթը լող է տալիս։ Հանկարծ նրա ետևից լսվում է ջրի ճողվյուն։ Գզիրօղլին նրան ձեն է տալիս, ասում է.

— Տնաշենի մարդ, դե, պատրաստվիր, իրար հետ չափվենք։

Փորօղլին ետ է նայում, տեսնում է, որ Գզիրօղլին է. «Սրա հետ կռվելը,— մտածում է նա,— կարող է երկար տևել, ճամփից կուշանամ»։ Ասում է.

— Գզիրօղլի, քաջի տղա, քաջ, իգիթը իգիթին ճամփից ետ չի գցի։ Գզիրօղլին կանգ է առնում։

Էն ժամանակ Փորօղլին շարունակում է իր ճամփան, Գզիրօղլին էլ վերադառնում է թագավորի մոտ, ասում է.

— Նա քշեց ծովի մեջ, իմ ձին չկարողացավ ջրում լող տալ։

Թագավորը մի քանի անպատվաբեր խոսքեր է ասում նրան.

— Գլուխդ էլ ալիսի թողնեմ,— բղավում է նա,— դու էլ ես ուզում ինձ խաբել։

— Ես մենակ ցամաքի վրա կարող եմ կռվել. ծովի վրա չեմ կարող,— իր խոսքն է պնդում Գզիրօղլին։

— Թող քո ասածը լինի,— ասում է թագավորը։ Էլի մեր հին պայմանի համաձայն, թե որ Քորօղլուն գերի բռնեցիր բերիր, կամ սպանեցիր, կամ նրա Ղռաթ ձին բերիր, մեր պայմանը՝ պայման է, իմ թագավորության կեսը քեզ։

Գզիրօղլին վեր է կենում, գնում է դեպի Զարդաղլի Զամլիբել։ Իրիկունը գնում է Քորօղլու տան պատուհանի տակ պահ է մտնում։ Իր լսողությունը սրում է. «Տեսնես, Քորօղլին ինչ է անում՝ քնո՞ւմ է, թե արթուն»,— մտածում է նա։

Գիշերվա ուշ ժամին, մեկ էլ լսում է, որ նրա սազի լարերը ձեն-ձենի տվեցին, Թուրն էլ պատյանից դուրս քաշվեց ու նորից մտավ պատյանի մեջ։

Քորօղլին քնից զարթնում և զարմանում է. նրա սազի լարերը ձեն-ձենի են տալիս, մերկ Թուրն էլ պատյանից դուրս է քաշվում և նորից ներս մտնում։

Նա սազը պատի վրայից ցած է բերում և նվագելով մի քանի երգ է երգում։ Ասում է. «Կարիճի տղա, կարիճ, Գզիրօղլի Գզիր, իգիթ սան, զենա իգիթ»*։

Նրա կինը՝ Նիգար խանումն էլ քնից զարթնում, ասում է.

— Ո՛վ Քորօղլի, էդ ինչ երգ է, որ քեզ հետ ես կապում։ Ի՞նչ ես լսել, որ Գզիրօղլուն ես գովում։

— Ճիշտ է կնիկ,— ասում է նա։ Իրանից վերադառնալու ժամանակ, Գզիրօղլին մեր եռևից ընկավ։ Ձուզեցի նրա հետ կռվել, ճամփից ուշանում էի և նա լսեց իմ խոսքը։ Էդ պատճառով էլ եթե ինձ հարցնես, կասեմ Գզիրօղլին և կարիճ, և իգիթ է, և՛ տղամարդ մարդ է։

Էդ ժամանակ Գզիրօղլին դրսից ձեն է տալիս, ասում է.

— Քորօղլի, դուռը բաց արա։

Քորօղլին բաց է անում, ասում է.

— Ներս լինի, Գզիրօղլի՝ գզիր, Քուրդօղլի՝ քուրդ։

Գզիրօղլին ընկնում է նրա ոտքերը, ասում է.

— Իգիթն էլ դու ես, քաջն էլ դու ես։ Քանի որ էդպիսի մարդ ես, դու եղիր իմ մեծը, ես էլ՝ կլինեմ քո փոքր ախպերը։ Ու էդ օրվանից Գզիրօղլին էլ չի գնում թագավորի (շահի) մոտ, մնում է Զարդաղլի Զամլիբել և դառնում է Քորօղլու բաքեվանն ու մտերիմը[5]։

---

* կարիճ ես, էլի կարիճ։

ՓՈՐՕՂԼԻՆ ԵՎ ԻՐ ՏՂԱ ՀԱՄԱՆԸ

Փորօղլին նիգար խանումից երեխա չի ունենում։ Շատ է մտածում. «Ժառանգ չունենալ, դրանից վատ բան չկա աշխարհում», ասում է ինքն իրեն։ Էդպես մտածելով, մի օր լսում է, որ Դաղստանում մի հարուստ վաճառական խոջա գնացել է Մեքքա, բայց էլ չի վերադարձել, ճամփին մնռել է։ Պատմում են, որ էդ մարդու կինը շատ գեղեցիկ և խելոք է։ Փորօղլին ասում է. «Պիտի գնամ Դաղստան աչքովս տեսնեմ էդ կնոջը, նրան շատ են գովում», Ջին հեծնում, գնում է։ Հասնում է Դաղստան, լսնում է էդ հարստի տանը։ Փորօղլուն հյուրասիրում են և պատվում։ Բայց չեն իմանում թե ով է։ Փորօղլին վերջը էդ խոջայի կնոջը տեսնում է. «Էսպիսի սիրուն կին չկա աշխարհում»,—մտածում է ինքն իրեն և հոգով ու սրտով հավանում։ Շատ է ուզում հետը խոսել, բայց չի հաջողվում։ Երկար՝ քսան թե երեսուն օր Դաղստանում մնալով, մի անգամ Փորօղլին մի պառավ կնոջ հանդիպում է ու ասում.

— Ա՛յ տատի, թե որ էս ինչ հարստի կնոջ մոտ իմ մասին քաղեխոսես, շատ փող կտամ քեզ։

Պառավը շատ փող է վերցնում։ Փորօղլին էլ տալիս է։ Նա չքավորներին պաշտպան էր։ Պառավը վեր է կենում, գնում է էդ հարստի՝ խոջայի կնոջ մոտ, ասում.

— Արդեն քսան օր է, թե մի ամիս, մի սիրուն՝ բոյով ու քուսաթոով հյուր է եկել, իջել է ձեր տանը, ամոթ չլինի հարցնել ինչու՞ համար է եկել։

— Ա՛յ պառավ,—պատասխանում է խոջայի կինը,—եթե մի տարի էլ ճնա, սովորություն չունենք հյուրից հարցնել թե ո՞վ է և կամ ինչի՞ համար է եկել։

— Իմ խելքով,—իր խոսքն առաջ է տանում պառավը,—էդ մարդը քեզ տեսնելու համար է եկել։

— Ա՛յ պառավ,— ասում է խոջայի կինը,— ինչպես տեսնում եմ փորացավ ունես, ասածդ լինչ է։

— Վալլահ, ճիշտ ես ասում, վրա է տալիս նա։ Հյուրդ Քոռօղլին է։ Քո սիրտ համար է եկել։

Խոջայի կինը ասում է.

— Էդպես բան չեմ կարող ընդունել։ Մարդս նոր է մեռել։ Գնա, իրեն հասկացրու, Թող վերադառնա, հյուր է, բարով է եկել, բարով էլ գնա։

Պառավը վերադառնում է Քորօղլու մոտ, ասում է.

— Խոջայի կինը էսպես-էսպես բան ասաց, խոսք չտվեց, ասում էր՝ մարդս նոր է մեռել, սգվոր եմ։

Քորօղլին տեսնում է, որ խզուր տեղն է ինում։ Հեծնում է ձին ու վերադառնում Զարդապլի Զամլխել։

Էդ օրվանից անցնում է մեկ ու կես տարի. Քորօղլու ականջին է հասնում, որ խոջայի երրորդ հոգեհացն էլ տվել են։ Նշանակում է սգի ժամանակն արդեն անցած պիտի համարել։ «Բանի որ էդպես է, ասում է նա, նորից կգնամ, իրենց չունեմ, էդ կնոջ հետ պիտի խոսեմ» ու նոր շորեր է հագնում, հեծնում է ձին, քշում գնում է Դաղստան։ Գնում է խոջայի տան առաջ ձիուցն իջնում։ Ծառաները գալիս են նրան տանում ներս, հյուրասիրում։ Գիշերը Քորօղլին էդ հարստի (խոջայի) տան ծառաներից մեկին կանչում է իր մոտ։

Ծառան գալիս է։

— Ա՛յ տղա,— ասում է Քորօղլին,— արի խոջայի կնոջ քնելու տեղն ինձ ցույց տուր։

— Ա՛յ իգիթ,— ասում է ծառան,— ամոթ է, արդեն գիշերվա կեսն է, հիմա քնած կլինի։

— Քեզ ասում եմ, որ գաս ինձ ցույց տաս, եթե չգաս, Թրի մի հարվածով վիզդ կթռցնեմ,— ասում է Քորօղլին։

Ծառան ընկնում է նրա առաջ, տանում և ասում է.

— Ա՛յ, էս աենյակումն է քնում, ես իրավունք չունեմ ներս մտնել։

Ծառան վախից էլ չի սպասում, վերադառնում է իր տեղը։

Քորօղլին դուռը բաց է անում, գնում է ներս։ Խոջայի կինը նստած է լինում տեղաշորի մեջ։

— Վա՜յ, Քորօղլի,— ասում է նա,— էս գիշերվա կեսին ինչու՞ ես եկել։

— Քեզ համար եմ եկել,— պատասխանում է Քորօղլին։

— Վայ, վայ,—ասում է կինը,—էդ երբեք չի լինի։

— Անցած անգամ, վրա է տալիս Քորօղլին,—քեզ համար էստեղ քառասուն օր մնացի։ Դու ինձ մերժեցիր, ասացիր թե՝ ագվոր եմ, իսկ հիմա ի՞նչ կասես։

Խոջայի կինը շատ է դես ու դեն ընկնում, չեմ ու չում անում, բայց հնար չի լինում ազատվել։ Համաձայնվում է։

Քորօղլին մատ երեք ամիս մնում է Դաղստանում։ Բոլոր դաղստանցիք լսում են, որ խոջայի կինը ամուսնացել է, բայց չեն իմանում թե ում հետ։ Կինն էլ երեխով է մնում։

Քորօղլին երեք ամսից հետո, մի օր ասում է կնոջը.

— Իմ լավ, իմ բարի կին, Զարդաղլի Զամլիբելում զորք ունեմ, անտեր անտիրական եմ թողել։ Մի հատ ոչխար առանց հովվի, ինչ ես կարծում, դրա վիճակն ինչ կլինի։ Իմ իգիթներն էլ հիմա մենակ են մնացել, պետք է ինձ հրաման տաս, որ գնամ նրանց հասնեմ։

Կինը պատրաստություն է տեսնում, ամեն ինչ դնում նրա հետ։ Քորօղլին հեծնում է ձին, կանչում է կնոջը և ասում.

— Դու հարուստ ես, ոչ մի բանի կարիք չունես, որ քեզ օղնեմ, բայց հիմա երեխով ես մնացել։ Առ էս բազբանդը*, թող քեզ մոտ մնա, եթե տղա բերեցիր, ես գիտեմ, երբ խելահաս դառնա, կհարցնի իմ մասին, քայլից քայլ կլինի, էն ժամանակ էս բազբանդը նրա թևին կապիր, թող գա՝ ինձ մանգա, իսկ եթե աղջիկ բերեցիր, նրա օժիտի հետ դիր։

Քորօղլին մնաս բարև է ասում և ձին քշում գնում է Զարդաղլի Զամլիբելի կողմը։

Թող նա գնա իր գործին, մենք խոսենք խոջայի կնոջից։

Էն քաղաքում, որտեղ բնակվում էր խոջայի կինը, բոլորը հարգում էին նրան։ Բնակիչները նրան պարտք էին։ Նա Քորօղլու գնալուց հետո մի տղա է բերում։ Երբ տղան քառասուն օրեկան է դառնում, անունը Հասան են դնում։ Երբ Հասանը վեց-յոթ տարեկան է դառնում, մայրը, որն ունենում է մեծ հարստություն, նրան ուսումի է տալիս։ Տղան կարծում է, թե Խոջան է իր հայրը։

Երբ Քորօղլին էնտեղ է լինում, մի անգամ էդ կինը Դոաթ ձին թողնում է իր զամբիկների մեջ։ Ձին զամբիկներից մեկին

---

* Բազբանդ—ապարանջան։

ծածկում է։ Դա էլ մի քուռակ է բերում։ Մայրն իմանում է, որ էդ քուռակը Քորօղլու ձիուցն է։

Տղան մեծանում, դառնում է տասնչորս տարեկան։ Մի օր, երբ դպրոցից վերադառնում է, տեսնում է, որ չորս—հինգ երեխա հավաքվել են մի տեղ ճան են խաղում։ Մի քաչալ տղա նրանց զոռում է։ Հասանը գալիս է մի ապտակ է տալիս էդ քաչալի երեսին, ասում.

— Ի՞նչ ես երեխաներին վախեցնում, լինչ ես ուզում։

Քաչալը լաց է լինում.

— Անառակի տղա,—ասում է նա,—կարծում ես թե խոջայից ես։ Մի խզիթ եկավ ձեր տուն, երեք ամիս մնաց, մերդ բարձը փոխեց, գու նրանից եղար։ Թե որ լավ մարդ ես՝ գնա հասիր նրան, ինձնից լինչ ես ուզում։

Հասանը երբ էս բանը քաչալ տղայից լսում է, գնում է խանութի, մի քուռ մախաթ ե առնում, մի թելով կապում և գալիս է տուն, ասում.

— Մայրիկ։

— Հա ջան,—ասում է մայրը,—լինչ է իմ Հասան։

Ասում է,—ինձ ասա թե ով է հայրս, նրա անունն լինչ է։

— Լաո,—ասում է մայրը,—գու խոջայի տղան ես։

— Չէ, որ չէ,—ասում է նա,—ես խոջայի տղան չեմ, ասա, տեսնենք թե հայրս ո՞րտեղ է, ո՞վ է։

Ինչ անում, չի անում, մայրը ճիշտ չի ասում։ Ափսոսում է տղային, ինքն իրեն ասում է. «Երեխա է, կդնա պարիը երկիը, կկորչի»։

Հասանը մախաթները առնում է ձեռքը, մոր էս կողքն է ծակծկում, էն կողքն է ծակծկում։ Մայրը լաց է լինում, ցավից չի իմանում թե ինչ անի։ Ու երբ տեսնում է, որ էլ ճար չկա, տղան իրեն պիտի սպանի.

— Լաո,—ասում է նա,—ի սեր իմ կաթի, ինձ մի քրքրիր, կասեմ։

— Ա՛յ, էդպես,—վրա է բերում տղան,—դե ասա, էլ չեմ ձեծի։

— Լաո,—ասո՞ւմ է մայրը,—քո հայրը Քորօղլին է։ Նա Զարդաղլի Զամլիբելումն է մնում։ Ինձ համոզեց, որ ես նրա հետ ամուսնանամ։ Նա է քո հայրը։

— Մայրիկ,—ասում է Հասանը,—պատրաստություն տեսքեզ մոտ էլ չեմ մնա, պիտի գնամ։

Մայրը լաց է լինում, ինքն իրեն ասում է. «Ես էի և էդ մինուճար տղան, նա էլ գնում է, ջիգարս է, ինչպես անեմ։ Վեր է կենում գնում է շուկա, տեսնում է մի ծերունու։

— Ա՛յ խանում,—ասում է ծերունին,—ինչո՞ւ ես էդպես տխուր։

— Հայրի՛կ,—պատասխանում է կինը,—ունեմ, չունեմ մի մինուճար տղա ունեմ։ Հիմա նա էլ է ուզում գնալ Զարդաղլի Զամլիբել, Քորօղլու հետ կռվի, էդ է իմ դարդը, դրա համար է սիրտս մղկտում, լաց լինում։

— Վա՜հ,—բացականչում է ծերունին,—Զարդաղլի Զամլիբելը շատ դժվար տեղ է, տղայիդ ձին էնպիսին պիտի լինի, որ կարողանա Քորօղլու ձիու հետ մրցել։ Գիտես ինչ պիտի անեք։ Յոթ օր ջուր բաց թողեք դութանով վարած մի արտի վրա։ Թող Հասանը ձի հեծնի և մի ծայրից քշի մյուս ծայրը, եթե ձիու ոտքի տակից չոր հող բարձրացավ, իմացած եղիր, որ նրա ձին էլ հետ չի մնա Քորօղլու ձիուց, իսկ եթե նրա ոտքերի տակից չոր հող չբարձրացավ, թող չգնա, մեղք է։

Մայրը վերադառնում գալիս է տուն։ Հասանի ձին էլ Քորօղլու ձիուց է սերված լինում։ Մայրն ասում է.

— Ի՛մ Հասան, լսո՛, էս ինչ մարդու գութանով վարած արտն էս ինչ աղբյուրի մոտ է գտնվում, գնա էնտեղ և յոթը օր, յոթը գիշեր ջուր բաց թող դրա վրա։

Հասանը արագաշարժ է լինում։ Գնում և ջուրը բաց է թողնում էդ արտի վրա։ Ջրի շատությունից արտը ճահիճ է դառնում։ Հասանը գալիս է և ասում.

— Մայրի՛կ, արտը էլ ջուր չի ծծում, ջուրը լճացել ճահճացել է։

— Լա՛ո,—ասում է մայրը,—ձի ունես, գնա էդ արտի մեջ ջիրիդ խաղա. արտի մի ծայրից քշիր մյուս ծայրը, նայիր, տես թե՝ ձին ինչ է անում։

Հասանը հեծնում է ձին, գնում է արտի մոտ ու քշում։ Ջրում, ճոնում է ցեխի մեջ։ Մի ծայրից գնում է մյուս ծայրը։ Նայում, տեսնում է, որ ձիու ոտքերի տակից չոր հող է բարձրանում և իր գլխի վերևից թափվում է ներքև։ Ձին էնքան ուժեղ է լինում, որ ոչ քրտնում է և ոչ էլ հոգնում։ Ջրում գալիս է տուն։ Ջուր է բերում, ձին լվանում և ասում է.

— Մայրի՛կ, ձիս պակասություն չունի։ Արտի մի ծայրից քշեցի մյուս ծայրը, չոր հող էր բարձրանում և իմ գլխի վերև-

վից թավիում էր ներքև։ Մայրիկ, դե իմ պատրաստությունը տես, որ գնամ։

Մայրը նրա պատրաստությունն է տեսնում։ Դե, նրա տղան էր, նրա ջիգարն էր։ Էնպիսի պատրաստություն է տեսնում, որ ոչ ոք էպլիսի պատրաստություն չէր տեսել իր տղայի համար։ Մի լավ ձեռք շոր է կարել տալիս, շատ վող է նրա հետ գնում, իր կրծքի կաթը հալալ է անում։ Մնդուկի դուռը բաց է անում, պահված բազրանդը հանում, նրա աջ թևի վրա, շապկի վրայից, շորերի տակով կապում։

— Դե,—ասում է նա,—լմո, թող քեզ բարի ճանապարհ լինի։ Ով որ էս բազրանդին տեր դարձավ, իմացիր, որ քո հայրն է։ Էս բազրանդով հայրդ քեզ կճանաչի։ Մենակ մորդ չմոռանաս։

Հասանը վեր է կենում, ձին քաշում է դուրս, հեծնում է, ճնաս բարով է ասում իր մորը և քշում գնում է դեպի Զարդապլի Զամլլրել։ Մի օր է գնում, թե երկու, շատ է գնում, թե քիչ, մի օր էլ հասնում է Զարդապլի Զամլլրել։ Հենց Քորօղլու սահմանում իր վրանը զարկում է, ձին կապում, հետո նստում է և հանգստանում։

Քորօղլին սովորություն է ունենում, ամեն օր քյոշկ ու սարայից հեռադիտակով իր սահմանի չորս կողմը նայել։ Ինչու համար։ Նրա համար, որ տեսնի թե քարավաններ, վաճառականներ, հարուստներ չլինեն երևում, որ գնա նրանց ապրանքը խլի և բերի բաժանի չքավորներին։ Էդ օրն էլ նայում, տեսնում է, որ մի փոքրիկ վրան է երևում իր սահմանի մեջ։ Ինքն իրեն մտածում է. «Էս ինչպիսի՞ մարդ է, ինչպիսի՞ խզիթ է, որ եկել է իմ հանդում վրան է զարկել»։ Ձին դուրս է քաշում, հեծնում և կամաց դաշտն իջնում։

Հասանը նայում, տեսնում է, որ մի ձիավոր դուրս եկավ անտառից։ Ինքն իրեն ասում է. «Կա չկա, սա իմ թշնամին էֆ, ձիու փորկապերը պնդացնում է, իր ձախ ձեռքով թուրը բռնում, աջով՝ վահանը, գալիս է նրա հետ կռվելու։ Նա և Քորօղլին կռվում են։ Շատ են կռվում, բայց ոչ մեկը մյուսին չի կարողանում գետնել, հաղթել։ Քորօղլին նայում, տեսնում է, որ իր հետ կռվողը խզիթ է, բայց չի ճանաչում, ասում է.

— Ա՛յ Ջահել-Ջիվան տղա, մենք ենք իրար թշնամի, իսկ էս անասուններն ինչ են արել, որ էսպես չարչարում ենք։ Ձիուց իջիր, արի կռիս բռնենք, թե որ ես քեզ գետին գցեցի

ես գլուխդ կկտրեմ, թե որ դու գցեցիր, էն ժամանակ դու՝ կկտրես։

Երկուսն էլ ձիերից իջնում են ու կռիվ են բռնում։ Քորօղլին Հասանին գցում է գետին և թուրը քաշում է, որ գլուխը թռցնի, ասում է.

— Ա՛յ ջանըմ, էս շորերն ախտոս են, որ արյունոտվեն։ Տղայի շորերը հանելու ժամանակ տեսնում է, որ մի բազբանդ է նրա թևից կապած։ Էդ ժամանակ հիշում է Դալաստանը։ Բազբանդին է նայում՝ իսկական էն էր, որ տվել էր իր կնոջը, ախ է քաշում, ասում է.

— Հեյ վախ, հեյ վախ, քիչ էր մնացել տղայիս մորթեի։ Տղային բաց է թողնում, ասում է.

— Անուշ տղա, քո անունն ինչ է։

— Իմ անունը Հասան է,— պատասխանում է տղան։

— Ամոթ չլինի հարցնել, որտեղացի՞ ես։

— Դալաստանից եմ, Հաջար խանումի տղան եմ,— ասում է Հասանը։

Քորօղլին հուզմունքից գոռում է, ասում.

— Ա՛յ տղա դու իմ տղան ես, առաջուց ինչո՞ւ չասացիր, քա որ հանկարծ քեզ սպանեի։

— Ես էդպիսի բան չէի կարող անել, դու ինձ վախկոտ կհամարեիր, դրա համար էլ չասեցի,— պատասխանում է տղան։

Քորօղլին նրան շատ է սիրում, համբուրում է. «Քաջից քաջն է լինում», ասում է նա։ Վերցնում բերում է տուն, Նիգարի շապկով անց է կացնում, գարձնում է նրա տղան։ Նիգարն իր աչքի լույսի պես է սիրում նրան։

Հիմա թող Քորօղլին գնա իր գործին, թող իր իգիթների հետ գրաղվի, թող Հասանն ու Նիգարն էլ Զարդաղլի Ջամլիբելում ճոճան։

Հասանը շատ է սիրում որսորդություն։ Մի օր գնում է որսի, գալիս է Նիգար խանումի մոտ, ասում է.

— Ա՛յ մեր, հորս բոլոր բանալիները ինձ տուր, գնամ պահեստները բաց անեմ, տեսնեմ ինչ կա, ինչ չկա։

— Լա՛ռ,— ասում է Նիգարը,— բանալիներն էլ քոնն են, սենյակներն էլ։

Վերցնում է բանալիները և մեկ-մեկ դռները բաց անում։ Հասանը շատ սենյակների դռներ է բաց անում։ Մի կողպած դուռ էլ է բաց անում, գնում է ներս, նայում, ինչ տեսնի,

պատին փակցված է մի աղջկա նկար։ Աղջիկ չէ, գեղեցկուհի է, գեղեցկուհի չէ, հուրի փերի է, պարանոցը էնքան թափանցիկ է, որ սև չամիչն ուտելիս՝ երևում է։ Հասանը երբ որ էդ նկարը տեսնում է, խելքը կորցնում է, ուշաթափվում և տեղն ու տեղն ընկնում է։

Թող նա էդ վիճակում մնա։

Նիգար խանումը տեսնում է, որ Հասանը, որի մոտ էին բանալիները, ուշացավ, չվերադարձավ։ «Ինչո՞ւ չեկավ»,—մտածում է նա։ Նիգարը շատ է սիրում Հասանին։ Վեր է կենում, գնում, տեսնում է, որ Հասանը ոնց որ յոթը տարվա մեռել լինի։ Ջեռքը դնում է նրա սրտին, սիրտն աշխատելիս է լինում։ Նիգար խանումը և մի ադամին Հասանին վերցնում բերում են իրենց սենյակը։ Մի քանի ժամից հետո նա ուշքի է գալիս։ Նիգար խանումը հարցնում է.

— Լա՛ո, քեզ ի՞նչ պատահեց, ինչո՞ւ ուշաթափվեցիր։

— Մայրիկ,—ասում է Հասանը,—էն աղջկա պատկերը, որ էդ սենյակում փակցված է, ինչքան հիշեմ, ուշքս կգնա։ Պիտի գնամ էդ աղջկան բերեմ։

Նիգար խանումը վերցնում ասում է.

— Չեմ վախ, լա՛ո, դա Հունան Թագավորի աղջկա նկարն է։ Նա ունի յոթ ախպեր։ Հերդ մի քանի անգամ գնաց, որ բերի, բայց չկարողացավ։ Էդ նկարի հետ ինչ գործ ունես, լա՛ո։ Հերդ հազիվ հազ կարողացավ նրա նկարը բերել տալ, ամեն մի հինգշաբթի օր գնում է էդ սենյակը՝ նկարը տեսնում։

Հասանը խոսք է վերցնում ու ասում.

— Մայրիկ, ես խոսքիս տերն եմ, թե որ չգնամ կարթաքվեմ։

Մայրն ինչ անում, չի անում, չի կարողանում համոզել։

— Եթե աղջիկը կույր էլ լինի, կգնամ,—ասում է տղան։

Դե, Ֆրօյդին էլ շատ հարստություն է ունենում, Նիգար խանումը շատ և շատ փող է տալիս Հասանին։ Սիրուն շորեր է բերում։ Լավ զենքեր է բերում։ Հասանը պատրաստություն է տեսնում։ Հեծնում է ձին, ջրում գնում է դեպի Հունանի երկիրը։ Հարցնելով մարդ կհասնի իր ուզած տեղը։ Հասանն էլ հարցնելով մի օր էլ հասնում է Հունան Թագավորի քաղաքը։ Ֆշում, գնում է մի պառավի տան առաջ և ձիուց իջնում։

Պառավը նայում, տեսնում է, որ եկողը շատ սիրուն երիտասարդ է. շորերը լավ, շնորհքով հագնված։ Մարդ նրան նայելուց չի կշտանում, Հասանն ասում է.

— Ա՛յ մայրիկ, հյուր չես ընդունի։

— Հյուրն՝ աստծունն է,—ասում է պառավը,—համեցիր, բայց մենակ տեղս նեղ է։

Հասանը տեսնում է, որ պառավը փողի մասին է ակնարկում, ձեռքը տանում է գրպանը, մի ոսկի է հանում, տալիս պառավին։

Պառավն ուրախանում է։ Գնում է ներս։ Տան կարասիքը հավաքում՝ մի տեղ է դնում։ Հասանին տանում է ներս։ Տզան նստում, նայում, տեսնում է, որ պառավը ոչինչ չունի, երկու ոսկի է հանում, տալիս է նրան և ասում.

— Գնա մեզ համար հաց, ուտելիք առ։ Ինձ համար տեղաշոր բեր, քեզ համար էլ մի ձեռք խաս տեղաշոր առ և բեր։ Ձիուս համար էլ կեր ճարիր։

Պառավը մտածում է. «Ա՛յ լավ բան, մի ոսկով նրա ուզածը կառնեմ, մի ոսկի էլ ինձ կմնա»։ Գնում է, ինչ որ Հասանն ասել էր, առնում է, բերում։ Դե, թող պառավը քեֆ անի։ Էդպես մնում են երկու, երեք օր, Հասանն էլ ծանոթանում է քաղաքի, նրա փողոցների հետ։

Թող Հասանն էդպես մանգա, մենք Հունան Թագավորի աղջկանից խոսենք։ Նա էլ Հասանին երազումն է տեսնում։ Մտածում է։ Ասում է. «Յարաբ, կգա էն օրը, որ ես երազիս երիտասարդին տեսնեմ, նրան առնեմ»։ Նա էլ էդ կրակի մեջ է։ Մեկը մյուսի դարդից խաբար չունի։ Հիմա էլ Հասանից խոսենք, պառավին հիշենք։ Նրանք մի իրիկուն նստում են, դեսից դենից են խոսում։ Էդ ժամանակ Հասանն ասում է.

— Ա՛յ մեծ մայրիկ, դու խելի չես հարցնում թե՝ ա՛յ երիտասարդ, ինչի՞ համար ես եկել, ուր պիտի գնաս։

— Լա՛ո,—ասում է պառավը,—դու հյուր ես, ինչ կարիք կա հարցնելու (նա ամեն օր մի ոսկի էր տանում Հասանից)։ Ասում է.

— Լա՛ո, ասա, տեսնենք սիրածդ ի՞նչ է։

— Մայրիկ,—ասում է նա,— ես Հունան Թագավորի աղջկա համար եմ եկել։

— Լա՛ո,—ասում է պառավը,—նա յոթ ախպեր ունի։ Էդ յոթ ախպերիք նման են արծիվների։ Ոչ մեկը դրանց ձեռքից չի ազատվի։

— Մայրիկ,—ասում է տղան,—հիմա էդ թողնենք։ Եթե դու իմ մասին էդ աղջկանն ասես, նրանից էլ մի պատաս-

Խան բերես, ես քեզ էնքան փող կտամ, որ մինչև քո մեռնելը չպրծնես։

Երբ Հասանը փողի անունը տալիս է, պառավի հոգին ուրախությունից գալիս է նրա քթի ծերին, քնքը բացվում է։

— Ա՛յ Հասան,— ասում է նա,— դու տանը նայիր, քո տունն է, ես էլ ասածդ կանեմ։

Պառավը մի ձեռք նոր շոր է հագնում։ Դու փողից հարցրու։ Գնում է դեպի Հունան Թագավորի աղջկա քյոշկն ու սարայը։ Դռան մոտ աղջկա ադախիններից թույլ չեն տալիս, որ նա ներս մտնի։ Դրանցից մեկը լուր է տանում Թագավորի աղջկան.

— Մի պառավ է եկել,— ասում է նա,— խնդրում է, որ գա քեզ մոտ։

— Թողնք, թող գա, խեղճ է, կարող է գործ ունենալ,— ասում է խանումը։

Պառավին ներս են թողնում։ Խանումը տեղ է ցույց տալիս, նա էլ նստում է։

— Ա՛յ պառավ,— ասում է Թագավորի աղջիկը,— ինչ խընդիրք ունես, ինչու՞ համար ես եկել։

— Ես,— ասում է նա,— եկել եմ քո բախտ ու մուրազիդ համար։ Ուզում եմ, որ ինձ դարձնես քեզ լողացնող։ Երեք չորս որը երեխա ունեմ, կարող է ինձ մի բան տաս, որ դրանով նրանց պահեմ։

Երբ մուրազի մասին խոսք է լինում, խանումն ասում է.

— Գնա, սրանից հետո դու ինձ ուրբաթ օրերը կլողացնես։

Խանումը իր հին լողացնողին կանչում է, լողացնելու համար հագած շորերը վրայից վերցնում, տալիս է պառավին։ Թուղթ է տալիս նրան թե՝ սա ինձ լողացնողն է։ Կարող է քյոշկ ու սարայիս մեջ ազատ մտնել ու դուրս գալ, ոչ մեկը իրավունք չունի նրան արգելել։ Պառավը ճնաս բարև է ասում, իսկ Թագավորի աղջիկը ադախիններին հայտնում է, թե սրանից հետո էդ պառավը ինձ պիտի լողացնի, ինչ որ ասի, պիտի լսեք։

Պառավն էլ շուտով վերադառնում է իր տունը։ Հասանը տեսնում է, որ պառավը վերադարձավ, ասում է.

— Մեծ մայրիկ, եկար։

— Լա՛ո,— ասում է նա,— ես եկա, լավ էլ եկա, ոտքդ խերով է, սրանից հետո նրան պիտի լողացնեմ։ Հիմա քո գործն էլ գլուխ կգա։

Հասանի քեֆը բացվում է, մի բուռ վող հանում տալիս է պառավին։ Նա էլ, գնում է շուկա, մի զույգ կոշիկ է առնում, մի ձեռք նոր շոր է առնում։ Ինչ հոգ, դու վողից խոսի։ Աչքերըն արագիլի աչքերի նման սուրմայով նախշում է, մազերը հինայով ներկում և հյուսում է, քթախոտի տուփը դնում մեջկապի արանքը և հետո նայում հայելուն. «Վահ,—ասում է նա,—արդեն տասնչորս տարեկան աղջիկ եմ դառել»։ Հետո հիշում է, որ ուրբաթ օրերը պիտի գնա Հունան Թագավորի աղջկան լողացնի։ Ուրբաթ օրը նա ասում է Հասանին.

— Դու տանը նայիր, ես էսօր պիտի գնամ խանումին լողացնեմ։

Թող Հասանը տանը նստի, մենք լուր տանք պառավից։ Սա համարձակ մտնում է քյոշկն ու սարայը։ Խանումի աղախիններին տաքացրած ջուրը բերել է տալիս լողացնելու տեղը։ Խանումին էլ բերում է, լավ, ուզածիդ պես լողացնում, լավ լողացնելու, ամեն ինչ շնորհքով կատարելու համար, խանումը մի ասկի է տալիս նրան։ Լողացնելուց հետո աղախինները ճաշ են բերում նրա համար։ Խանումը իր ճաշը կխում է, կեսը տալիս է պառավին, իսկ մնացած կեսը՝ ինքն է ուտում։ Պառավը ուտում է, խանումից հրաման է խնդրում և շտապ-շտապ դռնից դուրս է սրծնում։ Գալիս է տուն, Հասանի մոտ։ Տղան նայում, տեսնում է, որ պառավի այտերն էնպես են կարմրել, կարծես տասնչորս տարեկան աղջկա այտեր լինեն։ Իրեն զարդարել է, մարդու քեֆն է գալիս, երբ նրան է նայում, ասում է.

— Մայրիկ,—իսկի ինչ արիր։

— Գործը լավ է գնում,—պատասխանում է պառավը։

— Դե, մայրիկ, դու գիտես,—ասում է տղան,—ես քո բախտն եմ ընկել։

— Թող ասածդ չամաչացնի,—ասում է նա,—բայց վերջը դու էլ իմ ասածը պիտի կատարես։

Ուտում, խմում, քեֆ են անում մինչև մյուս ուրբաթ օրը։

Ուրբաթ օրը պառավը վեր է կենում, նորից գնում է Թագավորի աղջկա քյոշկն ու սարայը։ Աղախինները լողանալու ջուրը պատրաստում են։ Պառավը Թագավորի աղջկան տանում է բաղնիք։ Մի լավ լողացնում է, ջուր է լցնում նրա գլխին, մեջքը պաչում է ու խոսք է վերցնում, ասում.

— Էն լողացնելու ժամանակ, դու մի վոքը չաղ էիր, հիմա նիհարել ես, չլինի թե իմ լողացնելուցն է։

Խանումն ասում է.—Մայրիկ, քո լողացնելուց չէ։ Ես պըշերները չեմ քնում։ Շատ եմ մտածում, դրա համար էլ քունս չի գալիս։

— Բեզ մատաղ,—ասում է պառավը,—դու Թագավորի աղջիկն ես, յոթ ախպերների քույրն ես, նրանք էլ շատ քաջ են, դու ինչո՞ւ պիտի դարդ անես, դարդը քեզ չի սազում։

— Պատմի,—ասում է աղջիկը,—դու դաղտնիք պահելու մեջ ինչպես ես։ Ես տեսնում եմ, որ դու լավ լողացնող ես, դաղտնիքս պիտի ասեմ։

— Ոսկի կոշիկին ասա, ասել է թե՝ դաղտնապահ եմ,—վրա է տալիս պառավը։

— Ես,—ասում է աղջիկը,—երազ եմ տեսել։ Երազումս Զարդաղլի Զամլխթելցի Բոլօղլու տղա՝ Հասանին տեսա։ Նա պըշեր-ցերեկ իմ աչքիցս չի հեռանում։ Դրա համար էլ չեմ կարող քնել։

— Լավ,—ասում է պառավը,—որին երազումդ տեսել ես, եթե տեսնես կճանաչե՞ս։

— Ի՞նչպես չէ,—ասում է աղջիկը,—կճանաչեմ։

— Մի լավ, գեղեցիկ երիտասարդ հիմա իմ տանն է,—իր խոսքն առաջ է տանում պառավը։ Ասում է թե՝ ես Զարդաղլի Զամլխթելցի եմ, Բոլօղլու տղան եմ, եթե ուզարկեմ, կճանաչի՞ս։

— Ինչպես չէ,—ասում է աղջիկը,—ես կճանաչեմ։

Պառավը վերադառնում է տուն, Հասանին ասում է.

— Դե, վեր կաց, ձին հեծիր, գնա Թագավորի աղջկա պատուհանի տակով կամաց ձիդ քշելով արի։

Հասանը հեծնում է ձին, քշում է էն փողոցը, որտեղ գտընվում էր Թագավորի աղջկա քյոշկն ու սարայը։ Բշում է էն պատուհանի մոտ, որտեղից նայում է աղջիկը։ Թագավորի աղջիկը նայում, տեսնում է, որ իսկական էն երիտասարդն է, որին երազում տեսել էր։ Ամբողջ սրտով հավանում է։ Հասանն էլ գլուխը բարձրացնում, տեսնում է նրան, ճիշտ որ էն աղջիկն էր, որի պատկերը իր հոր տանը տեսել էր։ Իսկական նա էր։ Բշում գալիս է պառավի տան առաջ։ Իջնում է ձիուց։ Ձին տանում է ներս կապում։

— Ա՛յ Հասան,—հարցնում է պառավը,—իսկի ինչ տեսար, ինչ չտեսար։

— Տեսա էն աղջկան, որի համար եկել էի,—ասում է նա։ Դու պետք է նրան ասես, որ ինձ հետ գա, տանեմ։

— Աչքիս վրա,—ասում է պառավը ու վեր է կենում, գնում է աղջկա մոտ։ Հասանի ասածը հայտնում։

Խանումն ասում է.—Ես վախենում եմ, ինձ ախպերներիս ձեռքից չի կարողանա ազատել, եթե նա երեք օրվա ճամփա գնա, ախպերներս մի օրում էդքան տեղ կանցնեն, կհասնեն մեզ։ Ինձ էլ կսպանեն, նրան էլ ինձ հետ։

Աղջկա ասածը պառավը գալիս հայտնում է Հասանին։

Հասանը գնում է շուկա, մի ձի է առնում։ Բերում է պառավի տանը կապում։ Նրա ձիասալքը պատրաստում, ասում է.

— Դե, պառավ, գլխիդ մատաղ, գնա ինձ համար մի լուր բեր։ Տես պատրաստությունը տեսել է, կգա, թե՝ չէ։ Պիտի վախցնեմ, նրա ախպերներից վախ չունեմ։

Պառավը գնում է խանումի մոտ, պատմում ամեն ինչ։ Խանումն ասում է.

— Թող պատրաստություն տեսնի, երը գիշերվանից մի ժամ անցնի, թող քշի գա իմ տան առջև, նրա հետ կվախչեմ։ Մնացածն էլ ինքը գիտի։

Պառավը վերադառնում է։ Ինչ որ աղջիկն ասել էր հայտնում է նրան։ Հասանը ձիերը թամբում է։ Երը գիշերվանից մի ժամ է անցնում, ձիերը դուրս է բերում, մեկին հեծնում, մյուսին էլ իր եռևից է բերում։ Բաղաքի մեջով քշում գնում է։ Մեծ քաղաք է, մեկը մյուսի մասին չգիտի։ Գնում է աղջկա տան առջև կանգնում։

Թագավորի աղջիկն իր պատրաստությունը տեսած է լինում։ Տղամարդու շորեր է հագնում և դուրս է գալիս, ձին հեծնում։ Բշում են պառավի տան առաջ։ Սա էլ նայում, տեսնում է, որ Հասանը և աղջիկը եկան։ Ինքն էլ իրեն էնպես է զարդարում, որ կարծես տասնչորս տարեկան աղջիկ լինի։ Հասանն ասում է.

— Մայրիկ, հրաման տուր որ գնամ։

— Բարով գնաս,—ասում է ուրախացած պառավը։ Հասանը մի բուռ ոսկի է տալիս նրան։

— Մինչև կյանքիդ վերջ կեր, խմիր, քեֆ արա,—ասում է Հասանը և ճնաս բարով անելով, շարունակում իր ճամփան։

Լույսը բացվում է։ Աղախինները գնում, տեսնում են, որ խանումը չկա։ Փախել է։ Լուր են տալիս նրա եղբայրներին։ Նրանք որ լսում են, յոթն էլ հեծնում և լուր են տալիս զորքին, զինվորներին։

— Տղերք,—ասում են նրանք,—մենք յոթ ախպերով գնացինք, դուք էլ մեր ետևից եկեք։ Էն մարդը, որ մեր քրոջը տարել է՝ Քորօղլին է, կարճ մարդ է, եկել է կռվով տանի, կռիվ կլինի, արյուն կլինի։

Թող էդ յոթ եղբայրներն ընկնեն նրանց ետևից, զորքն էլ տեղից շարժվի, մենք էլ խոսենք աղջկանից և Հասանից։ Նրանք քշում են դեպի սարը։ Էնտեղ իջնում են և կապում ձիերը։ Տզան աղջկան սարի վրա է թողնում, իսկ ինքն իջնում է ներքև։ Կռվում է, աղջիկ երեք եղբայրներին վիրավորում։ Թող նա կռվի, մենք հիմա ումից խոսենք, եկեք, Քորօղլուց լուր տանք։

Քորօղլին իր երեք հարյուր վաթսուն և վեց կարիճներով գալիս է Զարդաղլի Զամլիբել։ Զիլերից իջնում են։ Նիգար խանումից հարցնում են թե՝

— Հասանը որտե՞ղ է։

— Հասանը,—պատասխանում է Նիգարը,—Հունան Թագավորի աղջկա նկարը, որ դու բերել էիր, տեսավ, վեր կացավ գնաց նրա ետևից։

— Նիգա՛ր,—ասում է Քորօղլին։

— Ի՞նչ է,—հարցնում է Նիգարը։

— Ես երազումս Հասանին տեսա,—ասում է Քորօղլին,—շատ նեղ տեղումն էր։ Հետո ձեն է տալիս իր իգիթներին.

— Ո՛վ իգիթներ,—ասում է նա,—Հասանը օգնություն է խնդրում։ Քորօղլին երեք հարյուր վաթսուն վեց իգիթների հետ հեծնում է ձին և քշում են, որ գնան Հասանին օգնության։ Նայում տեսնում են՝ մի սարի շուրջը էնքան զորք է հավաքվել, որ թիվ կա ծաղիկներին, թիվ կա խոտերին, թիվ չկա զորքին, թիվ կա երկնքի աստղերին, թիվ չկա զորքին։ Քորօղլին իր քաջերի հետ հարձակվում է նրանց վրա։ Մեծ զորքը երկու կես են անում, գնում հասնում են սարի ամենաբարձր տեղը։ Նայում, տեսնում են, որ մի աղջիկ վրանի մեջ նստած լաց է լինում, Հասանն էլ կռվում է։ Ինչ է ասում, որ Թագավորի զորքը բարձրանա սարի գագաթը։ Դե, Հասանը Քորօղլու տղան էր։

Ֆորօղլին ձեն է տալիս իգիթներին։ Ինչպես գայլն ընկնի ոչխարների մեջ, նրանք էլ էդպես հարձակվում են զորքի վրա։

Ադջիկն ինչ է անում։ Նա տեսնում է, որ Ֆորօղլին իր պատճառով բոլորին կկոտորի, ոչ մեկին թույլ չի տա գեղանդյալինդան*, լուր տանի։ Էդ ժամանակ նրա սիրտը ցավում է, վերցնում է իր լաչակը, տանում փռում է կռվողների մեջ, կռիվը դադարում է։ Ադջկա եղբայրներն իրենց զորքով հետ են դառնում, ասում են. «Մեր քույրն իր ցանկությամբ է գնացել, թող գնա», իսկ Ֆորօղլին և իր իգիթներն էլ իրենց խելացի հարսին և Հասանին վերցնում բերում են Զարդաղլի Զամլիբել. եդի գյուն, եդի գեջա, չալղըլար չալընդի, շաքար ազալդի, շարբաթ իչիլդի, քեֆ էլադիլար, թոյ դըգունի մուրարաք էթդիլար։ Հալ քյաս գեթտի օզ էվինա, Հասան օզ արվադընա, օզ մուրազընա եթիշըն, սըզդա օզ օղլունուզուն մուրազընա եթիշըն**։

Կուրթըլդի, գեթտի[6]։

---

* Հետ դառնալ։

** Յոթ օր, յոթ գիշեր նվագողները նվագում են, շաքար կոտորում, շարբաթ խմում, քեֆ են անում, հարսին ու փեսին շնորհավորում։ Ամեն մեկը գնում է իր տունը։ Հասանն էլ իր նշանածի հետ ուրախանում է իրենց մուրադով։ Դուք էլ, ձեր տղաների մուրադով ուրախանաք։

Պրծավ—գնաց։

ՓՈՐՕՂԼԻՆ ԵՎ ԱՅԲԱԶ ԲԱԼԻՆ

Փորօղլին քառասուն խփիթ (կտրիճ) է ունենում։ Նրանք խելացի գործերի հետ մեկ-մեկ էլ անհաջող գործ էին բռնում։ Մի անգամ Փորօղլին ասում է.

— Ա՛յ ախպերնե՛ր, մեր մեջ մի գրագետ մարդ չկա։ Երբեմն մի գործ ենք բռնում, բայց չգիտենք թե դրա հետևանքն ինչ կլինի։ Պետք է, որ մի գրագետ մարդ էլ լինի մեր մեջ, որ մեզ օգնի։

Դալի Հասանը Փորօղլու խփիթներից է լինում, ասում է.

— Փորօղլի, լավ ես ասում, բայց էդպիսի մարդ որտեղից գտնենք։

— Էդպիսին կա Թավրիզ քաղաքում,— ասում է մի ուրիշը,— նրա անունն Այբազ Բալի է. Մասգործ Ալիի տղան է։ Տասնչորս տարեկան է։ Շատ գեղեցիկ, շատ էլ խելոք է, լավ էլ ուսում է առել։ Լավ կլինի, որ նրան բերենք և մեզ ընկեր դարձնենք։

— Ի՞նչպես պիտի բերենք,— հարցնում է Դալի Հասանը։

Փորօղլին ասում է.— Էդ հեշտ է, վաղը մի սամսո* ոչխար կհավաքենք, կտանենք Թավրիզ քաղաքը։ Ոչխարները քաղաքի մի ծայրում կթողնենք, իսկ մենք կգնանք քաղաք։ Առաջուց հովվին կասենք, որ երբ Մասգործ Ալիին բերենք, թող տասնհինգ ոչխար նվիրի նրան, ասի՝ Մասգործ Ալի, սրանք քեզ փեշքեշ**։

Ոչխարները էլ թող էժան-էժան ծախի։ Ասում են, որ Մասգործ Ալին աչքածակ մարդ է, կուրախանա։

Առավոտ վեր են կենում, մի սամսո ոչխար են իրենց հետ վերցնում։ Հովիվները ընկնում են հոտի առաջ։ Փորօղլին և Դալի Հասանն էլ ձի են նստում և ոչխարները քշում բերում են դեպի Թավրիզ։ Քաղաքի մի ծայրում ոչխարի հոտը մակաղում

---

* 100 ոչխար։

** Նվեր։

ճն, մի հովվի պատվիրում են հակել, իսկ իրենք առավոտ վաղ գնում են քաղաք: Նայում, տեսնում են, որ էս է, Մսագործ Ալին Այրազ Բալու ձեռքից բռնած, գնում է խանութ: Ֆրօղլին քարև է տալիս, բարև է առնում: Այրազին է նայում. «Ինչ գեղեցիկ, սիրուն տղա էր»,—ասում է նա իր մտքում: Հետո Մսագործ Ալին ասում է.

— Ոչխարի պետք չունե՞ս:

— Ինչպես չէ,—պատասխանում է Ալին,—գործս ոչխար առնելն է, ես մսագործ եմ:

— Ես մսացու ոչխարներ եմ բերել,—ասում է Ֆրօղլին:

— Ո՞րտեղ են, վրա է բերում Ալին:

— Քաղաքի էն ծայրումն են, համեցի, գնանք տես,—ասում է Ֆրօղլին:

Մսագործ Ալին և իր տղան նրանց հետ գնում են դեպի ոչխարի փարախը: Հասնում են: Ալին բարևում է հովվին, ասում է.

— Բարաքաթով լինի:

— Աչքիս, գլխիս վրա, բարև է առնում հովիվը և տասնհինգ ոչխարներ ջոկելով ասում է.

— Մսագործ ախպեր, էս տասնհինգ ոչխարը քեզ վեճքեշ: Դրանց համար փող չեմ վերցնում:

— Շատ շնորհակալ եմ,—ասում է Ալին,—հիմա մյուսների գինն ասա:

Թե մի ոչխարն արժեր տասը ռուբլի, հովիվը հնգով է տալիս: Էդ ժամանակ Այրազը մտքի տունն է ընկնում, ինքն իրեն գաղում. «Ա՛յ ախպեր,—ասում է նա,—սա ինչո՞ւ տասնհինգ ոչխար նվիրեց, միւսներն էլ կես գնով է տալիս: Պատճառն ինչ է»: Գաղնում է իր հորն ասում է.

— Ա՛յ հայրիկ, սրանք վաճառական չեն, խելքդ հավաքիր: Ինչո՞ւ մի անգամից տասնհինգ ոչխար քեզ նվիրեցին, իսկ միւսներն էլ էդքան էժան են տալիս: Սրանք,—վերջացնում է նա,—իմ գլխին մի փորձանք կբերեն: Էդ ոչխարներն իմ արյան փոխարեն են տալիս: Ինչքան մանը պաս, էլ ինձ չես պահի:

— Մսագործ Ալի,—ասում է Ֆրօղլին,—միւսյած ոչխարներն էլ բոլորը քեզ վեճքեշ, ճիշտ որ մենք տղայիդ արյան գինն ենք ուվել, նրան պիտի տանենք:

— Հայրիկ,—ասում է Այրազը,—տեսա՞ր, չասի՞, որ վաճա-

ռական չեն։ Սրանք բուք ու բորանի նման են, մեր գլխին խաղ խաղացին։

Քորօղլին ասում է Դալի Հասանին.

— Այրազ Բալու ձեռքից բռնիր բարձրացրու, դիր ձիուդ գավակը։

Զարմանք է տիրում Այրազի հորը։ Քորօղլին ասում է.

— Տղայիդ հենց էնպես չենք տանում։ Ես Քորօղլին եմ, նրա արյան գինն ենք տվել։ Նրան լավ կպահեմ, էլ ինչ ես ուզում։

Այրազ Բալին երբ որ լսում է Քորօղլու անունը, հանդարտվում է.

— Հայրիկ,—ասում է նա,—եթե սրանք չգային ինձ տանելու, ինքս կգնայի նրանց մոտ։ Նրանք լավ մարդիկ են։ Մի մտածիր, Քորօղլու մոտ ինձ լավ կզգամ։

— Այրազ, ապրես, ճիշտ որ ես Քորօղլին եմ, ապրում եմ Սև անտառում, խմում եմ ակնաղբյուրներից, չեմ վախենում ոչ բեկերից, ոչ թագավորներից,—ասում է Քորօղլին։ Այրազ, չլինի թե տխրես։ Ճիշտ որ ես դոչ Քորօղլին եմ, բնակվում եմ բարձր Սև սարերում։ Չլինի թե մտածես, Այրազ, չլինի թե տխրես, հոգիս։ Դու կլինես մեր ընկերը, մեր աչքի լույսը։

Էդ ձևով էլ Մսագործ Ալիի սիրտը հանգստանում է։ Այրազ Բալին հորը միաս բարև է անում և Քորօղլու ու Դալի Հասանի հետ գնում դեպի Զարդաղլի Զամլիբել։ Էնտեղ դառնում Քորօղլու որդեգիրը և իր հոր հետ խպիպներին օգնում է լավ ու բարի գործ կատարելու համար։

ՓՈՐՕՂԼԻՆ ԵՎ ԱՍԼԱՆ ՓԱՇԱՆ

Մի անգամ Փորօղլին իր խփիճների հետ գնում է որսի։ Այրազ Բալին էլ նրանց հետ է լինում։ Սովորություն էր, երբ Փորօղլին գնում էր որսի, Այրազ Բալին էլ նրա հետ պիտի լիներ։ Նա Փորօղլու տղան էր, Փորօղլին էլ շատ էր սիրում նրան։ Էդ օրն էլ ձիավորների առաջ ընկած գնում է։ Նա կռունկների վեռուրներով զարդարել էր գլխարկը, ճակատը։ Ինքն էլ շատ գեղեցիկ էր, վեռուրներն էլ անչափ սազում էին։

Վերադարձի ժամանակ Նիգար խանումը խփիճների կանանց հետ գնում է մի բարձր տեղ կանգնում, աչքը ճամփին պահում։ Մեկ էլ տեսնում է, որ Փորօղլին իր խփիճներով գալիս է. Այրազն էլ բոլորից առաջ է, կռունկների վեռուրներով զարդարել է գլխարկը, ճակատը։ Դրանք էնքան էին սազում նրան, որ մարդ նայելով չէր կշտանում։ Հավաքված կանայք ասում են.

— Նիգար խանում, գիտե՞ս ինչքան լավ, գեղեցիկ կլինի, եթե մյուս խփիճներն էլ Այրազ Բալու նման իրենց գլխարկները վեռուրներով զարդարեն։

Փորօղլին իր խփիճներով գալիս լցնում է ձիուց։ Իրիկունը Նիգար խանումը խփիճների կանանց էդ օրվա ցանկությունը հայտնում է Փորօղլուն։

Առավոտ Փորօղլին հավաքում է իր խփիճ ընկերներին, ասում է.

— Այրազ Բալին ինչպես զարդարել է իր գլուխը կռունկների վեռուրներով, դուք էլ ձեր գլխարկները, ճակատները զարդարեք։

— Փորօղլի,—հարցնում է Դամրչօղլին,—իսկ ո՞րտեղ են կռունկի վեռուրները, որ բերենք զարդարենք։

— Լա՛ո,—վրա է բերում Փորօղլին,—կռունկի վեռուրներ Բաղդադում կան՝ Ասլան փաշայի (Թագավորի) այգում։

— Բերդներից մեկը ես կլինեմ, ասում է Դամբչօղլին։

— Մեկն էլ ես կլինեմ,—շտապում է Քոսա Քանհանը։

— Լավ,—ասում է Քորօղլին,—համաձայն եմ, պայմանով, որ Այրազ Բալին էլ ձեզ հետ լինի։

Քոսա Քանհանը և Դամբչօղլին գնալու պատրաստություն են տեսնում։ Էդ ժամանակ Քորօղլին ասում է Այրազ Բալուն.

— Դու էլ քո պատրաստությունը տես։

Այրազ Բալին հեծնում է Դոաթը, իր հոր ձին, Դամբչօղլին և Քոսա Քանհանն էլ հեծնում են իրենց ձիերը, քշում են դեպի բաղդադ քաղաքը։ Ճամփին Քոսա Քանհանը և Դամբչօղլին խորհրդակցում են իրար հետ. «Ինչպես որ Քորօղլուն ենք ծառայել, էնպես էլ նրա տղային պիտի ծառայենք»։ Նրան պատիվ են տալիս, Շատ են գնում, թե քիչ, իրենք գիտեն, մի օր էլ հասնում են Բաղդադ, Ասլան վաշայի այգին։ Այրազ Բալին ասում է.

— Մ՛յ Դամբչօղլի, արդեն ուշ է, գիշեր, եկեք, չգնանք քաղաք։ Գիշերը էս այգում կմնանք, առավոտ նոր կգնանք։

Այրազ Բալի,—ասում է Դամբչօղլին,—քո ասածն է, խոսքիդ դուրս չենք գա։

Այգու դուռը ջարդում ներս են մտնում, ձիերը կապում ծառերից։ Նայում տեսնում են, որ այգին կռունկներով լցված է։ Սկսում են կոտորել։ Բոլորին մորթում են։ Քոսա Քանհանին ուղարկում են քաղաք։ Մի տիկ գինի է բերում։ Սկսում են ուտել, խմել։ Մի կոպմից գինի մյուսը՝ կռունկների մես, քեֆ են անում մինչև լուսադեմ։ Լուսադեմին վերարկուները գցում են իրենց վրա և տեղն ու տեղը քնով են ընկնում։

Թող նրանք քնեն. գինի են խմել, մես են կերել, չեն զարթնում, մենք էլ խոսենք քաղաքից։

Լույսը բացվում է։ Ասլան վաշայի այգեպանը գալիս և ի՞նչ է տեսնում. տեսնում է, որ երեք աժդահա քնել են, երեք ձի էլ կապած։ Բոլոր կռունկները մորթված են, մի կենտ կռունկն ի՞նչ է, կենդանի չեն թողել։ Վախից այգեպանը կուչ է գալիս, ասում է. «Եթե ձեն տամ, կզարթնեն, ինձ կուտեն, աժդահա են»։ Ձեն չի հանում, եկած ճամփով հետ է դառնում, գնում է Ասլան վաշային ասում.

— Երեք աժդահա են մտել քո այգին, քո բոլոր կաուկները կոտորել են։

Փաշան հրամայեց տալիս։ Զորք է հավաքում։ Այգու չորս կողմը շրջապատել է տալիս։ Ներս են մտնում։ Փնածներին ձեն են տալիս։ Դամրչօղլին, Քոսա Քանհանը և Այրազ Բալին քնից զարթնում են։ Տեսնում են, որ շրջապատված են։ Նրանց զենքերը խլում են։ Ձիերը տանում են մի զոմում կապում։ Երեքին էլ տանում են բերդ։

Քորօղլին ժամանակին մի դանձապահ է ունենում, էդ դանձապահն էլ օրերից մի օր դանձարանից փող է վերցնում և նրա մասից փախչում, գնում է Աղան փաշայի մոտ։ Նրա անունն Իամախլ է լինում։ Նա էլ ինքն իրեն ասում է. «Գնամ, տեսնեմ Քորօղլին էլ դրանց մեջ է, թե չէ»։ Տեսնում է, որ Դամրչօղլին, Քոսա Քանհանը և Այրազ Բալին են բռնվել։ Իամախլն ասում է.

— Ա՛յ Քոսա Քանհան, Դամրչօղլի, էս ինչ վիճակի մեջ եք ընկել։

— Դե,— ասում են նրանք,— տեսնում ես, էլի։

Իամախլն ասում է.—Էս ամսի տասնհինգին ձեզ պիտի դաառնեն, սպանեն, հիմա ինչ եք ասում։ Ես ձեր աղ ու հացը շատ եմ կերել, ձեզ մոտ շատ եմ ճնացել։

— Ի՞նչ պիտի ասենք, բռնվել ենք, մարդ էլ չկա, որ գնա Զարդաղլի Զամլիրել, լուր տա Քորօղլուն, ասում են նրանք։

— Ձեր խաթեր համար ես լուր կտանեմ,— ասում է Իամախլը,— Քորօղլին կամ պիտի ինձ սպանի, կամ էլ՝ կների, թող մենակ դուք սնամեղ տեղը չկորչեք։

— Ա՛յ տղա, դանձապահ,— ասում է Դամրչօղլին,— էստեղից մինչև էնտեղ հազիվ կես ամսում կտրես, անցնես, կես ամիս էլ եթե էն կողմից գան, արդեն ուշ կլինի, քանի որ կես ամսից հետո մեզ պիտի սպանեն։ Բայց եթե կարողանաս մի կերպ Ղռաթին նրա ձեռքից ազատել, էն ժամանակ խելքս կկտրի, Ղռաթը ժամանակին քեզ կհասցնի Զարդաղլի Զամլիրել։ Եթե Ղռաթը չլինի, ոչինչ դուրս չի գա։

— Էդ իմ գործն է,— ասում է Իամախլը,— կյանքս ձեզ համար վտանգի տակ կդնեմ։

Իամախլը դուրս է գալիս, գնում է տուն։ Էնտեղից էլ գնում է Աղան փաշայի դիվանը, տեսնում է, որ նա հրամայել է թե՝ թող իմ երկրի բոլոր վաճառականները, հարուստները,

աղանները, որոնք լսել են Քոլօղլու անունը և կամ նրա կողմից ջնասվել են, Թող ամսի տասննոցին հավաքվեն գան էստեղ։ Քոլօղլուն բռնել եմ, ամսի կեսին նրան կտոր-կտոր անելով պիտի սպանեմ։ Թող հավաքվեն, իրենց վրեժն առնեն։

Էդ հրամանն Ասլան փաշան իր երկրով մեկ ուղարկում, բոլորին տեղյակ է դարձնում։

Վաճառականները, հարուստները, ազանները հավաքվում են, որ գան Բաղդադ։

Ասլան փաշան էդ ժամանակ ասում է.

— Իսմախլ, գնա, էդ ձիերին նայիր, տես էդ երեքից Ղռաթն ո՞րն է, ինձ համար բեր, մյուսներին ծախիր։

Իսմախլն էլ Քոլօղլու ձիու թալիման իմանում էր։ Երբ որ գնում է ձիերի մեջ, ձեռքը դնում է Ղռաթի գավակի վրա, ասում է.

— Մի աչքդ կուրացրու, մի ոտքից կապա, նիհարիր։

Մեկ էլ նայում տեսնում է, որ մի աչքը փակեց, աչքից արցունքներ եկան։ Մի ոտքը բարձրացրեց դրեց իր փորի տակ, կապաց։ Էնպես նիհարեց, որ չէր կարող տեղից շարժվել։ Էդ բանը տեսնելով, Իսմախլը գնում է Ասլան փաշայի մոտ.

— Փաշան ապրած կենա,—ասում է նա,—Քոլօղլու ձին դրանց մեջ չէ։

— Ա՛յ տղա, Իսմախլ,—նրա խոսքը կտրում է Ասլան փաշան,—սպիտակ ձին իմ կտրծիքով Քոլօղլու Ղռաթն է։

— Էդ ձիու մի աչքը կույր է, արցունք է գալիս, մի ոտքից կապում է, ինքն էլ էնքան նիհար է, որ մարդ կարծում է, թե էս է կսատկի,—ասում է Իսմախլը։

Ասլան փաշան իր վեզիրով և մեծամեծներով դուրս է գալիս դիվանից, մեկին ասում է.

— Ա՛յ տղա, գնա տես, էդպե՞ս է, թե չէ՞։

Իսմախլը Ղռաթին դուրս է բերում։ Երբ Ասլան փաշան, նրա մեծամեծները ձին տեսնում են իրենց աչքով՝ նոր են հավատում։ Իսմախլը ճիշտ էր, ձին մի ոտից կապում էր, նրա մի աչքը կույր էր, էնքան նիհար էր, որ դժվարանում էր տեղից շարժվել։

— Տղերք,—ասում է զայրացած փաշան,—քանի որ էդպես է, սրան պահել չի լինի, տարեք քաղաքի մի ծայրում բաց թողեք, թող կորչի գնա։

— Թագավորն ապրած կենա,—խնդրում է Իսմախլը,—ին-

չու ես էպես անում, ես էլ քո ծառան եմ, արի, ինձ տուր, դրանով ջուր կբերեմ, ջրապաց կառնեմ։

— Լավ,— ասում է նա,— քեզ տվեցի, դե գնա ուրախացիր։

Իսմայիլը Ղաաթին քաշում, բերում է տուն, հանձնում է իր կնոջը։ Թող կինը ձին տանի ներս, կապի։ Իսմայիլն էլ շտապ վերադառնում է դեպի բերդը, գնում է Դամրչօղլու, Քոսա Քանհանի և Այրապ Բալու հետ տեսակցում, ասում է.

— Վալլահ, ես խորամանկությունով Ղաաթն Ասլան փաշայի ձեռքից ազատեցի, հիմա ինչ կասեք։

— Տղա, Իսմայիլ,— ասում է Դամրչօղլին,— քեզ Ղաաթի մեջքի վրա չես կարող պահել, ջարդ ու փշուր կանի քեզ, մեղք ես։ Գնա մի թոփ բյազ և հինգ-վեց կիլո կուպր առ։ Կուպրը քսիր բյազի երեսը։ Թող կինդ էլ, ազատ էլ, եթե ունես, կուպրը քսեն նրա վրա։ Դրանից հետո Ղաաթին հեծիր, երեսնիվայր պառկիր նրա մեջքին, դրանից հետո թող էդ բյազով քեզ Ղաաթի մեջքի վրա պինդ կապեն, որ չընկնես։ Ղաաթի սանձը բաց թող, քեզ ուղիղ կտանի Ջարդապլի Ջամլիբել։ Մի ամսվա ճամփան երկու օրում կանցնի։ Տեսածդ կպատմես։

Իսմայիլը վերադառնում է տուն։ Գնում է շուկա, մի թոփ բյազ և վեց-յոթ կիլո կուպր է առնում, տանում տալիս է իր կնոջը։ Կուպրը լավ հալեցնում և քսում է բյազի երեսը։ Երբ գիշերը կես գիշեր է դառնում Ղաաթին քաշում է դուրս, ձեռքը զարկում է մեջքին և ասում.

— Առաջվա նման եղիր, առաջվա պես ջահելացիր։

Ղաաթը նորից առաջվա նման է դառնում, ջահելանում է։ Իսմայիլը վեր է կենում, հեծնում, երեսնիվայր պառկում, ասում է իր կնոջը.

— Էդ բյազը բեր, ինձ Ղաաթի մեջքի վրա պինդ կապիր, փաթաթիր, որ նրա վրայից չընկնեմ։

Կինը բյազով դրան պինդ կապում է ձիու մեջքին, լավ փաթաթում, հետո ձեռքը զարկում է ձիու գավակին և ասում.

— Գնա՛ հասիր Ջարդապլի Ջամլիբել։

— Ղաաթն ընկնում է ճամփա, գնում, հա գնում։

Մի օր Քոքօղլին իր լգիթներով բարձրանում է բերդի վտուրը, նայում տեսնում է, որ Ղաաթը գալիս է, ասում է.

— Վա՜խ, հեյ վա՜խ, երեքին էլ սպանել են, Ղաաթը փախել, գալիս է։

Երբ որ ձին գալիս հասնում է, Քոքօղլին նայում, տեսնում

է, որ մեջքի վրա մի բան է կապած։ Ղաթին բռնում են։ Բյազը բաց են անում։ Տեսնում են որ մի մարդ է պառկած, ճանաչում են նրան։ Իսմախլն էր, որ մի ժամանակ Քոռօղլու մոտ գանձապահությունն էր անում, հետո փող եր վերցրել փախել, գնացել էր Աչլան փաշայի մոտ։

— Ա՛յ աղա,—ասում է Քոռօղլին,—էս ի՞նչ է նշանակում, ի՞նչ է պատահել։

— Քոռօղլի,—ասում է Իսմախլը,—Աչլար Բալին, Դամըշօղլին, Քոսա Քանհանը Բաղդադում Աչլան փաշայի կողմից բռնվել են։ Ես խորամանկությամբ Ղաթին նրա ձեռքից առա, լուր բերի քեզ, էս ամեն տասհնգին երեքին էլ մաշկահան անելով պիտի սպանի։ Հիմա էլ ինձ կսպանես՝ դու գիտես, ինչքես էլ դու գիտես։

— Իսմախլ, լա՛ռ,—ասում է Քոռօղլին,—էդ լավությունից հետո, իսկի խելքի բան է, որ քեզ ձեռք տամ։ Ներում եմ քեզ, լա՛ռ։

Իգիթներն իրենց պատրաստությունն են տեսնում, Քոռօղլու հետ միասին հեծնում են ձիերն ու քշում դեպի Բաղդադ։

Նրանք հասնում են Բաղդադի մոտերքը։ Ճամփին տեսնում են, որ մի ծեր մարդ իր արտն է քաղում։ Մոտենում են։ Տեսնում են, որ ծերունին արտը քաղելիս՝ ախ ու վախ քաշելով լաց է լինում։

— Ա՛յ պապիկ,—հարցնում է Քոռօղլին,—ինչո՞ւ ես լաց լինում, ինչո՞ւ ես ախ քաշում։

— Բա որ ես ախ չքաշեմ, ես լաց չլինեմ, էլ ո՞վ պիտի անի, ասում է նա։ Քոռանում ես, Քոռօղլուն իր երկու քաջերով բռնել են, առավոտ նրանց դաան է, տանջելով պիտի սպանեն։ Նա չքավորի պաշտպանն էր։ Էն վաճառականները, հարուստները, որոնց ապրանքը խլել էր Քոռօղլին, բոլորը հավաքվել են, որ իրենց աչքով տեսնեն, թե ինչպես պիտի սպանեն, որ ուրախանան։ Էլ ինչպես ես ախ չքաշեմ, ինչպես լաց չլինեմ, Քոռօղլին էդ ժամանակ իր զինվորներին հրաման է տալիս, որ ծերունու արտը քաղեն։ Զինվորները ծայրից ծայր քաղում են։ Ծերունին վերադառնում է տուն։ Քոռօղլին իգիթներին ասում է.

— Հավաքվեք էստեղ, բան պիտի ասեմ։

Նրանք գալիս են, Քոռօղլին ասում է.

— Զորքի էն խմբերը, որոնք գնում են քաղաք, ձեզնից

երկու-երկու, երեք-երեք հոգով մտեք նրանց արանքը։ Երբ որ գնացիք քաղաք, Արյան հրապարակին մոտեցաք, ընկեք նրանց առաջ։ Բոլորդ ինձ նայեք։ Ջկռվեք։ Երբ ձեռքս տարա բեխերիս, էն ժամանակ մենակ ասյուծների նման զարկեք դրանց։

Ֆորօղլու ասածի համաձայն՝ տեղ-տեղ երկու-երկու, տեղ-տեղ՝ երեք-երեք մարդ մտնում են Ասլան փաշայի զորքերի մեջ։ Գնում հասնում են Արյան հրապարակ։

Ֆորօղլին էլ քշում, գալիս է էնտեղ։ Տեսնում է մի խալիչա են փռել, մի սեղան են դրել դրա վրա, Ասլան փաշան կանգնել է մի կողմ։ Ֆորօղլին էլ գնում է նրա մոտ կանգնում։ Ասլան փաշայի զինվորները գնում բանտարկվածներին բերում են էնտեղ։

— Ձեզնից ո՞վ է Ֆորօղլին,— հարցնում է փաշան։ Ես դրան պիտի մաշկահան անելով սպանեմ։

Դամրչօղլին Ֆորօղլու խաթեր համար Այրազ Բալուն խնայում է։ Չի իմանում, որ Ֆորօղլին էնտեղ է։ Ասում է.

— Ֆորօղլին ես եմ։

Դամրչօղլուն պառկեցնում են սեղանի վրա, սափրիչներին են բերում։ Փաշան ասում է.

— Դե, գլխից մաշկեք։

— Ասլան փաշա,— ասում է վաճառականներից մեկը,— եթե մարդուն գլխի կողմից են մորթահան անում, շուտ է մեռնում, ասի, թող ոտքերից մաշկեն, որ տանջանքը երկար տևի։

Ասլան փաշան տալիս է իր համաձայնությունը։

Սափրիչները ոտքերից են մաշկազերծ անում։ Ֆորօղլին նայում, տեսնում է, որ իսկի էլ Դամրչօղլու հոգը չէ։ Մի սազ է ձեռքն առնում, նվագում է։ Փաշան հարցնում է.

— Ա՛յ տղա, էդ ի՞նչ ես անում։

— Դուսան մարդ եմ,— պատասխանում է Ֆորօղլին,— սազ պիտի նվագեմ։ Թող Ֆորօղլու սիրտը էրվի, կրակն ընկնի, իսկ էն մարդկանց արտևրը, որոնցից նա ապրանք է խլել, թող ուրախանան։

Փաշան ասում է.— Լավ ես ասում, քո խոսքն է։

Սափրիչներն էլ բոպե-բոպե Դամրչօղլու ոտները մաշկազերծ են անում։

— Ասլան փաշա,— ասում է Ֆորօղլին,— ես սոված եմ։

Փաշան իր ծառաներից մեկին հրամայում է.

— Գնա, էս գուսանի համար մի սինի լիքը փլավ լցրու բեր։

Ծառան գնում է։ Մի սինի լիքը փայտ է լցնում, հացի և մի սափոր գինու հետ բերում գնում է նրա առաջ։

Քորօղլին հացն ուտում է, էպ ժամանակ մի հատիկ ըրինձ կպչում է նրա բեխերին։ Ուզում է մաքրի, բայց չի կարողանում, չէ՞ որ եթե ձեռք տար բեխերին, իր զորքը պիտի հարձակվեր։ Իսկ դա էլ դեռ շուտ էր։ Քորօղլին նայում, տեսնում է, որ սափրիչները Դամբչօղլու մատները մաշկեցին, հասել են արդեն ոտքի երեսը։ Ինքն իրեն ասում է. «Տունս ավերվի, Դամբըչօղլին ձեռքիցս գնում է». Սազի վրա նվագելով ասում է.

Ո՛վ իմ ընկերներ,
Գայլերի ոհմակի նման,
Ձորերի արջերի նման,
Անտառի
Սոված առյուծների նման
Հարձակվեցի՛ք Թշնամու վրա,
Ասլան փաշային ինձ համար թողեք,
Մնացածներին էնպես արեք,
Որ ոչ մեկը տուն էս չգառնա։

Քորօղլին ձեռք է տալիս իր բեխերին։ Թրերը փայլփլում են։ Սափրիչները փախչում են։ Քորօղլին Ասլան փաշային բռնում, գետնով է տալիս, գլուխը թողնում։ Բռնվածներին ազատում է։ Մյուսները փախչում են, վիրավորները՝ մեռնում։ Դամբըչօղլու ոռնները լավ կապում են։ Կանչում են իրենց ճամփին սպասած ծերունուն, հավաքում են քաղաքի մյուս չքավորներին, Ասլան փաշայի ամբողջ ունեցվածքը դրանց վրա են բաժանում։ Հետո հեծնում են ձիեր, Քոսա Քանհանն էլ գնում է փաշայի այգին, կռունկների վեհասլներ է հավաքում, լցնում է իր խուրջինը, հասնում է ձիավորներին։ Նոր հանգիստ սրտով վերադառնում գնում հասնում են Զարդաղլի Զամլիբել[8]։

ՓՈՐՕՂԼԻՆ ՄՄՈՒՄ Է ԱՆՄԱՀԱԿԱՆ ՋՈՒՐԸ

Փորօղլին մի օր վերցնում է իր նետն ու աղեղը, թուրն ու վահանը, հեծնում է ղռաթ ձին, գնում է որսի։ Ճամփին մի աղավնի է սպանում, վերցնում, բերում է մի աղբյուրի մոտ, որ արյունը լվանա։ Լվանալիս, սպանված աղավնին ձեռքից դուրս է սրծնում, թևերը թափ տալիս և իր վրայից ջրի կաթիլները շաղ տալով, թռչում է հեռու։ Փորօղլին տեսնելով այդ՝ ջուր է լմնում աղբյուրից, ղռաթն էլ է լմնում։ Դրա համար էլ ասում են՝ Փորօղլին անմահական ջուր է խմել։ Ասում են նաև թե՝ էդ աղբյուրը բինգյոլ սարի վրա է եղել։ Էդ սարում՝ աղավնու շաղ տված ջրի համեն մի կաթիլից առաջացել է մի նոր աղբյուր։ Դրանց շատությյան պատճառով էլ չեն իմանում թե Փորօղլին որ աղբյուրից է ջուր խմել։ Դրա համար էլ ասում են.

Բին գյոլ—հաջար գյոլ,
Ազ չը գանըմ քիժան գոլ.
(Բին գյոլ—հազար գյոլ,
Ես ինչ գիտեմ որ մի գյոլ)։

Արաքս գետն էլ բինգյոլից է սկիզբն առնում։ Էդ անմահական աղբյուրի ջուրն էլ խառնվում է Արաքսի ջրի հետ։ Դրա համար էլ էդ գետի ջուրը ջերմ ու հոգացավ ունեցողների համար բուժիչ դեր է կատարում։ Դա է պատճառը, որ ամեն տարի հիվանդ մարդիկ գնում են էդ գետի ջրի մեջ լողանում են, որ ազատվեն ցավերից, երկար ապրեն։

ՓՈՐՕՂԼՈՒ ՈՒԺԻ ՈՒ ՇՆՈՐՀԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Իմացողները լսելով Փորօղլին քաջ է դառել՝ ջրի երեսն ընկած վրիժուրի երկու կաթիլի զորությամբ։

Ասում են՝ երբ Փորօղլին մի օր ձիեր էր արածացնում՝ հորդ անձրև է գալիս, հեղեղ է բարձրանում։ Էդ ժամանակ ջրի վրիժուրի երկու կաթիլ ընկնում են հեղեղի երեսը, խոսքի բռնվելով վերևից գալիս են ներքև։ Մեկը պրանցից ասում է մյուսին.

— Ո՞վ որ ինձ խմի, քաջ կդառնա, ոչ մի մարդ նրա չափ ուժ ու կարողություն չի ունենա։

Մյուսն էլ ասում է թե՝

— Ո՞վ որ ինձ խմի, կարող է ուզած սեզը կերպարանափոխվել, խելոք ու ճարպիկ դառնալ։

Փորօղլին տեսնում է վրիժուրի էդ կաթիլները, լսում է նրանց միջև եղած խոսակցությունը, մտնում է ջրի մեջ. աջ ձեռքով քաջություն խոստացող կաթիլն է բռնում, ձախով՝ մյուսը։

Ասում են թե՝ էդ օրվանից էլ Փորօղլին դառնում է քաջ, խելոք ու ճարպիկ։ Էդ է պատճառը, որ երբ մի անգամ գիշերով տեղ է գնում, իր ոտքի տակ ընկած կենդանու սուր ձայնը լսելով, սիրտը խակի էլ չի թրթռում, կռանում, տեսնում է, որ նապաստակ է, բարձրացնում է ձեռքի վրա, բայց թողնում և ճամփան շարունակում։

Մի անգամ էլ տեղ գնալիս, ոտքերին մի բան է փաթաթվում. ձեռքը տանում է դեպի ոտը, տեսնում է՝ օձ է։ Հանգիստ նայում է վրան, թուցնում է գլուխը, շպրտում մի կողմ և շարունակում իր ճամփան։

Փորօղլին համոզվում է ճիշտ որ ջրի վրիժուրներն իր մեջ փոփոխություն են առաջ բերել, զգում է իր մեծ ուժն ու անվախությունը[10]։

ՓՈՐՕՂԼԻՆ ՓԱՋ Է ԴԱՌՆՈՒՄ

Փորօղլու հերը նախրապան էր։ Նրա փոխարեն ամեն իրիկուն Փորօղլին գնում էր անասնատեղերից հաց էր հավաքում։ Երբ որ նա հացը հավաքում բերում էր դեպի տուն, մի քանի տղաներ նրան շրջապատում էին և հավաքած հացերը խլում էին ձեռքից։ Փորօղլին շատ էր տխրում, մտածում թե ինչպես անի, որ չտա։ Օրերից մի օր էլ, երբ նա էլի գառաարկաձեռն տուն է վերադառնում, հանկարծ մի տան դռան մոտ մի փոքրիկ շնիկ է տեսնում։ Նայում է, որ մի քանի գամփռներ դռան դեմ հավաքվել են և ուզում են էդ շնիկին մեջտեղ քաշեն, դռնից հեռացնեն, որ խեղդեն։ Բայց ինչ անում, չեն անում, չեն կարողանում շնիկին դռնից հեռացնել ու խեղդել։ Էս շնիկը իրեն պղտում էր մերթ մեկ, մերթ մյուս գամփռի վրա, պաշտպանվելով թե մեկից, թե երկրորդից և թե երրորդից։ Փորօղլու հետաքրքրությունը շատ է շարժվում։ Վերջը տեսնում է, որ էդ գամփռները փոր ու փոշման եռ քաշվեցին, հեռացան ամեն մեկը մի կողմ գրվեց, իսկ շնիկը մնաց իր տեղում։ Փորօղլին էստեղ շատ է մտածում։ Էն ժամանակ ինքն իրեն էսպես է ասում. «Վայ ինձ, ամեն օր ես տնետուն հաց եմ հավաքում, գյուղի տղերքը գալիս ձեռքիցս խլում, տանում են։ Գնում եմ տուն, հերս ու մերս հարցնում են, թե ուր է քո հավաքած հացը։ Ամեն անգամ մի սուտ եմ հնարում, մի օր ասում եմ՝ անասնատեղերը չեն տվել, էն մի օր էլ ասում եմ, թե՝ ձեռքիցս է ընկել։ Էսպես սաել չի լինի»։ Երկար է մտածում. «Ինչու ես փոքրիկ շնիկը կարողանում է իրեն մեծ-մեծ շներից պաշտպանել, ինչու ես չեմ կարող ինձ պաշտպանել, հացս դրանց եմ տալիս»։

Փորօղլին մյուս իրիկուն մի մահակ է վերցնում, էլի գալիս է հաց հավաքում։ Մեկ էլ տեսնում է գյուղի տղերքը հա-

վաքվեցին եկան, որ հացը ձեռքից խլեն։ Երբ նրանք մոտենում են իրեն, էդ ժամանակ Քորօղլին մահակով խփում է մեկի գլխին, հետո էլ երկրորդին։ Մյուսները բոլորն էլ վախչում են, ասում են՝ մեզ էլ կխփի։

Յրվում են և ուրիշ անգամ էլ փորձ չեն անում մոտենալ նրան։

Էդպես էդ փոքրիկ, իրեն պաշտպանող շնիկն օրինակ տվեց, որ Քորօղլին զգա իր ուժը և դառնա քաջ[11]։

ՓՈՐՕՂԼԻՆ ՈՒ ԴԱԳԻՐՄԱՆՋԻՕՂԼԻՆ

Փորօղլին երկրե-երկիր ման է գալիս, որ ուժեղ և քաջ մարդկանց տեղն իմանա, բերի իր մոտ։ Օրերից մի օր էլ գնում է մի հեռավոր գյուղ։ Ճամփի վրա մի ջաղացի է հանդիպում, ներս է մտնում։ Տեսնում է, որ ջաղացպանի որդին՝ Դագիրմանջիօղլին ջաղացի քարը դրեց մի կողմ, էս ու էն կողմ շուռ ու մուռ տվեց, սկսեց սրել։ Քարն էլ՝ ինչ քար, թե որ ասեմ հինուն վուրթ, դու ասա հարյուր վուրթ քաշ ուներ։ Փորօղլին շատ զարմացավ։ Մոտեցավ նրան, բարևեց, բարևն առավ՝ ասաց.

— Ա՛յ երիտասարդ, էդ ինչ ուժի տեր մարդ ես։ Արի ինձ մոտ աշխատիր, թե՛ որ հիմա ամսականդ տասը ոսկի է, քեզ կտամ դրա կրկնապատիկը, եռապատիկը։

Դագիրմանջիօղլին էս խոսքի վրա գլուխը բարձրացրեց, նայեց Փորօղլուն, չնայած կերպարանափոխված, տեղն ու տեղը ճանաչեց նրան, ասաց.

— Եթե դու Փորօղլին չլինեիր, ինչպիսի մարդ էլ գար, ինչ էլ խոստանար, ես էս հորթական ջաղացիցը չէի հեռանա։ Ինձ պետք չեն ոչ ոսկին, ոչ արծաթը, ոչ էլ աշխարհի հարստությունը, ես քեզ հետ կգամ, մենակ եթե դու քեզ արժանի խոսք տաս ինձ։

— Կյանքս քեզ մատաղ, խոսքս էլ՝ քեզ խոսք, որ հուր հավիտյան մխասին կլինենք, դե վեր կաց գնանք, ասաց Փորօղլին։

Դրանից հետո Դագիրմանջօղլին էլ միացավ Փորօղլուն ու նրա քառասուն քաջերին[12]։

ՓՈՐՕՂԼԻՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ

Փորօղլին մի օր պատահում է մի հովվի։ Մի ոչխար է ուզում։ Նա էլ չի տալիս, ասում է.

— Դու ձվ ես, որ քեզ ձրի ոչխար տամ։

Փորօղլին ու հովիվը լեզվակռվի են բռնվում, հետո հաշտում են իրար։ Վերջը հովիվը Փորօղլուն գետին է խփում և նորից ասում է.

— Դու ձվ ես, որ եկել ոչխար ես ուզում, քեզ չափում ես Փորօղլու հետ։ Դե, հիմա տեղդ կաց։

Սա էլ տեսնում է, որ գործը ավելի վատ կարող է գնալ, ասում է հովվին.

— Աստված տունդ ավերի, վալլահ Փորօղլին որ կա՝ ես ինքս եմ։ Դե, բաց թող։

Հովիվը նոր միայն բաց է թողնում, ասում.

— Տնաշեն, առաջուց ինչու չասացիր թե՝ Փորօղլին ես։ Ամեն տեղ անուն ունիս, ոչխար էլ կտայի, քեզ հետ էլ չէի կռվի։

Փորօղլին ներում է հովվին և նրան իր հետ վերցնում, տանում է Զարդաղլի Զամլիրել, դարձնում իր քաջերից մեկը։

Եվ էդպես, Փորօղլին որտեղ էլ քաջ և ուժով մարդ տեսներ՝ տանում էր իր մոտ։ Ամեն անգամ ավելացնում էր իր քաջերի թիվը[13]։

ԲՈՐՕՂԼԻՆ ԱՄՈԹՈՎ ՉԻ ՄՆՈՒՄ

Բորօղլին երբեմն-երբեմն իր ընկերներից մեկին ուղարկում էր հովիվների մոտ ոչխար բերելու։ Հովիվներն էլ Բորօղլուն սիրում էին, նրա անունը լսելիս ուզած մեկ կամ երկու ոչխարի փոխարեն՝ տասն էին տալիս։

Բայց մի անգամ, թե ինչպես է պատահում, Բորօղլին ինքն է գնում ոչխար բերելու։ Մոտենում է հոտին, ասում.

— Հովիվ ախպեր, բարաքաթով լինի։

— Վայ բարով, հազար բարի,—ասում է հովիվը։

— Ես Բորօղլին եմ,—ասում է եկվորը,—մի ոչխար տուր տանեմ ընկերներիս։

— Դու Բորօղլին ես,—զարմացած հարցնում է աժդահա հովիվը,— համեցի, արի էստեղ և հանկարծ նրան բռնում է, ձեռքն ու ոտքը կապում, դնում է մի կողմ։ Հետո ավելացնում է, դու Բորօղլին չես, դու ով, Բորօղլին ով։

Բորօղլին անհարմար վիճակի մեջ է ընկնում։ Ծխրում է. շատ է մտածում ու հետո սոխակած դիմում է մի խորամանկ միջոցի, ասում է.

— Ախպեր հովիվ, ես հանաք արի, ուզեցի քեզ փորձել։ Դու ճիշտ ես, ես Բորօղլին չեմ, արի ինձ ազատ արձակի գնամ տունս։

— Ա՛յ, էդպես,—ասում է հովիվը,—տես, մյուս անգամ չհամարձակվես ասել, թե ես Բորօղլին եմ, դե, հիմա բարի ճանապարհ, քեզ ոչխար տվողը չեմ։

Էդ օրը էդ հովվի մոտ նորից է երևում Բորօղլին, բայց էս անգամ կերպարանափոխված, մոտենալով հոտին, ասում է.

— Հովիվ, Բորօղլին ինձ ուղարկեց քեզ մոտ, ոչխար է ուզում։

— Վայ բարով, հազար բարի,— ասում է հովիվը,— քիչ առաջ էլ մի մարդ եկավ ինձ մոտ, ուզում էր խաբել, ասում էր թե՝ ես Քորօղլին եմ, կարծում էր, թե ես Քորօղլուն չեմ ճանաչում: Բայց ես քո ախպերն եմ, դու դեռ ինձ չես ճանաչում, էնպես ճամփու դրի, որ էլ չհամարձակվի ետ նայել: Ասում էր. «Ես հանաք արի, ուզեցի քեզ վորձել, ես Քորօղլին չեմ»:

— Լավ ես արել,— ասում է եկվորը,— միայն շուտ արա, Քորօղլին հիմա ինձ է սպասում:

— Իմ աչքի վրա,— ասում է հովիվը և ոչխարներից մի քանիսը զատելով, ասում է.— դե, սրանք տար Քորօղլուն նվեր, իմ կողմից էլ բարևիր:

— Աչքիս վրա, ասում է կեղծպատանավոխված Քորօղլին և երբ հեռանում է, ինքն իրեն ասում է. «Աշխարհի բանն է, տեղ կա մարդուն են հարգում, տեղ էլ կա՝ լավ անունը»: Եվ ոչխարները քշում տանում է, իր ընկերների մոտ ամոթով չի մնում[14]:

ՓՈՐՕՂԼՈՒ ՆԻԶԱԿԸ

Պատմում են, Սիակի և Հայդարի ցեղերը մի անգամ մխա-նում հարձակվում են Բագդադի հարուստ Արդուլ Էլ Ղադր աղայի տասնհինգ քարավանի վրա։ Թալանված բեռները լեփ-լեցուն են լինում մետաքսով, ատլաս ու խաստով և այլ թանկար-ժեք իրերով։ Ղազի գյուղի դաշտում քրդերը վերցրած ապրանքը սկսում են բաժանել. չուխան, ատլասն ու խասը, զումաշը նի-զակով են չափում՝ հավասարապես բաժանում իրար վրա։ Էդ ժամանակ մի մարդ է դրանց պատահում, ասում է.

— Այ քրդեր, չուխայից, ատլաս ու խասից մի քիչ ծախեք ինձ։

Քրդերն էլ տալիս են՝ էլի նիզակով են չուխան, ատլաս ու խասը չափում, տալիս դրան։

— Ինչո՞ւ էք մեծ կանգունով չափում,—հարցնում է էդ մարդը։

— Էս կանգունն,—ասում են քրդերը, Փորօղլու կանգունն է։ Սարերում չքավորներին բան տալու ժամանակ վայել չէ ուրիշ փոքրիկ չափերով կտոր տալ։

Փորօղլու նիզակի պատմությունը Քուրդիստանում հայտնի է դարձել[15]։

ՔՈՐՕՂԼԻՆ ՈՒ ՔԱՐԱՎԱՆԱՊԵՏԸ

Քորօղլին մի ժամանակ սարում էր ապրում։ Օրերից մի օր հեռադիտակով նայելիս տեսնում է, որ մի քարավան է գալիս։ Քարավանապետն էլ նայում, տեսնում է, որ սարի վրա մարդիկ կան։ Ծեղն ու տեղը քարավանի գլուխը շուռ է տալիս, ուզում է ետ դառնալ։

Քորօղլին հասկանում է նրա մտադրությունը։ Էն ժամանակ նա սարի վրայից իր յափունջին գցում է ներքև, եռևից էլ՝ մի շերեփ մածուն։ Ասում է. «Յափունջին արծվի տեղ կդնի, կասի՝ արծիվ էր, թռավ, էդ էլ դրա ծերան էր»։

Քարավանապետն էդպես էլ կարծում է, ասում է. «Արծիվ էր, թռավ, էդ էլ նրա ծերան էր» ու քարավանը նորից շուռ է տալիս և շարունակում իր ճամփան։ Երբ քարավանը նորից մոտենում է էդ սարին, Քորօղլին գալիս կտրում է քարավանի առաջը։ Ամբողջ հարստությունը խլում է քարավանապետից։ Նիզակը դարձնում է կանգուն, սկսում է դրանով կտորը չափել և հավասարապես բաժանել իր ընկերներին և աղքատ ճամփորդներին[16]։

ՀՐԱՑԱՆ

Քորօղլին օրերից մի օր պատահում է մի հովվի.

— Բարաքաթով լինի, այ հովիվ,— ասում է նա։

— Բարևդ այ՛քիս, գլխիս վրա,— պատասխանում է հովիվը։

Հովվի ուսին հրացան է լինում։

— Էդ ի՞նչ է ուսիդ, այ հովիվ,— հարցնում է Քորօղլին։

— Հրացան է, տեսած չկա՞ս,— ասում է հովիվը։

— Մարդ սպանո՞ւմ է,— հարցնում է Քորօղլին։

— Ի՞նչպես չէ։

— Փող կտամ, ուլի ոտները կապիր, նշան դիր, կրակիր՝ տեսնենք կսպանի՞։

Հովիվը կապում է ուլի ոտները, չոքում է ու հեռվից կրակում։ Ուլիկը մկկում է ու անշնչանում։

— Տունս ավերվեց,— ասում է Քորօղլին,— հրացանը դուրս եկավ, իգիթի դովրանը (ժամանակը) փոխվեց։ Շահն ու փադիշահը (թագավոր) խալխին էլ իսկի դադար չեն տա, հեռուն ու մոտիկ չեն ջոկի։

Էս ասելով Քորօղլին թողնում հեռանում է[17]...

ԲՈՐՕՂԼՈՒ ՎԵՐՋԸ

Քաջ և բարի մարդ էր Բորօղլին, իր ընկերների հետ նա աշխարհե-աշխարհ ման էր գալիս, որ չքավորը մարդկանց բարեբուխտյուն անի։ Մի անգամ էլ իր քաջերի հետ բարձրանում է մի բարձր սարի վրա։ Մեկ էլ ոչխարի մի մեծ հոտ է տեսնում։ Ընկերներին ասում է.

— Դուք էստեղ սպասեցեք, ես գնամ էն հովվի մոտ, մի ոչխար ուզեմ, բերեմ մորթենք, ուտենք։

Ու գնում է։ Հասնում է հոտին, ասում է.

— Ա՛յ հովիվ, մի ոչխար տուր, տանեմ մորթենք ուտենք։

— Ինչո՞ւ, դու ո՞վ ես, որ ոչխար տամ քեզ,—հարցնում է հովիվը և էլ պատասխանին չսպասելով հասնում է նրան, կըռվում և ճամփու է դնում, ասելով.

— Դե, հիմա գնա, քեզ ոչխար տվողը չեմ։

Բորօղլին ձեն ու ծպտուն չի հանում. «Տունս քանդվեց, ասում է ինքն իրեն, իմ ընկերների մոտ սևերես կլինեմ»։ Իսպես մտածելով նորից վերադառնում է իրեն հետ կռվող հովվի մոտ։

—Տղա՛, հովիվ,—ասում է նա,—չթողեցիր խոսքս վերջացնեմ, ոչխարը ես չեմ ուզում, հրեն սարի վրա կանգնած Բորօղլին է ուզում, նա է ինձ ուղարկել։

— Ա՛յ, էդ ուրիշ բան է,—ասում է հովիվը,—հիմա գալդ աչքիս ու գլխիս վրա, ու վեր է կենում մի լավ ոչխար ջոկում և տալիս է նրան, որ տանի։ Հենց էդ ժամանակ Բորօղլին տեսնում է հովվի հրացանը.

